










АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЯНО-ИТАЛЬЯНСКИЕ С В Я З И

ГЕНУЭЗСКИЕ ДОКУМЕНТЫ
О КРЫМСКИХ АРМЯНАХ

Составитель, автор предисловия и комментариев
В. А. МИКАЕЛЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

9/47.925)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ,
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ
ԱՌՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՋԵՆՈՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՂՐԻՄՈՂԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

A
II
53177

Հագմեց, տառադրանք գրեց և ծանոթագրեց
Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1974



Ժողովածուն ընդգրկում է Ջենովայի հանրապետության և Ղրիմի նրա վարչության փաստաթղթերը (XIII—XV դդ.): Այդ փաստաթղթերի մի մասը հանրապետական կառավարության և Սբ. Գևորգ բանկի ընդունած օրենքներն ու կարգադրություններն են, իսկ մյուս մասը՝ պաշտոնական նամակներ, նոտարական գրասենյակի ակտեր և այլն: Փաստաթղթերում արտացոլված են դրիմահաշոց հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի տարբեր կողմերը XIII—XV դարերում:

Ա Ռ Ա Ջ Ա Ռ Ա Ն

Ժողովուրդներ կան, որոնք, հիրավի, «գուգահեռ» պատմություն ունեն՝ երկրի ներսում և երկրից դուրս: Հայոց գաղ-
թաշխարհն ու մեր «գուգահեռ» պատմությունը (գաղութահայ)
յուրօրինակ քնքացք ու բովանդակություն ունեն: Նդան գաղթ-
օջախներ, որոնք մի իսկական հայ աշխարհիկներ էին՝ իրենց
մշակույթով, հոգևոր կյանքով, սովորույթներով, նիստ ու
կացով: Գրանցից շատերը դիմացան ժամանակի դժնդակ
օրերին և հարատևեցին դարեր:

Միջնադարի դրամահայ գաղութը իսկապես հայկական մի
աշխարհ էր՝ թե բնակչության փանակով և թե տնտեսական
ու հասարակական-մշակութային կյանքի ընդգրկումներով:
Բուն Հայաստանից և Կիլիկիայից հետո Ղրիմը միջնադարում
հայության քերես ամենախոշոր կենտրոնն էր: Միջնադարում
քերակողու վրա հաստատված բազմազան ժողովուրդներից
մշակույթի հուշարձաններ ամենից շատ մեզ քողել են հայնե-
րը և ապա՝ հայերը:

Ղրիմը հայերին ծանոթ էր հնագույն ժամանակներից:
Բայց նշանակալից փանակությամբ հայ բնակչություն Ղրիմ է
քափանցում և այնտեղ հաստատվում միայն սկսած XII—XIII
դարերից*: Դա անմիջականորեն առնչվում էր հայերի՝ իրենց

* Վ. Ա. Միխայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Նրևան,
1964, էջ 38—69:

երկրից դեպի այլ վայրեր կատարած զանգվածային տեղաշարժերի հետ, որոնք լայն ընթացք էին ստացել Բյուզանդիայի կողմից Հայաստանում վարած ավերիչ ու անհեռատես ֆառափականության և ապա՝ սելջուկ-թուրքերի սահմակեցուցիչ արշավանքների հետևանքով:

Ղրիմի հարավ-արևելյան ծովափին հաստատված հայ բնակչությունը XIII դարում արդեն տնտեսապես այնքան էր ամրապնդվել, որ չենովացիներին հավասար առևտրական գործունեություն էր ծավալել: Հայերը իտալացիների հետ միասին սևծովյան ավազանի ամենահայտնի առևտրականներն էին և առևտրական գործարհներ կնքելիս հանդես էին գալիս նույնիսկ վարկատուների դերում (փաստաթուղթ 1—5): Զենովական տիրապետության շրջանում (XIII—XV դդ.) Ղրիմում հայերի բազմաթիվ լինելն ու նրանց տնտեսական գորեղությունն էր, անշուշտ, առիթ տվել օտար հեղինակներին քերականորեն հարավ-արևելյան մասը կոչել «Ծովային Հայաստան» (Armenia Maritima): Հռոմի պապ Եվգենիոս IV-ի կոնդակում այն անվանված է նաև «Մեծ Հայաստան»*: Այս իրողությունը ստիպել է Զենովական հանրապետությանը Խազարիայի կոմիտեի (Ղրիմի գրասենյակի) 1316 թ. կանոնադրության մեջ հայերին արտոնություններ առանձնաշնորհող հոդվածներ մտցնել (փաստաթուղթ 8):

Այդ կանոնադրությունը Զենովայի հանրապետության Ղրիմի ամենաբարձր պաշտոնյային՝ Կաֆայի հյուպատոսին, նույնիսկ խստիվ արգելում էր «միջամտելու հայերի գործերին և տնօրինելու այն հողերը, որոնց վրա հնուց ի վեր տեղավորված են հույների, հայերի և ռուսների եկեղեցիները և այդ եկեղեցիների վանքերը»**:

XIV դարի 30-ական րվականներին դրիմահայության նշանում տեղի են ունենում լուրջ տեղաշարժեր: Ղրիմ են գալիս հայ գաղթականական նոր հոսանքներ, քվով ավելի մեծ,

* П. Кеннен, Крымский сборник, СІІ6., 1837. էջ 135:

** Հավանաբար, պետք է լինի «վանքերը և այդ վանքերի եկեղեցիները»:

բան երբեք: Սրանք քերակողի են: քափանցում արդեն Ռսկէ-
Հորդայից, Վոլգայի ափերից, ուր նրանց հշել-տարել էր քա-
րար-մոնղոլական լուծը: Նրանց գալով հայերի քիվը Ղրիմում
զգալապես ավելանում է*: 1455 թ. Կաֆայի հյուսաւատուն ու
նրա օգնականները, Ջենովայի հանրապետությանը ծանուցե-
լով ղրիմահայերի հետ վարվելիք գգուշալուր ու փաղափշական
հաղափականության անհրաժեշտության մասին, փաստում
էին. «Դուք գիտեք, որ այս երկիրը զլիսավորապես բնակեցված
է հայերով, որոնք մեր նանաշված հեներանն են և լավագույն-
վանառականները և հաղափին (Կաֆային — Վ. Մ.) մեծ եկա-
մուտ են բերում» (փաստաթուղթ 48):

Այս շրջանում, և առհասարակ միջին դարերում. Ղրիմը
այն կամուրջն էր հաւ. որի վրայով հայ զաղրականական հո-
սանքները գալիս և անցնում էին Արևմուտք, ծնունդ տալով
հայկական նորանոր զաղրօջախների Մուղափայում, Լեհաս-
տանում և այլուր:

Սկսած XII—XIII դարերից մինչև XVIII դարի 70-ական.
րվականները հայ բնակչությունը հշանակալից քանակությամբ
տեղաբաշխված էր քերակողու հետեյալ վայրերում՝ Կաֆայում
(Թեոդոսիայում), Սուրխարում (Հին Ղրիմում), Սուդակում,
Կեռլեում (Եվպատորիայում), Ղարսաւորազարում (Ընդգոր-
սկում), Ամենշիրում (Սիմֆերոպոլում), Ջեմբալոյում (Բա-
լակլավայում), Բախչիսարայում, զուտ հայկական հաղափներ
Կազարաբում և Արմյանսկի Բազարում. ինչպես հաւ մի շարք
հայկական գյուղերում: Ջենովայի հանրապետության պաշ-
տոնական տվյալներով, XV դարի 70-ական րվականներին
Կաֆայի (որտեղ, իմիջիայլոց, գործում էին երեք տասնյակից
ավելի հայկական եկեղեցիներ) հայերը կազմում էին բնակ-
չության 2/3-ը. քուրական աղբյուրների համաձայն, հաղափի 70-
հազար բնակչից 46 հազարը հայեր էին** (փաստաթուղթ 74):

* Հայկական ՍՍՀ Մատենադարան, Հեռագիր N 7442, Թ. 281—282,
Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 69—82:

** *Marian Mal'owist*, Kaiffa w drugiej polowie XV-ego wieku,
Warszawa, 1939, էջ 40:

Թաքաբներից հետո բնակչության Դանակով հայերը Ղրիմում. հավանաբար, բռնում էին երկրորդ տեղը: Եվ այդպես էր ոչ միայն XV դարում, այլ նաև հետագայում. ընդհուպ մինչև 1778 թվականը*:

Տավրիկայում միջնադարյան հայ գաղթօջախները գրեթե միշտ կախյալ հաբաբերությունների մեջ էին քաքարական գերիշխանությունից, սրան գուրբեքաց, իրենց մի հատվածով նաև՝ շենովական վարչությունից և ապա, 1475 թ. սկսած՝ քուրֆ-քաքարական համատեղ բռնափրությունից, քեև իրենց ներքին կյանքը կարգավորելիս ղեկավարվում էին ազգային սովորություններով և օրենքներով, օգտվելով որոշակի ինֆրավարությունից:

Մինչև 1475 թ. հայերը Ղրիմում ունեին իրենց զինված ուժերը: Հայկական Կազարաք բերդապան ավանը շենովական Կաֆան պաշտպանում էր քաքարական հարձակումներից: Կաֆայի հյուպատոսը Մուղալենց հայ իշխանին նշանակել էր Կազարաքի կուսակալ: Հայերը զինված ուժեր էին պահում նաև բուն Կաֆայում:

1475 թ. աղետաբեր էր նաև Ղրիմի հայկական գաղութի համար: Թուրքական նավատորմը ծովից և նրա դաշնակից քաքաբները՝ ցամաքից ափցանի մեջ են առնում հուշակավոր Կաֆան: Ջենովացիները, որոնք վարչապես կառավարում էին Դադաբը, իրենց նվազ ուժերով ոչինչ էին հրետանիով զինված ահարկու քջնամու համեմատությամբ: Քաղաքի պաշտպանները հայերն էին և հույները՝ հայ հրամանատարի գլխավորությամբ: Հակառակ վերջիններիս հնգօրյա համառ դիմադրությանը, կովի ելքը որոշվում է հօգուտ քուրֆերի և քաքաբների, որոնք տիրանալով անձնատուր եղած Դադաբին՝ ինչպես միշտ, դրժում են իրենց խաբը և կողոպտում ու կոտորում տեղի բնակչությանը: Մեծ թվով զրիմահայերի քուրֆերը տեղավորվեցին Կ. Պոլիս (փաստաթուղթ 75)**:

* *Тунманн*, Крымское ханство, Симферополь, 1930, էջ 30:

** Կաֆայի անկման կապակցությամբ տե՛ս նաև Մատենադարան, *ձեռագիր* № 7442, Թ. 281—282, վ. Մխիթարյան, *Եղվ. աշխ.*, էջ 255—276:

Այս իրադարձութիւններից դրիմահայ գաղթօջախները, քեւ մեծապէս տուժեցին, սակայն չվերացան. նրանք շարունակեցին հարատեւել և համալրվել: 1475 թ. քոհութիւնին հաջորդած շրջանում էլ դրիմահայերը շարունակում էին առաջատար դիրքեր բռնել քերակղզու կյանքում: Նրանց քիվը Ղրիմում ստվարանում է, մանավանդ, XVII դարի սկզբներին՝ կապված Հայաստանում ծայր առած ծանր ու տևական սովի և չալալիների շարժման հետ*:

Ղրիմահայերը քերակղզու բնակչության արդյունագործող, և մշակութային առումով հույժ ուշագրավ հատվածներից էին: Ղրիմահայերի կյանքում կարևոր նշանակություն էին ստացել առևտուր, արհեստներն ու գյուղատնտեսական գրադմուհները:

Հանրահայտ է, որ Ղրիմի ծովափնյա բաղաձայնները նշանակալից դեր էին խաղում միջնադարյան առևտրում, Արևելքի ու Արևմուտքի առևտրական առնչություններում: Ղրիմի առևտրի մեջ մինչև 1475 թ. առաջատար դեր էին խաղում ջենովացի և հայ առևտրականները, իսկ XV—XVIII դարերին՝ հայ և ռուս վաճառականները: Չնայած իրենց առևտրական գաղթակետերին, ջենովացիներն իրենց սակավաքվության պատճառով ստիպված էին Ղրիմում մեծ տեղ հատկացնել և լայն հնարավորութիւն բնօնուհեւել հայ առևտրական դասին: Նրանք հաշվի էին առնում հայ առևտրականների-վաճառականների՝ Արևելքի ժողովուրդների հետ ունեցած կապերն ու երկարամյա փորձը, ինչպէս և բուն Ղրիմում նրանց տնտեսական գորեղությունն ու շփումները քաքարների հետ: Ահա քե ինչու XV դարում հայերն իրենց ձեռնում էին պահում Ղրիմի առևտրա-տնտեսական առաջնությունը: Նրանց մեջ կային մասնավոր խոշոր բանկիրներ:

Նշանակալից էր հայերի մասնակցությունը արտաքին ու

* Մատենադարան, ձեռագիր. № 282, Նան՝ Դրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Նրուսաղեմ, 1915, էջ 51, Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 88, 147—148, Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1902, էջ 608:

տառանցիկ առևտրի մեջ. Կ. Պոլսի. Մերձավոր Արևելքի. Կովկասի ու Պարսկաստանի հետ ունեցած առևտրական կապերում: XVI—XVIII դդ., բնօրինակ մինչև Ղրիմի միացումը Ռուսաստանին, ղրիմահայ առևտրականները առևտրական ծավալուն գործարհներ էին իրականացնում Մոսկվայում և առհասարակ ռուսական պետության սահմաններում:

Հայերը Ղրիմում նաև աշխատում և առևտրում էին, որոնք միավորված էին համագործակցություններում: Առհեստավարների մի մասը հանդես էր գալիս նաև առևտրականների դերում, որ անպայման խոստում է առևտրի և առհեստների միահյուսման մասին: Հայերն անվանի որմնադիրներ էին, ներկարարներ, նավաշինարարներ, ջուլհակներ, ոսկերիչներ, դարբիններ, կոշակաբարներ, հյուսներ, գեղարվեստական առհեստագործներ և այլն: Հայ բնակչության մի զգալի հատվածն էլ, որ միջնադարում ապրում էր Կաֆայի և Ղարսափազարի միջև, զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Նրա առաջատար նյութերից էր ալգեգործությունը, կարևոր նշանակություն էր արդյունքում նաև անասնապահությանն ու դաշտավարությանը:

Ղրիմի հայկական գաղութին բնորոշ էին ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերություններով պայմանավորված սոցիալական բոլոր խմբավորումները: Սոցիալական սանդղաղի վերնամասում գտնվող իշխանների, պարոնների, էմիրների, վաշխառուների, հարուստ վանառականների և ունեացած առևտրականների ու հոգևոր դասի կողքին իր գոյությունն էր մի կերպ ապահովում հայ բնակչության հոծ մեծամասնությունը, հանձինս նրա աղքատ դասի (գյուղացիներ, բաղափային բանվորներ, սնանկացած առհեստավորներ և այլն): Վերջիններս ենթակա էին ինչպես սեփական, այնպես էլ քուրհ-քաքարական և շենովական տիրոջների մշտական չեղեփմանը, շահագործմանը: Նրանց վրա էին ծանրացած բազմադիսի հարկերն ու տուրքերը:

* * *

Հայ մշակույթի մեջ իրենց արժանի լուսման ունեն ղրիմահայերը: Ղրիմահայ մշակույթը ազգային ավանդությունների

զարգացման մի զարկերակ է, իհարկէ, օտարության մեջ անհրաժեշտաբար կրած փոփոխություններով ու փոխադրեցություններով հանդերձ: Հանրահայտ է, որ որևէ ազգի մշակույթի պահպանման ու զարգացման հիմնական հենարաններից մեկը դպրոցն է: Դա առավել ևս վերաբերում է հայ գաղութներին: Արիմահայ գաղթօջախներում գործել են դպրացներ ու կրթարաններ, որտեղ կրոնի հետ միասին ուսուցանվել են նաև բերականություն, քվարանություն, գրչության արվեստ, նկարչություն և անգամ՝ փիլիսոփայություն:

Արիմում էին գտնվում միջնադարի հայ գրչության մի քանի լավագույն օջախներ և հատկապես՝ Կաֆան ու Սուրխարը: Թուրք-քարաբաղական ավերածություններից և ահ ու կրակից փրկվել և մեզ է հասել Արիմի հայկական ձեռագրերի մի հարուստ ժողովածու: Մրանց մի մասը ընդօրինակել և կազմել են հոշակավոր գրիչներ Գրիգոր Սուֆասանցը, Նատերեն ու հրա տաղանդավոր գերդաստանի մի շարք անդամներ, ինչպես նաև Օֆսեմար, Նիկողայոս Մելանավորը, Գրիգոր Երեցը և շատ ուրիշներ:

Մի առանձին դպրոց է դրիմահայ մանրանկարչությունը, որի վրա որոշակի ազդեցություն են գործել Կիլիկիայի մանրանկարիչները: Միջնադարյան հայ բանաստեղծության մեջ գեղեցիկ փունջ են կազմում դրիմահայ տաղասացներ Սիմեոնի, Խասպեկի, Վարդանի, Վերանեսի, Մարտիրոսի և այլոց գողտրիկ տաղերը, որոնք մեծապես սիրո, բնության, պանդխտության և հայրենիքի երգեր են:

Հարչուրամյակներ շարունակ հայերը քերակդգու վրա ունեցել են շինարարական արգասավոր գործունեություն, կերտել շատ ու շատ կոթողներ, որոնց նախադասությունը՝ դրացի փոխադրեցություններով հանդերձ, շարունակել ու զարգացրել է հայրենի լավագույն ավանդները: Արիմահայ վարպետի մտնով ու բազկով բարձրացված կոթողներից շատերը ժամանակի ընթացքում դարձան բնության և մարդու դամբն վատաստանի զոհը: Սակայն մեզ հասածն էլ միանգամայն բավական է, որպեսզի արժանին հատուցենք մեծ

ժողովրդի այդ հատվածի կերտողական հիաստանշ ժառանգությանը: Հռչակավոր Սուրբ Խաչ վանքը Հին Ղրիմում (1358), Միֆայել և Գաբրիել հրեշտակապետների (1408), Հովհաննես Մկրտչի (1348) և Սուրբ Գևորգի (XV դ.) եկեղեցիները՝ Թեոդոսիայում, նախկին հայկական Բախչելի (այժմ՝ Բոգատոյե) գյուղի սբ. Փրկիչ վանքը (XIV—XV դդ.) և այլ կառույցներ, որ ցարդ մնացել են կանգուն, միջնադարյան հայ նարտարապետության լավագույն գործերից են և ուշադրության են արժանի բազմաթիվ կողմերով: Պաշտպանական հետաքրքիր կառույց էր Թեոդոսիայի հայկական պարիսպը՝ Հայոց բերդը (XIV—XV դդ.), որ ֆաղափ հայ համայնքը բարձրացրել էր իր միջոցներով՝ դիմակայելու ծովից ու ցամաքից անընդմեջ կրկնվող բուրբ-քաքարական ռանձգություններին:

Հայ շինարարական արվեստի բարձր մակարդակն են հավաստում այն երկու ջրմուղները, որ XIV—XV դարերում հայերն անցկացրել էին Թեոդոսիայում և նրանից ոչ շատ հեռու գտնվող Երկխարխալյան ծովախորշում: Հայ շինարարները ամենից առաջ լուծել էին ջրի պաշարների հայտնաբերման և կուտակման խնդիրը, պաշարներ, որոնք բերակղզու այս մասում խիստ աղբափակ են: Զրմուղի անհրաժեշտությունն այնքան կենսական էր, որ 1316 թ. կանոնադրությունը հայ եպիսկոպոսի՝ Կաֆայում անցկացրած ջրմուղի ուղղությունը խախտողներին սպառնում էր պատժել բարձր տուգանքներով:

Համառոտակի և խիստ ընդհանուր ուրվագծով այսպիսին էր դրիմահայ գաղթօջախների կյանքը միջնադարում. երբ վրա հասավ 1768—1774 թթ. ռուս-բուրսական պատերազմը: Պատերազմին հաջորդած տարիներին Եկատերինա II-ի կառավարությունը, օգտագործելով բերակղզու վրա ռուսական զորքերի ներկայությունը, փրստոնյա ազգաբնակչությանը՝ հայերին ու հույներին, դուրս բերեց Ղրիմից: Արտագաղթեցման նպատակն էր Ղրիմը դատարկելով նրա արդյունագործող և հարկատու փրստոնյա բնակիչներից՝ հայերից ու հույներից, քաքար խանին դնել ֆինանսա-տնտեսական, ուրեմն և ֆաղափական կախվածության մեջ ռուսական արհունիքից: Միածա-

մանակ դա նպաստելու էր Ռուսաստանի հարավի բնակեցման և զարգացման խնդրին: Դուրս բերված հայերը հաստատվեցին Ազովի նահանգում և հիմնադրեցին Նոր Նախիջևանի հայ գաղութը:

Թվում էր, թե նշված արտագաղթեցմամբ բազմադարյան գրիմահայ գաղութն այլևս առմիշտ անհետանալու էր պատմական ասպարեզից: Սակայն դեպքերն այլ ընթացք ստացան: Շուտով, XVIII—XIX դարերի սահմանագծերում, Նոր Նախիջևանից, Արևմտյան Հայաստանից, քուրդական շրջաններից և այլ վայրերից հայերի՝ դեպի Ղրիմ կատարած տեղափոխումները վերստին շունչ ու կյանք են հաղորդում հանգչած գաղութին, որը նոր ժամանակներում, Ռուսաստանում ստացած արտոնությունների պայմաններում, ունեցավ իր ուրույն և հետաքրքիր պատմությունը՝ սոցիալական ցցուն բաժանվածությամբ հանդերձ:

Քայլ առ քայլ գորանալով՝ դրիմահայ գաղթօջախները առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արդեն ունեին շուրջ 15 հազար բնակիչ: Տնտեսապես նրանք այնքան էին հզորացել, որ մի քանի տասնյակ դրիմահայեր դարձել էին խոշոր հողատերեր, գործարանատերեր, իսկ դրիմահայ առևտրական կապիտալին բաժին էր բնկնում տավրիկյան առևտրի նկատելի մասը:

Զարգացման կապիտալիստական հարաբերությունների առկայությունը որոշակի ազդեցություն էր բողոքում դրիմահայոց հոգևոր մշակույթի վրա: Եվ պատահական չէ, որ XIX—XX դարերում նրանց միջից դուրս եկան այնպիսի արվեստագետներ, որոնց ստեղծագործությունները արժանացան համընդհանուր նանաշման: Նրանց շարքում, անշուշտ, առաջինը պետք է հիշել հուշակավոր նկարիչ Հովհաննես Այվազովսկուն, նրա տաղանդավոր աշակերտ Էմանուել Մահտեսյանին, հայ առաջին կոմպոզիտորներից մեկին՝ Անդրեաս Քաղցաձյանին, հայ դասական երաժշտության կարկառուն ներկայացուցիչ Ալեքսանդր Սպենդիարյանին, Քրիստավոր Կարա-Մուրզային և այլոց:

Այս անուններով ամենևին չի սպառվում հայ մշակույթի զարգացմանը դրիմահայոց ունեցած մասնակցությունը նոր ժամանակներում: Իրենց դպրոցներով, հրատարակություններով, հասարակական-հաղափարական կյանքով, մշակույթի գործիչներով դրիմահայերը արձագանքում էին ժամանակի մեր ազգային մտահոգությունների բոլոր հիմնական ելևէջներին, աշխատում ուժերի ներածին չափ օգտակար դառնալ դուսնց լուծմանը:

...

Ղրիմահայ գաղթականության միջնադարյան շրջանի պատմությունը բազմակողմանի արտացոլում է գտել ժամանակի ջննդական փաստաթղթերում: Խնդիրն այն է, որ սկսած XIII դարի 60-ական րվականներից ընդհուպ մինչև 1475 թ., ավելի քան 200 տարի, Ղրիմի քերականագիտական-արևելյան ծովափը, սևծովյան մյուս մասերի մի շարք կարևոր նավահանգիստների հետ միասին, հանդիսանում էր Ձենովայի հանրապետության, իսկ 1453—1475 թթ.՝ Ձենովայի Սուրբ Գևորգ բանկի առևտրական գաղութը: Սինոպն ու Տրապիզոնը փոխհասկանալի ավիում, Սևաստոպոլը՝ Կովկասում, Լա-Կոստան՝ Կուրան գետի վրա, Տանան՝ Ազովի ծովափին, Կաֆան, Չեմբալոն և Սոլդայան՝ Ղրիմում ջննդական առևտրի լավագույն հենակետերն էին և XIII—XV դդ. շունչ ու եռանդ էին հաղորդում այդ առևտրի ծավալումներին: Սևծովյան կենտրոնների նշանակությունը այս շրջանում բարձրացել էր ոչ միայն հումքի տեղական աղբյուրների առնչությամբ, այլ հատկապես նաև այն պատճառով, որ առաջացած հաղափարական ազդու վիճակի քելադրանքով Միջերկրականի արևելյան շրջանները և առհասարակ Մերձավոր Արևելիի երկրները գրեթե զրկվել էին Արևելիի և Արևմուտքի միջև կատարվող առևտրի անվտանգ օդակը լինելու իրենց երբեմնի կարևոր վիճակից: Այնինչ առևտուրն Արևմուտքում գորեղ կերպով շարունակում էր զգալ Արևելիի հետ կապեր ունենալու պահանջը: Այդ էլ ստիպել էր նրան այս անգամ իր հայացքը շրջել դեպի

Սև և Ագովի ծովերը, ուսկից վանառականն անմիջապես ընկնում էր մանդոլական տիրապետության շրջանները, որոնք նրա համար համեմատաբար ապահով էին:

Այս հավանագիստների մեջ իր տնտեսական ու Բաղա-
ճական նշանակությամբ Կաֆան առանձնահատուկ դիրք էր
գրավում: Այն սևծովյան ջնկովական գաղթակետերի կենտրոնն
էր՝ բառի քե՛ վառչական և քե՛ առևտրա-տնտեսական առու-
մով:

Կաֆայում հստած իր գաղութային իշխանություններին
հանրապետությունը զինել էր անհրաժեշտ կանոնադրություն-
ներով, օրենքներով ու հրահանգներով՝ կառավարելու և հնա-
զանդության մեջ պահելու համար տեղի ժողովուրդներին՝
հոգուտ և ի փառս արդեն առևտրական կապիտալի շրջա-
պտույտը մխրեցնելով «հայրենի» վանառականության: Եվ որով-
հետև XIII—XV դդ. ջնկովացիներին ենթակա Ղրիմի հարավ-
արևելյան ծովափի և մանավանդ Կաֆայի Բրիտոնյա բնակ-
չության զգալի մասը հայերն էին, բնականաբար, նրանց
կյանքի շատ ու շատ կողմեր արտացոլվել են ժամանակի ջն-
կովական փաստաթղթերում, ի քիվս դրանց օրենքի ուժ ստա-
ցած այնպիսի կանոններում, ինչպիսիք են 1290 և 1316 թթ.
Կաֆա Բաղաֆի կանոնադրությունները և հատկապես 1449 թ.
«Սևծովյան գաղութների կանոնադրությունը»: Այս վերջինը
կանոնների մի ընդարձակ ժողովածու է և հսկայական նյութ
է հաղորդում նաև հայերի՝ իբրև Կաֆայի բնակիչների, սո-
ցիալ-տնտեսական և իրավական վիճակի մասին:

Թե՛ 1449 թ. կանոնադրությունը և քե՛ մյուս փաստաթղթ-
երը, օրենքներն ու պաշտոնական գրագրությունները, որոնք
ուղղված են կամ վերաբերում են Կաֆայում ապրող մարդկանց,
վերջիններիս ներկայացնում են «ջնկովացիներ» (cives) և
«կաֆացիներ» (burgenses) անվամբ: «Կաֆացիները» դրանք
հայերն էին, հույները, ռուսները, նաև հրեաներ ու կարաիմ-
ներ: «Կաֆացիները» մեջ քերես կարող էին մտնել նաև
տեղայնացած ջնկովացիները, որոնց քիվր հատուկենա էր,
Բանի որ ջնկովացիները, իբրև կանոն, չէին դառնում տեղի

հիմնական բնակիչ, և Ղրիմը նրանց համար զուտ շահավետ առևտրի մի զարկերակ էր, առևտուր, որն ավարտելուց հետո նրանք շվում էին դեպի հայրենիք: Եվ, առհասարակ, ջենովացիներին բիվը նրանց սկստվյալն գաղթավայրերում խիստ աննշան էր: Նույնիսկ Կաֆայում, ջենովացիների այդ գլխավոր ֆակտորիայում, նրանց բիվը 1470-ական թվականներին 1000 հոգի էր բնդամենը՝ ի դիմաց մի բանի տասնյակ հազար հայտնության, որ արդեն նշել ենք:

Կանոնադրություններում և որոշումներում Ղրիմում ապրող իտալացիներն առանձնացված են իբրև ջենովական առանձին մի համայնք՝ օժտված որոշակի օրհանուրյուններով ու առավելություններով. օրենքը ջենովացիներին տարբերում էր տեղական մյուս ժողովուրդներից, պատմելում իրավական պարիսպով: Այն որոշակիորեն սահմանել էր, թե ով կարող է համարվել ջենովացի: «Կաֆայի հյուպատոսը, — ասված է կանոններից մեկում, — չի կարող որևէ մեկին որևէ գրություն կամ քուղք տալ կամ գրավոր հավաստել այն մասին, որ նա հանդիսանում կամ համարվում է ջենովացի, եթե նախապես վստահության արժանի երկու կամ երեք վկաների կողմից չի հաստատվել, որ նա ծնվել է Ջենովայի ծովափին կամ մարզում, կամ թե նրա հայրը եղել է ջենովացի: Այդ մարդը այնուհետև համարվում է ջենովացի» (փաստաքուղք 9):

Քանի որ փաստաքղբերում Կաֆայի հայ բնակչությունը ըստ մեծի մասին հանդես է գալիս նաև ֆաղաֆացիներ, տեղացիներ և ամենից հաճախ նաև կաֆացիներ բնդհանուր անուններով, ապա տեղին ու անհրաժեշտ ենք համարել ժողովածուում ընդգրկել նաև *կաֆացիներին* վերաբերող մի շարք կարևոր փաստաքղբեր, որոնք ուշագրավ տեղեկություններ են տալիս նրանց նշանակալից մասի՝ կաֆահայերի իրավա-ֆաղաֆական և տնտեսական դրության վերաբերյալ:

Կանոնադրություններին ու օրենքներին զուգընթաց դրամահայության կյանքի զանազան կողմեր լայն տեղ են զտել նաև Կաֆայի հյուպատոսության և Ջենովայի կառավարող

շրջանների միջև վարված պաշտոնական գրագրություններում, կաֆայի շենովացի պաշտոնյաների հաղորդումներում, կաֆահայերի դիմումներում ու նամակներում և այլն: Հույժ կա-
րևոր նյութ են պարունակում նաև հոտարական փաստաթղթե-
րը, որոնք վերաբերում են XIII դարի վերջին ֆառադին և գա-
ղափար են տալիս նաև դրիմահայերի առևտրա-տնտեսական
գործունեության, սոցիալական հարաբերությունների, առև-
տուրը կանոնավորող նորմերի և կյանքի այլևայլ կողմերի
մասին:

Ներկայացվող փաստաթղթերը բեմատիկ առումով բավա-
կան բազմապիսի են: Այստմանդերձ, ի մի բերելով, կարելի է
առանձնացնել XIII—XV դարերի դրիմահայ և հատկապես
կաֆահայ կյանքի մի շարք կարևոր բնագավառներ, որոնց
մասին առավել կամ նվազ պատկերացում են տալիս բեր-
ված նյութերը: Հիմնականում այդ բնագավառներն են.

ա. հայերի տնտեսական վիճակը.

բ. դրիմահայերի դերն ու մասնակցությունը միջնադար-
յան առևտրին.

գ. կաֆահայ վաշխատուական և վանառական կա-
պիտալը.

դ. հայերի շինարարական գործունեությունը.

ե. սոցիալական հարաբերությունները և իրավական վի-
ճակը կաֆահայ գաղութում.

զ. ազգային հարաբերությունները.

է. սոցիալական, կրոնական և ազգային հակամարտու-
թյունները.


բ. հայ բնակչության բանակը.

ր. կաֆայի անկումը և դրիմահայերը:

Ժողովածուն ուշագրավ նյութեր է ամփոփում այս խնդիր-
ների և սրանց առնչվող շատ ու շատ հարցերի մասին:

...

Ժողովածուի նյութերն ընտրված և վերցված են անցյալ
դարում հրատարակված և այժմ մատենագիտական հազվա-



գյուտություն դարձած իտալական ժողովածուներից, իսկ մի ֆանիսն էլ նախասովետական շրջանի ուսական ու հայկական այն հրատարակություններից, որոնցում քաղգմամբար տեղ են գտել դրիմահայերին վերաբերող լատինական փաստաթղթեր:

Փաստաթղթերը ներկայացվում են հինգ բաժիններով՝ ըստ հետևյալ աղբյուրների.

I. Նոտարական ակտեր (XIII դ.): Սրանք Կաֆայում կազմված այն ակտերն են, որոնք վերաբերում են տեղի նոտարական գրասենյակում հայերի կնիք գործարկներին: Դրանք 1927 թ. հրատարակել է ռումինացի գիտնական Գ. Յ. Բրասիանուն *„Actes des notaires Génois de Péra et de Caffa de la fin du treizie'me sie'cle (1281—1290)“*, Bucarest, 1927 (այսուհետև տե՛ս *„Actes des notaires“*) վերնագրով:

II. Կազարիայի (Ղրիմի) գրասենյակի գաղութային կանոնադրություններ: Այս կանոնները, որոնք ընդունվել էին կարգավորելու համար Կաֆայում նստած ջնեովացի, ինչպես նաև պաշտոնի հասած տեղացի աստիճանավորների գործունեությունը, մեծ չափով արտացոլում են նաև դրիմահայերի կյանքն ու զբաղմունքները տվյալ ժամանակաշրջանում: Խալացի գիտնական Սեուլին հրատարակել է Կազարիայի կոմիսեի 1314—1340 թթ. որոշումները, այդ քվում Կաֆայի 1316 թ. կանոնադրությունը, դրանք զետեղելով *«Monumenta historiae patriae»* ժողովածուում, t. II, *Leges Municipales*, 1838, *Impositio Officii Gazariae*, *Ordo de Caffa* (այսուհետև տե՛ս *„Monumenta historiae patriae“*).

III. Ղրիմահայերի՝ կաթոլիկ քարոզչության և հռոմեական եկեղեցու հետ ունեցած առնչություններ: Այս հարցը լուսաբանվել է երեք փաստաթղթերում, որոնք վերցված են հայ պարբերական հրատարակություններից, դրանցից երկուսը (փաստաթուղթ 11 և 12)՝ *«Հանդես ամսօրեայ»* ամսագրից (1911, 6—8), իսկ մյուսը (փաստաթուղթ 13)՝ *«Արոր»* հանդեսից (1911, № 10—11):

IV. *Ջենովայի սեծովյան գաղթավայրերի 1449 թ. կանոնադրությունը*: Գրավոր այս կարևոր հուշարձանը 1863 թ. լատիներենից ռուսերենի է թարգմանել Պատմության և հնությունների սիրողների Օդեսայի ընկերության իսկական անդամ և վիցե-պրեզիդենտ, անվանի գիտնական Վ. Յուրգելիչը և ռուսերեն ու լատիներեն տեքստերը հրատարակել ընկերության 5-րդ տարեգրքում. «Записки Одесского общества любителей истории и древностей» (այսուհետև տե՛ս «ЗООИД»).

V. *Գրադրություններ Կաֆայի և Ջենովայի Սբ. Գևորգ բանկի միջև (1453—1475)*: Այս նյութերը հրատարակել է իտալացի գիտնական Ամեդեո Վինյան «Codice diplomatico delle colonie Tauro-Liguri» (1868—1871) վերառառությամբ: Հետագայում այդ փաստաթղթերը ամփոփվեցին «Atti della società Ligure di storia patria» (այսուհետև տե՛ս «Atti») ժողովածուի VI (1868) և VII հատորներում: Վերջին հատորը կազմված է երկու մասից. մասն 1-ին՝ 1871 թ., մասն 2-րդ՝ 1879 թ.: Բոլոր հատորներն էլ հրատարակվել են Ջենովայում:

V բաժնի վերջում զետեղված է փաստաթուղթ Կաֆայի անկման մասին (1475 թ.): Այս կարևոր փաստաթուղթը բաղկացի է երեք Օդեսայի Պատմության և հնությունների ընկերության նիստերի հրատարակված արձանագրություններից:

Վերը նշված լատիներեն փաստաթղթերը (փաստաթուղթ 1—10, 44—45, 47—65, 67—71, 73) մեր ընտրությամբ թարգմանել է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նախկին աշխատակից Ա. Չալկյանը:

«Atti» ժողովածուից վերցված երեք փաստաթղթերի (№№ 66, 72 և 74) թարգմանությունը կատարել են Լ. Պ. Կալիի ժամանակին թարգմանած ռուսերեն օրինակներից՝ համեմատելով լատիներեն բնագրերի հետ («Известия Таврической ученой архивной комиссии», в дальнейшем «ИТУАК», № 5, Симферополь, 1918 г.).

Փաստաթուղթ 46-ը, որը ժամանակի զանազան բարբառների խառնուրդ է, ուղարկել ենք Ձեռնվառ և այնտեղից ստացել նրա բարգմանությունը՝ ժամանակակից իտալերենով: Փաստաթուղթը բարգմանել է Գ. Վիրաբյանը:

«Հանդէս ամսօրեայ»-ի 1911 թ. № 6—8-ից վերցված երկու փաստաթղթերի (№ 11—12) բարգմանությունը ժամանակին կատարել է Գ. Գալեմբարյանը՝ ձեռքի տակ ունենալով Ֆլորենցիայի Մետիչե-Լավրենտյան մատենադարանում պահպանվող լատիներեն բնագրերը, իսկ «Արոր» հանդեսի 1911 թ. № 10—11-ից վերցված փաստաթղթի (№ 13) բարգմանությունը ժամանակին կատարել է Պ. Թումանյանը:

1449 թ. Կանոնադրությունից ներկա ժողովածուի համար հատվածները (փաստաթուղթ 14—43) ընտրել և բարգմանել ենք Վ. Յուրգևիչի հրատարակած ռուսերեն օրինակից, դրանք համեմատելով լատիներեն օրինակների հետ: Վ. Յուրգևիչի գրչին է պատկանում նաև № 75 փաստաթղթի ռուսերեն բարգմանությունը, որը օրինակ է ծառայել մեր կատարած հայերեն բարգմանության համար:

«Atti» ժողովածուի VI և VII հատորներից ընտրված փաստաթղթերի անոտացիաներում, որ ժամանակին կազմել է Ա. Վինյան, կատարել ենք անհրաժեշտ մի շարք փոփոխություններ և շտկումներ:

I

1. Նոտարական ակտ, որով ղրկմահաչեւ Պարոզային և
Կոստարին շնորհւում է նաւի վարձակալական իրավունք՝
Տրապիզոն հացահատիկ տեղափոխելու համար:

Կաֆա, 1289 թ., 23 ապրիլի

173 Տիրոջ անունով ամեն: Մենք Անդրեաս Պազանացիս
174 և Օրերդո դի Վինիանոս, || հանձնում ենք քեզ, հայ Պա-
րոզա Կազարիացու¹ մեր նաւի վարձակալության իրա-
ւունքը և տիտղոսը ամբողջութեամբ, որպէսզի դու քո
անունով և հայ Կոստարի անունով վարձված մեր զաւե-
րան² ապահովես ջրով, հացամթերքով, նավաստիներով,
առաջիկա 10 օրվա ընթացքում զնաւ Կոնեստասիոն³ և
այնտեղ վերցնես 300 մողի⁴ ցորեն և 400 մողի [կորեկ]
և այնուհետև դրանք տանես Տրապիզոն, Կոնեստասիո-
նից անմիջապէս հետանաւ քո կողմից վարձված մեր
նաւով, հենց որ այն բեռնվի. այնուհետև պետք է ու-
ղեւորվես Տրապիզոն. երբ նաւը խարիսխ գցի Տրապիզո-
նում ցորենի և կորեկի բեռով, այդ ցորենը և կորեկը
իջեցնել և տանել տաւ աշտեղի նավահանգիստը մեր
բարկայով⁵: Մեր նաւը վարձելու և վարձակալի իրա-
ւունք ստանալու փոխարեն դու մեզ կտաս 9 մողի ցո-
րեն՝ բեռնված յուրաքանչյուր 100 ֆունտի համար և 14
մողի կորեկ՝ բեռնված յուրաքանչյուր 100 ֆունտի դի-

մաց: Փոխադարձաբար ևս՝ Պարոտիաս (Պարոզա կա-
ղարիացիս — Վ. Մ.) խոստանում և համաձայնվում եմ
վերևում նշված բոլոր պայմաններին և նույնպես համա-
ձայն եմ ձեզ կամ ձեզնից որևէ մեկին տալ ցորեն և, վե-
րևում նշվածի համաձայն, ձեզ լրիվ հատուցել վարձակալ-
ման փոխարեն, և փոխադարձ պայմանավորվածությամբ
ու համաձայնությամբ առարկա բոլոր պայմանները պար-
տավորվում ենք կատարել և հարգել և շխախտել որևէ
բանում, հակառակ դեպքում խախտող որևէ կողմը կվը-
ճարի 1000 ասպեր⁶ տուգանք, ըստ մեր պայմանավոր-
վածության: Վերևում նշված պայմանները հարգելու և
ներանց կատարմանը հսկելու նպատակով, մենք, որպես
գրավական, փոխադարձաբար տրամադրում ենք մեր
ներկա կամ ապագա ամբողջ ունեցվածքը: Կազմված է
1289 թ. ապրիլի 23-ին Կաֆայում⁷... ներկայությամբ
վկաներ Բալդուին դե Կվարտոյի և Յակոբո դե Բոնի-
ֆաշիոյի⁸:

„Acts des notaires“, էջ 173—174:

2. Նրոտարական ակտ ոմն Պետրոսի ապրանքները միջոցորդի միջոցով վաճառելու մասին:

Կաֆա, 1289 թ., 23 հունիսի

Տիրոջ անունով ամեն: Ես՝ Օբերտոս Բանքերիոսս՝
որդին Գվիլեմոս Բանքերիոսի, ընդունում եմ, որ քեզ-
նից՝ հայ Պետրոսից, ստացել եմ ապրանք, որի համար
պարտավորվում և խոստանում եմ քեզ կամ բո կողմից
ուղարկված իսկական ներկայացուցչին վճարել ապրան-
քի դնի համաձայն 29 ոսկե հիպերպեր⁹, երբ իմ նախնի
Պերա¹⁰ կզամ և իմ գալուց 8 օր հետո: Այլապես խոստա-
նում եմ քեզ [վճարել] նշված գումարի կրկնակին, որպես
տուգանք, կատարված ծախսերի վճարումով, եթե իմ

պարտքի մուծման նշված ժամկետն անցնի: Այս համա-
ձայնագիրը հարգելու նպատակով, ես արամադրում եմ
բոլոր իմ ներկա և ապագա ունեցվածքը որպես դրավա-
կան: Կազմված է Կաֆայում... 1289 թ. հունիսի 23-ին,
երեկոյան, ներկայությամբ վկաներ Ֆիլիպո Բեստան-
յոլի և Մեղանո դե Մարիի:

„Actes des notaires“, էջ 225:

3. Առևտրականներ Ֆրանչեսկո Սուանեն և հայ Սիմոնը
հավ են վարձում իրենց ապրանքները Կաֆայից Տրապիզոն
տեղափոխելու համար:

Կաֆա, 1289 թ., 26 հունիսի

Տիրոջ անունով ամեն: Ես՝ դե Վալես, վարձակալի
իրավունք եմ շնորհում ձեզ՝ Ֆրանչեսկո Սուանեիդ և հայ
Սիմոնիդ, որ ուզում եք ձեր սեփական անունով և ձեր
ընկերների անունով, որոնք ձեզնից բացի 8 անձ են,
վարձել իմ տարիզան¹¹, որը «Սուրբ Անդրեաս» անունն
է կրում. այն ներկայումս պետք է ուղևորվի Տրապիզոն.
նշված տարիզան խոստանում եմ արամադրել ձեզ, որոնց
անունները վերևում նշվեց, պատրաստ և ապահովված
սեփական սարքավորումներով, ջրով, հացամթերքով և
նավաստիներով, բոլոր անհրաժեշտ իրերով: Խոստա-
նում եմ իմ տարիզայի վրա վերցնել ձեզ և ձեր մերձա-
վորների և ձեր բեռները: Խոստանում եմ ձեզ համար
հարմար ժամանակ, այս ձևով պատրաստ իմ տարի-
զայով, մեկնել Կաֆայի նավահանգստից և գնալ Տրա-
պիզոն, առանց ճանապարհը շեղելու, եթե միայն աստ-
ծո կամքով առաջացած խանգարումով չմնանք ճանա-
պարհին: Հասնելով Տրապիզոն, խոստանում եմ նավից
իջեցնել ձեզ և ձեր մերձավորներին, ինչպես նաև ձեր
բեռները և ձեր մերձավորների բեռները, իմ նավակով

և իմ նաւաստիներով զրանք ափ իջեցնել Տրապիզոնում, այն պայմանով, որ դուք նաւի վարձման և վարձակալի իրավունքի համար ինձ վճարեք 38 բարիքատ՝¹² ձեզնից յուրաքանչյուր անձի համար, և նույնքան զրամ՝ ձեր յուրաքանչյուր բեռի համար: Բացի այս, մենք վերոհիշյալներս, մեր սեփական անունից և մեր մերձավորների անունից խոստանում ենք կատարել բացարձակորեն բոլոր նշված պայմանները և համաձայնվում ենք, վավերացնելով և հաստատելով բոլոր պայմանները, բեղներկայումս տալ վարձատրության լրիվ փոխհատուցումը և վճարը, որպեսզի բեռնես վերևում նշված բեռները և անձանց և [խոստանում ենք] քիզ ամբողջովին տրամադրել վարձակալման լրիվ իրավունքը՝ վերևում նշված ձեռով, և վերևում նշված բոլոր պայմանները խոստանում ենք անձամբ կատարել և հարգել և նրանց կատարմանը փոխադարձաբար հսկել և իրար նկատմամբ պայմանների խախտում չկատարել, հակառակ դեպքում պայմանավորվում ենք վճարել միմյանց 500 բարիքատ: Այս նշված պայմանները մեր կողմից լրիվ կատարելու, զրանք մինչև վերջ հարգելու նպատակով՝ մենք, վերևում նշված անունները կրողներս, ինչպես նաև մեր նաւի վարձակալը, փոխադարձաբար համաձայնվում ենք միմյանց տրամադրել մեր ամբողջ ունեցվածքը, որպես վերևում նշված պայմանների կատարման զրավական: Կազմված է Կաֆալում, 1289 թ. հունիսի 26-ին, ժամը 8-ի և 9-ի միջև, ներկայությամբ վկաներ՝ Կամուտողե Արեհնձանոյի և Անասալպոյի:

„Actes des notaires“, էջ 228:

4. Կազարիացի Կիրակոսի կողմից առևտրական Էբրիակոյին վարկավորելու և տրված դրամագլուխը Սիրիայում կամ որևէ այլ վայրում ետ ստանալու պայմանների մասին:

Կաֆա, 1289 թ., 18 հուլիսի

Տիրոջ անունով ամեն: Ես՝ Ռաֆաել Էբրիակոս, ընդունում եմ, որ քեզնից՝ Հայ կազարիացի Կիրակոզից (Կիրակոսից — Վ. Մ.), ստացել եմ բարիբատ ասույրեր, որոնք լիարժեք են և ծախսելի, որոնց փոխարենն ես խոստանում եմ քեզ վճարել լիարժեք և ծախսելի 2000 սուղաչական ասույրներ¹³, իմ Սիրիա գալուց 15 օր հետո, երբ կգամ Սիրիայի Սուր¹⁴ կոչված վայրը իմ նավով և իմ մերձավորներով. այդ գումարը քեզ կարող եմ վճարել Սիրիայում գտնվող որևէ այլ վայրում, ուր որ դու ցանկանաս: Այլապես, խոստանում եմ և պարտավորվում եմ քո պահանջի դեպքում քեզ վճարել նշված գումարի կրկնակին, որպես տուգանք, կատարված ծախսերի վերագարծով, եթե իմ այս պարտքը վճարելու ժամկետն անցնի: Որպես գրավական այս մեր պայմանի կատարման, ես տրամադրում եմ քեզ բոլոր իմ ներկա և ապագա ունեցվածքը: Փաստաթուղթը կազմված է Կաֆայում... 1289 թ. հուլիսի 18-ին, ժամը 1-ի և 3-ի միջև, ներկայությամբ վկաներ Ստեփանոս Սանկտոպետրոսարենացու, Հայ Կոստամիրի և կաշեգործ Գաբրիելի:

„Actes des notaires“, էջ 244:

5. Մովսէսէն Յուրզուքիի հաւիշտակած աւարանքները
դրանց տերեր հայերին ու հույներին վերադարձնելու մասին:

Կաֆա, 1290 թ., 27 ապրիլի

(Քաղվածաբար)

Մենք՝ հայերս Պերա Բողզա Սեանցի, Վասիլի Իվան
Մելիք և Պրիքե Աւարյան էվահա, հույներս Բեոգորոս և
Կոստա, ընդունում ենք, որ դու՝ Վիվալդո Լավաջիոզ, մեզ
լրիվ շափով վերադարձրել ես ամբողջ մեր գույքը, որը
մեզնից խլել էր ծովահեն Յուրզուքին: Դու մեր գույքը
ծովահեն Յուրզուքիից ետ ես վերցրել Արգուն խանին¹⁵
սպառնալով և նրա կողմից սպառնալիքներով զաւերացնելով և
մեզնից հաւիշտակվածը նրանից ետ վերցնելով, դու այն
լրիվ վերադարձրել ես մեզ: Պաշտոնապես ընդունում
ենք, որ քեզնից այլևս ոչինչ չունենք ստանալու, պար-
տավորվում ենք քեզնից ապագայում ոչինչ չպահանջել
և որպէս մեր պայմանագրի զրտական, տրամադրում
ենք մեր ամբողջ ներկա կամ ապագա ունեցվածքը:

Կազմված է Կաֆայի տերիտորիայում... 1290 թ.
ապրիլի 27-ի երեկոյան, վերևում նշված կողմերի հա-
մաձայնութեամբ, ներկա էին հետևյալ վկանները՝ Ուրսի-
չիոնեն՝ Բարդաբսիից, Յարկակսին՝ Աբաղայից¹⁶, Զա-
ղաթայի և Տամբուզա կայսեր գործակից Բորտագուլը՝
Կազարիայից, առևտրական Յակոբոն՝ Կահիրեից, Սի-
մոն Սալվին՝ Սակոնայից, Գվիլելմո Կոսեմալին՝ Պրե-
դիից, Մարֆեո Մուսին, Ուզուլինո դե Գրիգորիոն և Թարգ-
ման Զիանինոն՝ Սալոնայից:

„Actes des notaires“, էջ 272:

II.

6. Սուլիատ¹⁷ ապրանք չստանելու մասին¹⁸։

Ձեռովա, 1316 ր.

Որևէ քաղաքացի կամ որևէ մեկը, որն օգտվում է քաղաքացու իրավունքից, չի կարող և չպետք է իր համար կամ ուրիշի համար տանի կամ տանել տա որևէ ապրանք Սուլիատ, սակայն որևէ մեկը կարող է այնտեղ գնալ և մնալ 8 օր և այդ ժամանակամիջոցում գնել ապրանքներ, որոնք 8 օրվա ընթացքում պետք է տանի կամ փոխադրել տա այդ վայրից, և եթե պատահամաբ որևէ մեկը դեմ գնա այդ բոլորին, պետք է վճարի տույժ՝ ապրանքների ընդհանուր արժեքի քառորդի չափով։ Այս տույժը, ինչպես վերևում նշվեց, կպարտադրվի կաֆացի այն անձանց, որոնք կմնան 8 օրից ավելի նշված վայրում, պարտադրվող տույժի չափն է 100 ոսկե հիպերպեր։

„Monumenta historiae patriae“, II, էջ 379։

7. Սուրաշայու¹⁹ ապրանք չվաճառելու կամ գնելու մասին։

Ձեռովա, 1316 ր.

Նմանապես որևէ անձ, որը հանդիսանում է քաղաքացի կամ օգտվում է քաղաքացու իրավունքից, չպետք է

Սուղդայայում գնի կամ վաճառի, կամ որևէ մեկին փոխանցի իր կամ ուրիշ անձի միջոցով որևէ ապրանք, այլապես նրանից կզանձվի նշված տույժը: Բացի դրանից, արգելվում է նաև որևէ մեկին 3 օրից ավելի մնալ Սուղդայայում, նույնիսկ եթե նա այնտեղ չի մնում առևտուր անելու նպատակով: Այն անձը, որը որևէ ձևով կխախտի այս օրենքը, կվճարի տուգանք՝ 100 ոսկե հիպերպերի չափով:

„Monumenta historiae patriae“, II, էջ 380:

8. Հայերի եպիսկոպոսի ջրմուղի ջրի ուղղությունը
չշեղելու մասին:

Ձեռնոյւ, 1316 ր.

Օրենք է շարադրվում և հրապարակվում, ըստ որի որևէ քաղաքացի կամ քաղաքացու իրավունքից օգտվող կամ Կաֆայի բնակիչ չպետք է հանդգնի կամ ձեռնարկի որևէ ձևով կամ պատճառով, որևէ բացահայտ կամ լռաբուն մտադրությամբ շեղել ջուրը՝ մասամբ կամ ամբողջությամբ, որը ջրմուղի միջոցով հայերի մեծարգո եպիսկոպոսը իր հոգու փրկության համար պատվիրել է անցկացնել Կաֆայում, արգելվում է նաև այդ ջրմուղից ջուր վերցնել կամ վերցնել տալ որևէ ձևով. այդ ջուրը պետք է օգտագործվի միայն Կաֆայում և այն տեղերում, որոնք օրենքով ենթարկվում են Կաֆային, այլապես տույժ է նախատեսվում այս օրենքը որևէ ձևով խախտող ամեն որի համար՝ 3000 բալիքատ²⁰ ասպերի չափով և, բացի դրանից, նախատեսվում է, որ ջրմուղի ուղղությունը խախտողը պետք է վերականգնի այն և այն վերադարձնի իր սովորական տեղը. դանձված այդ տույժը պետք է դրվի Կաֆայի հյուպատոսի տրամադրու-

Յլան տակ, որպեսզի տույժի գումարը նա պարտավոր
լինի ծախսել օգտակար կառուցումների և գործերի հա-
մար միայն Կաֆայում:

„Monumenta historiae patriae“, II, էջ 380:

9. Հրահանգ ջենովացի կոչվելու համար փաստաթուղթ
տալու վերաբերյալ:

Ձեռովա, 1316 թ.

Կաֆայի հյուպատոսը չի կարող որևէ մեկին գրու-
թյուն կամ թուղթ տալ կամ զրավոր հավաստել այն մա-
սին, որ նա հանդիսանում կամ համարվում է ջենովացի,
և՛ ի նախապես վստահության արժանի երկու կամ երեք
վկաների կողմից չի հաստատվել, որ նա ծնվել է Ջենո-
վայի ծովափին կամ մարզում կամ թե նրա հայրը եղել
է ջենովացի: Այդ մարդը այնուհետև համարվում է ջե-
նովացի:

„Monumenta historiae patriae“, II, էջ 407:

10. Հալերին, հույներին և ռուսներին վարձակալության
տրվող հողերի և նրանց եկեղեցիների
գրադեցրած տերիտորիայի մասին:

Ձեռովա, 1316 թ.

(Քաղվածաբար)

407 Կաֆայի հյուպատոսը չի կարող տնօրինություն
անել այն հողին, որի վրա հնուց ի վեր գտնվում են հույ-

ների, հայերի ու ռուսների (Rossorum) եկեղեցիները և
այդ եկեղեցիների վանքերը:

408

...Կաֆայի հյուպատոսը կարող է հայերին, հույն-
րին և մյուս քրիստոնյաներին, որոնք ջենովացիներ չեն
և չեն համարվում ջենովացիներ, վարձակալության տալ
այն հողը, որն ընկած է Սադոնի պալատից մինչև ծովը
և ապա սբ. Մարիամ եկեղեցու ուղղությամբ մինչև Կա-
ֆայի պարսպից դուրս գտնվող փոսը, ընդհուպ մինչև հին
փոսը:

„Monumenta historiae patriae“, II, էջ 407—408:

11. Հովհան XXII պապի նամակը Կաֆայի հայ ժողովրդին:

(Հոռճ), 1318 թ.

- 450 Վերին աստիճանի զոհությունը զգացինք, իմանալով աչն լուրը, որ լուսո ամենակարող արարիչը ցուցանելով ի ձեզ յուր զորությունը, յուր ճշմարիտ ճառագայթներովը ձեր միտքը լուսավորած է, որով խոստացաք երգմամբ անսասան պահելու աչն կաթողիկե հավատքը, զորունի ճշմարտապես հռոմեական սուրբ մայր եկեղեցին, զոր կառվորեցնե հավատարմությամբ և զոր կբարոզե, և թե խոստացաք հնազանդություն հռոմեական քահանայապետին և անոր եկեղեցույն, ի ձեռն մեծարգո եղբոր մերո Երեմիայի²¹, եպիսկոպոսի Կաֆայի: Անոր համար չերմապես կ'ըձանք, որ պահելով այս եկեղեցվո փրկարար վարդապետությունները, պահեք և սովորությունները, ի մասնավոր ինչ որ կվերաբերի խորհուրդ ամենեն զերազանցին, որ է անձառ խորհուրդն սեղանա: Վասն զի թեև մյուս ամեն խորհուրդները սրբարար շնորհքը կուտան, սակայն հայտն բովանդակված է Հիսուս Քրիստոս ամբողջ՝ իբրև խորհուրդ հացի և զինվո տեսակներուն || տակ, որոնք մնալով՝ հացը զոյացապիտված է ի մարմին Հիսուսի Քրիստոսի, և զինին՝ ի արյուն: Անոր համար կուզեմք, որ զիտենաք, թե Հոռմա սուրբ
- 451

եկեղեցին կսորվեցնե, կը հրամայե, կը պահե խառնել
ջուր փրկարար բաժակին մէջ:

«Հանդիւս ամսօրեայ», 1911. № 6—8, էջ 450—451:

12. Կաթայի երեւելի հայերի և հայ հոգևորականների 1438 թ.
ծողովի ճանձնարարականը²² կաթողիկոսի մոտ ուղարկվող
պատգամավորների՝ պապի կողմից հրավիրվող
տիեզերածողովին մասնակցելու վերաբերյալ:

Կաթա, 1438 թ., 12 մայիսի

Հանձնարարագիր պատգամավորաց հայոց.

- 460 Հանուն աստծո, ամեն, Հարգո ի Քրիստոս հայր՝
տեր Մաղաքիա²³ Լպ. հայոց, Ստեփանոս երեց Ս. Եր-
րորդության՝ ավագերեց հայոց, Ավետիք երեց Ս. Նիկո-
ղայոսի, Մկրտիչ երեց Ս. Հակոբա, Մովսես երեց Ս.
Առաքելոց, Վարդան երեց Ս. Գևորգա, Ղազար երեց Ս.
Գրիգորի Calolarius (°), Calolarius Ավետիք երեց Ս.
Օրսենտի, Աստվածատուր երեց Ս. Սարգսի, Սիմեոն երեց
Ս. Սարգսի, Սիմեոն երեց Ս. Ստեփանոսի, Հովհաննես
երեց եկեղեցու Ս. Սիմեոնի, Հակոբ երեց եկեղեցու Ս.
Կարապետի, Թովմաս երեց Ս. Նիկողայոսի, Հովհաննես
երեց Ս. Մարմա, Հակոբ երեց Ս. Քառասնից, Թադևոս
երեց եկեղեցու Ս. Համբարձման, Զորապետ երեց Սուր-
ղադա, Մելիքսեթ երեց Ս. Ստեփանոսի, Սիմոն երեց
Ս. Մարեմա, Աբրահամ երեց Ս. Մարեմա, Սարգիս երեց
Ս. Օրսենտի, Աստվածատուր երեց Ս. Մարեմա: Օղպեյ
Սանչա, զոճա Բավաքալ Սիմիս, Ամիգ պեյ Ս. Կատա-
461 ռինեի, || ավագ պարոն Պաթիֆուլ, պարոն Խոյշ Թորա-
կալ, Հարություն Գախազ, Պարսամ Ճրագյան (Cande-
lerius), խոճա Յուսուֆ վաճառական, Ամիր պեյ Ս.
Փրանկիսիոսի, Անդրեաս Կարապետ, Գոգոլ բեյ, Սարլ
պեյ, Թորալ պեյ Մանզա, Էնրի պեյ Ակորլյան և Ակորբձան

Մորթագործ (Peliparius), միաբանեցան հետեւյալ միաբանութեան՝ ընդ մեծարո և ազնւական տյառն Պատուոսի Իմպերիալիի²¹, մեծարո հյուպատոսի Կաֆայի, ինչպես նաև ընդ ազնւական տյառն Լուչինո տե Ֆացիո, և ընդ ազնւական տյառն Կալեդո տե Կրիմալտի գործակալաց և հոգաբարձուաց Կաֆայի: Այսինքն՝ ի վաղուց խոստացւած էր իրենց, որ Ճենովա էամ առ ամենասուրբ տերն՝ տերն մեր Քահանայապետ և կամ առ սյունհողոսն պատգամաւոր մը զրկն*, իբրև դեսպան անոնց՝ հօգուտ ամենայն բրիստոնելից: Կը խնդրեն, որ նույն մեծարո տեր հյուպատոս շնորհե իրենց երեք ամիս միջոց, որպէսզի կարենան իրենց պատգամաւորը զրկել իրենց կաթողիկոսին՝ անոր հաւանությունն առնելու համար:

Մեծարո տեր հյուպատոս հաւանեցաւ և կհաւանե տալ իրենց խնդրած ժամանակամիջոցը, պայմանով, որ Լթե ինքն՝ սրբազան կաթողիկոսը, մերժե իրենց խնդրածը զրկել կամ թույլ տալ, և Լթե հիշյալ պատգամաւորն երեք ամսո մեջ չվերադառնա սրբազան կաթողիկոսեն, այն ատեն հանձն կառնուն: Կը պարտաւորին և կը հաւանին, սույն պարագային հակառակ՝ զրկե առ ամենասուրբ տերն մեր քահանայապետ կամ ի Ճենովա և կամ առ սյունհողոսն, ինչպես որ պատշաճ կերեա հիշյալ հյուպատոսին, վարդապետ մը՝ ընդարձակ իշխանութեամբ, լայն և ընդհանրական խոստմամբ, որ պիտի վճարեն ասոր և ասոր ուղեկիցներուն ինչ ծախք որ կընեն, և ամեն վնասները՝ զոր կրնա ունենալ իր ուղեկիցներուն հետ երթալու և դառնալու ատեն. և հիմակվանն կրնտրեն և բնտրած նկատել կուզեն նույն վարդապետը իբրև իրավունք ունեցող երեք ամսնն ետե իրենց պատգամաւորութեան և դեսպանութեան ի վերոգրյալ գործ՝ լի և ընդհանուր գործակալութեամբ ըստ

* Ուշարկել Հոռմի պապի մոտ կամ տիեզերաժողով:

վերոգրելույն. սակայն սույն արձանագրության զորությամբ շի հասկցվիր ուրիշ նվիրակ մը կամ պատգամավոր մը որոշում մը ընդունելու՝ բայց եթե համաձայնելով հիշյալ վարդապետին հետ, նույն իսկ իրենցմե կարգված մեկը*:

1438 թ. նոյ. 16 ընդօրինակված որպես ի վերո, Բարդղղիմեոս Կրեբի նոտարի հրապարակական արձանագրեն, որ այժմո գիվաճապիր է հիշյալ մեծարո աշառն Պողոսի Իմբերխալի հյուպատոսի, և այս ի հրամանն նույն հիշյալ մեծարո աշառն հյուպատոսի:

Գրիգոր տե Պենեկասիո, նոտար և դիվանագիր:
462 1438 զ2. 13 մարտ, իրիկվան մոտ ի պատշգամի ստորագրվալբս, որ բացակա էին, կը հաստատեն այն ամենը, ինչ որ վերոհիշյալը ըսին.

Ես Տիրիմ Պարալ

Ես Հովհ. որդի Պարալի

Ես Գաղուլ պեյ Մարգար Քարքանա

(բահանա)

Ես Պարոնվարդ ճրագարար (Candelarius)

Ես Պարոնվարդ Պարալ

Ես Սահակ Պաղ Քուրմիո

Ես Աղիղ պեյ Գաֆար

Ես Ստեփ. որդի Զաքարիա Լրիցու

Ես Քաջհարես Քումիկ

Ես Անտել Ս. Երրորդության Քարքանա

Ես Սիմոն Քարքանա Ս. Ստեփանոսի

Խաչիկերեսց եկեղեցվո հալոց.

Վկայք՝ Մկրտիչ Մարտիրոսի, և Անդո տե-Նիելա տե. Քոնրադենկոս, կոչեցյալ և խնդրյալ առ այս:

* «Գրեցաւ ի մեծի սենեկի նորին տէառն տէր հիւպատոսի, յամին 1438, ի 15 ինդիկատիոնի չընթացս հունվարի, իրիկվան ղեմ, 12 մայիս:

Վկայք Թինետոս տե Գորոնագո, Լաֆրանք տե Լորգո, Քրիստափոր տե Օտինո, որ կոչվեցան և խնդրվեցան»:

1438 չոյ. 16 հանյալ, ինչպէս վերը, հիշյալ հրապարակական արձանագրեն Բարթող նոտարի ի ձեռն իմ վերոգրյալ Գրիգոր նոտարիս և զիվանագարիս ստորագրողիս. և այս ի հրամանն վերոհիշյալ մեծարո տյառն հյուպատոսի: Գրիգոր տե Պենեկոսիո, նոտար և զիվանագար:

«Հանդէս ամսօրեայ», 1911, № 6—8, էջ 460—462, լատիներէն բնագիրը Ֆլորենցիայի Մետիչէ-Լավրենտյան մատենադարանում, ընդօրինակութունը տես՝ A. Balgý Alexandro, Historia doctrinae catholique inter Armenos, Viennae, 1878, էջ 336—338:

13. Եվգենիոս IV²⁵ պապի հրահանգը Կաֆայի նոր ճշանակված կաթոլիկ եպիսկոպոսին Կաֆա մէկնելոյց առաջ:

(Հոտմ). 1446 p.

(Քաղվածք)

Ամենից ավելի րեզ հայտնի է, թէ որպիսի աշխատություն թափեցինք մենք կաթոլիկություն ընդունած հայերին հավատի մէջ պահելու համար, որին կարողացանք հասնել ծախքերի միջոցով... Չպետք է մոռանաս, որ քեզ հովիվ ենք նշանակել միմիայն նրա համար, որ խոսքով և գործով մեծ արդյունք տաս Կաֆային, մի քաղաքի, որ բոլոր քաղաքներից ավելի կարիք է զգում [ղրան]:

«Արո», հանդէս, Թիֆլիս, 1911. № 10—11, էջ 104: Հմմտ. «Ալլի», VII, II, էջ 697:

IV

14. Անծովյան գաղթավայրերի համար նոր կանոնադրություն
վշակելու վերաբերյալ ընդունված որոշումը:

Ձևնուա, 1448 ր., 24 հունիսի

(Կրճատումներով)

633 Լյուդվիգ դե Կամպոֆրեզոզոն, աստծո ողորմածութ-
յամբ Զենովայի ամենապայծառ և բարձրագույն դոժը
և Զենովա քաղաքի համայնքի արժանահավատ Ավագնե-
րի խորհուրդը՝ հավարված օրինավոր և լիաքանակ կեր-
պով, անհրաժեշտ և օգտակար համարեցին նախօրոք
հոգածություն տածել իբրև բարենորոգիչներ ու կոմի-
սարներ Արևելք գործուղված Բարբանո դե Վիվալդու և
ընկերների կողմից վերջին անգամ Կաֆայում ընդուն-
ված կանոնադրությունների, կարգադրությունների և կա-
նոնների նկատմամբ, որոնք մինչև այժմ դեռևս չեն վերա-
փոխված, հաստատված, վերացված, որպեսպի աչսու-
հետև այդ երկրում կարգած մեր պաշտոնյաներն ու Կա-
ֆայի բնակիչներն իմանան, թե ինչպիսի օրենքներով
ու կանոններով են կառավարվելու, առավել էս, որ ինչ-
պես ցույց են տալիս փորձն ու հասած լուրերը, նշված
կոմիսարների կողմից հաստատված և վերափոխված
կառավարչական տեղերը կարիք են զգում նոր վերա-

կառուցման՝ ինչպիսի նրանց վրա դրված հարկերի չափից ասելի լինելու, հավասարապես նաև || այն պատճառով, որ նախկինում կատարված հայտնի փոփոխություններից հետո նույն կոմիսարների կողմից վերստին ընդունվել են նոր օրենքներ ու կանոններ կառավարական տեղերի համար, որի հետևանքով դրանք անհրաժեշտաբար կզրկվեն արժանավոր պաշտոնյաներից, եթե չընդունվեն այլ միջոցներ, քանզի հիշյալ օրենքներով իրենք պաշտոնյաները ի վիճակի չեն դեկավարվել ու կառավարվել: Ցանկանալով այս դժվարին և արտակարգ կարևոր հոգվածին կանխապես օգնել, նախքան այն նավի մեկնելը, որը շուտով նիկոլո Դորիայի հրամանատարության ներքո ուղևորվելու է Կաֆա, լսելով խորհրդակցության հրավիրված ուսմանական պաշտոնյաների²⁶ կարծիքը այս հարցի առթիվ և որոնք ենթադրում են, թե հարկավոր է վերանայել և շտկել օրենքները, որպեսզի նրանք արժանի լինեն հավանության, որքան կարող էին լավագույն եղանակով, միջոցով, իրավունքով ու ձևով, իրենց լիակատար իշխանության հիման վրա, հանձնարարեցին և սույնով հանձնարարում են վերոհիշյալ հարգարժան ուսմանական պաշտոնյաներին և չորսին, որոնց մասին հիշատակվում է ստորև, նրանց միացած մարդկանց հետ միասին հիշյալ կանոններն ու կանոնադրությունները, հավասարապես նաև փոփոխություններով հանդերձ նախկինում հրատարակվածները կշռադատել և վերանայել պայծառափայլ գոթի հետ միասին և, ինչպես հարկն է խորհրդածելով և ինչպես պետք է վերանայելով՝ իրենց իմաստությունամբ և արդարությունամբ այնպես կարգավորել, որպեսզի դրանց համար ամեն ինչ ապագայում կատարված լինի...

Ցանկանալով ձեռնամուխ լինել ընդհանրապես բոլոր և մասնավորապես ներքոհիշյալ կանոնադրությունների ըմբռնմանը, շտկմանն ու վերափոխմանը այն բանի համար, որպեսզի դրանք վերանայելով, շտկելով, ըմբռ-

նելով և վերափոխելով կարգավորվի այնպես, որպեսզի [գրանք] անխախտ և անձեռնմխելի կերպով պահպանվեն և ծառայեն մեր Կաֆա բաղաբի ու նրան ենթակա մյուս վայրերի տղաբնակչության խաղաղ համերաշխությանը և բազմացմանը, վերանայելով նախապես և մինչև վերջին խոսքը կարգադրելով առհասարակ բոլորը և մասնավորապես կանոնադրությունները, հասու կերպով քննարկելով, ջանադրաբար պարզելով, լսելով հրավիրված շատ քաղաքացիների, որոնք բաջ ծանոթ են այն տեղերին, և ըմբռնելով նրանց համոզումներն ու խորհուրդները, բացի դրանից վերանայելով Կաֆայի մասին Ջենովա ուղարկված որոշ գիտողություններ, որոնց համաձայն շատ բանով է պարտադրվում նշված վերափոխությունը և, վերջապես, բազմիցս քննարկելով և պարզելով նշված կանոնադրությունների բովանդակությունն ըստ հնարավորին լավագույն եղանակով, ուղիով, իրավունքով և ձևով, հենվելով նրանց շնորհված և տրված իրավունքի և իշխանության վրա, ստորև բերված և հատուկ վերտառություն տակ նշանակված կանոնադրություններն ու կանոնները, որոշեցին, վերափոխեցին և հաստատեցին || ինչպես դրանք, այնպես էլ մյուսները և հաստատեցին, ստորագրեցին, դրանց տվեցին լիակատար ուժ և նշանակություն, հրամայաբար պատվիրելով, որպեսզի Ջենովա բաղաբի համայնքի՝ Կաֆայում և ամբողջ Սև ծովում ու Նաղարիայի թագավորությունում²⁷ գտնվող բոլոր պաշտոնյաները և նրանցից յուրաքանչյուրը, ուր Ջենովայի արժանափառ համայնքը ունի դատական լիիրավ կամ ոչ լիիրավ իշխանություն, պարտավոր են ստորև շարադրված կանոնադրություններն ու կանոնները պահպանել և հետևել, որպեսզի բոլորը նրանք պահպանեն, և դատ ու արդարադատություն կատարեն դրանց բովանդակությանն ու իմաստին համապատասխան. մի խոսքով հիշված կանոնները, որոշումներն ու կանոնադրությունները այսուհետև պետք է

օրերի ու ժողովների և պահպանվեն: Դրանից զատ հրամայում ենք Կաթայի մեծանուն հյուպատոսին²⁸ և նրա արժանի տեղապահին, հյուպատոսներին, հիշյալ Սև ծովի և Արևելքի ու Զենովայի կառավարիչներին և պաշտոնյաներին, որոնք այժմ կան և նրանց ապագա հաջորդներին, որպեսզի բոլորն առհասարակ և ներքոգրյալները մասնավորապես պահպանեն և հետևեն, որպեսզի այն (կանոնադրությունը — Վ. Մ.) բառ առ բառ պահպանվի մյուսների կողմից: Նաև Կաթայում մշտապես գտնվող սինդիկատների հատուկ պարտականությունն ենք համարում կանոնները տալ կարգալու յուրաքանչյուր հյուպատոսի՝ Կաթայում նրա ծառայության անցնելու ժամանակ, որպեսզի նա չվկայակոչի այն բանի անիմացությունը, որ ղեկավարված է կանոններում և կանոնադրություններում: Վերջապես, շեղյալ ենք համարում, վերացնում և ոչնչացնում ենք առհասարակ բոլոր և մասնավորապես մյուս կանոնները, արտոնություններն ու որոշումները, որոնք որոշված, շնորհված և կատարված են Կաթա քաղաքի համար, ի ուժի մեջ թողնելով միայն ներկա որոշումները:

«300111», հ. V, էջ 633—637:

15. Կաթայի հյուպատոսի, նրա ռոմիկի մասին և որոնք են նրա պարտականությունները:

Ձեռովա, 1449 ր.

(Քաղվածաբար)

643 Յանկանալով սկսել Կաթայի և Սև ծովում ընկած տեղերի համար կանոնադրությունը և ընդունել կանոններ Կաթայի հյուպատոսի համար՝ որպես հիշյալ քաղաքի և հազարական թաղավորության մեջ ամբողջ Սև

ձուլի գլխավորի ու կառավարչապետի, որոշում, հիմնում և հաստատում ենք առաջինը, որ Կաֆա բաղաքի հյուպատոսը, որը ժամանակին կնշանակվի, պետք է տարեկան ստանա ռոձիկ 500 սոնմ²⁹, Կաֆայում գործածվող դրամով³⁰ և որ նա ոչ մի կերպ չի կարող, չի համարձակվի և չպետք է մտածի ստանալ ուղղակի կամ անուղղակի ճանապարհով այլ եկամուտ, շահույթ կամ օգուտ, ռոձիկ՝ հին ծառայողների պահպանության համար, վարձատրություն՝ գիշերային պահակների, ոստիկանական ծառայողների կամ արգուղիների³¹ համար, բայց միայն ազատվում է կենսամթերքների դիմաց վճարվող մարսերից:

- 648 ...նաև որոշում ենք, որ եթե որեէ ժամանակ հիշատակված հյուպատոսը երբեիցե հրապարակային աճուրդով վաճառի զանձատան համար նշանակված եկամուտներն ու հարկերը, սրանով պարտավորվում է և պետք է հրավիրի մասսարներին և զանձատան ծառայողներին և, այդ պաշտոնյաներին ամենից առաջ ենթարկելով երգման, հորդորի նրանց, որպեսզի խոստովանեն, թե նրանք կամ նրանցից որեէ մեկը մտադիր չէ արդյոք մասնակցելու կապալով տրվող հարկերից որեէ մեկին: Եթե հիշյալ երգումից հետո կդառնի, որ նրանք հետաքրքրվում են նշված հարկերից որեէ մեկով, ապա պետք է նրանց հեռացնի և թույլ չտա նիստեր գումարելու նրանց և մյուս պաշտոնյաների հետ, որոնք շահագրքողված չեն, այլ, ընդհակառակը, պետք է ընտրի ուրիշի կամ ուրիշների նախկինի, կամ նախկինների փոխարեն: Իսկ երբ ը խնամատարների³² միջոցով հասարակական աճուրդով կվաճառի հարկերը, այդ դեպքում պետք է ներկա գտնվեն միայն հիշյալ հյուպատոսը, ֆինանսական կառավարիչները³³ և խնամատարները, որոնք պետք է երգվեն և հորդորվեն, ինչպես ասված է վերևում:

Նաև որոշում և հանձնարարում ենք, որ դրամական հարկերը կառավարվում տալիս, կառավարները կարող են տրվել հետևյալ կերպ. աշխեն՝ հիշյալ հարկերը վաճառողներին թույլ է տրվում, երբ նրանց թվա, թե որեւէ հարկ կարող է վաճառվել ձեռնարկ գնով, տալ առաջին կապալ, որը առաջին է համարվում միայն այն դեպքում, երբ այն վճարված է, հենց այն պայմանով, որ հիշյալ կապալի վճարումից հետո հիշյալ հարկը կվաճառվի և կբարձրանա ավելի մեծ գումարի համեմատած այն գումարի հետ, որ նշանակվել էր այն ժամանակ կապալ ունեցողը: Այդ դեպքում նա, ով ունենալու է նշված կապալը, կստանա նախկին կապալին ավելացած գումարի շտրոբոգ մասը: Պահպանելով այդ կարգը վաճառողները կարող են կառավարվում տալ:

- 651 ...Նաև որոշում ենք, որպեսզի տանջանքի մեքենան դրվի և կանգնած մնա հյուպատոսական պալատի և մեծ դահլիճում և ոչ ոք համարձակվելու չունենա և չվճար այն երբեք այնտեղից դուրս բերել՝ տուգանքի ենթարկվելու երկյուղի ներքո, նախնական երգումից հետո:

«ЗООИД», №. V, № 643, 648—649, 651:

16. Ավագների ընտրության մասին:

Ձեռնովա, 1449 ք.

- 651 Որոշում և կարգ ենք հաստատում, որ Կաֆայի հյուպատոսը, հենց որը կանցնի իր պաշտոնի կատարմանը,
652 պարտավորվում է ընտրել Կաֆայի ութ || ավագներից բաղկացած խորհուրդ՝³⁴ ստորև բերվող կարգով. նրանցից չորսը պետք է լինեն ջենովական քաղաքացիներ, իսկ չորսը՝ Կաֆայի քաղաքացիներ³⁵, հետևելով, որպեսզի կեսը (նրանց — Վ. Մ.) լինեն ազնվականներ, ինքը՝

Հյուպատոսը, մասարների և նախկին Ավագների խորհրդի հետ միասին պետք է ընտրեն նրանց միջից երկու ավագների և երկուսն էլ ստորև նշված տառնական որևէ տեղից, այսինքն խնամատարության կոմիտեից³⁶, չորս գլխավոր սինդիկներից³⁷ և Առևտրական կոմիտեից³⁸, շարունակ պահպանելով տարրերությունը ազնվականների³⁹ և ոչ ազնվականների միջև։ Այդ ութ պաշտոնյաները Հյուպատոսի և մասարների հետ միասին մասամբ պետք է ընտրեն նոր Ավագների խորհուրդ՝ սե և սպիտակ գնդիկների քվեարկմամբ, նախապես ընդունելով երգում, որ ընտրելու են լավ և խղճի մտքը։ Բայց ոչ ոք չի կարող մասնել հիշյալ Ավագների խորհրդի մեջ, եթե նրա ընտրության ժամանակ չի տրվել սպիտակ գնդիկների առնվազն երկու երրորդը։ Ավագների պաշտոնը շարունակվում է լոկ վեց ամիս։ Վերոգրյալ ձևով ընտրված ավագները պարտավոր են իրենց պաշտոնավարության սկզբում ավետարանի վրա երգվել, ձեռք դնելով սուրբ գրքի վրա, որ պահպանելու են հիշված և ստորև նշված կանոնները և հետևելու են դրանց կատարմանը՝ ինչքան որ դա կախված է իրենցից, հրամայելով պաշտոնավարության անցնելու պահին այդ կանոնները ընթերցել։

«ЗООИД», № V, էջ 651—652:

17. Մասարների⁴⁰ ընտրության մասին:

Ձեռովա, 1449 ք.

Որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆայի Հյուպատոսը Ավագների ընտրությունից հետո անմիջապես պետք է ընտրի մասարներ, երկու ջենովացի քաղաքացիների, հետևյալ ձևով. ինքը՝ Կաֆայի Հյուպատոսը, նախկին մասարների և նոր ավագների հետ միասին

պետք է ընտրի Ջենովայի երկու քաղաքացիների՝ ապի-
տակ և սե ընտրազնդակաների քվեարկութլամբ, պահպա-
նելով ազնվական և ոչ ազնվական զասային տարբերու-
թլունը. և ոչ ոք չի կարող ընտրված համարվել և հաս-
տատվել, եթե քաղաքացիների ընտրութլան ժամանակ
տրված շլինի ընտրազնդակաների առնվազն երկու երրոր-
դը: Այս կարգով ընտրված աչդ մասարները ոչ մի իրա-
վունք չունեն խուսափել պաշտոնից, որը տեում է միայն
վեց ամիս:

«ЗООИД», №. V, էջ 653с

18. Գլխավոր սինդիկների ընտրութլան կարգի և նրանց
պարտականութլունների մասին:

Ձեռնվա, 1449 ք.

(Քաղվածաբար)

- 654 Որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆայի ներ-
կա և հետագա հյուպատոսը պաշտոնը ստանձնելիս և
655 հետագայում || ամեն վեց ամիսը մեկ, ընտրելով ավագ-
ների և մասարներին, պարտավոր է ընտրել Կաֆայի
գլխավոր սինդիկներին՝ հետևյալ կարգով.՝ ինքը՝ հյու-
պատոսը, մասարներին, Ավաղներին խորհրդի և նամա-
տարութլան նախկին կոմիտեի հետ միասին, նախապես
երգում տալով, որ ընտրութլունը կատարվելու է խղճի
մտքը, պարտավոր է հավասար երկու կեսով Ջենովայի
քաղաքացիներից և Կաֆայի բնակիչներից ընտրել
տասնվեց հոգու, հետևելով, որպեսզի կեսը լինի ազն-
վականներից. և աչդ տասնվեցի հետ միասին պետք է
ընտրի Կաֆայի գլխավոր ու մշտական սինդիկներին՝
նրանցից երկուսը պետք է լինեն Ջենովայի քաղաքա-
ցիներ, իսկ երկուսը՝ Կաֆայի բնակիչներ՝ նույնպես կի-

սով չափ ազնւականներ և ոչ ազնւականներ: Նրանց ընտրութիւնը պետք է տեղի ունենա քվեարկութեամբ և ոչ ոք չի կարող թուլատրուիլ հիշյալ պաշտոնին, եթե ընտրութեան ժամանակ չի ստացել ընտրազնգակաների առնւազն երկու երրորդը:

Այդ սինդիկները պարտավոր են նիստեր դումարել և դատել իրենց սովորական դատական վայրում, ամեն օր երկուսով, հերթականութեամբ, իսկ բոլոր չորս սինդիկները՝ շաբաթը երկու անգամ այն օրերին, որ կընտրեն իրենք: Եւ [նրանք] իրավունք ունեն հետաքննութիւն կատարել և դատի տալ Կաֆայի և նրա զերատեսչութեանը ենթակա այլ վայրերի բոլոր պաշտոնյաներին, որոնք պաշտոնավարելիս իրենց լավ չեն պահի և կմեղադրուին չարաշահութիւնների, հակաօրինական գործողութիւնների, հանցագործութիւնների և բռնութիւնների մեջ, || որ կատարել են նրանք մի քանի հոգով թե միայնակ, ինչպես այդ սինդիկների պաշտոնավարութեան, ահպես էլ այլ սինդիկների ժամանակ. դատել կարող են նաև նրանց, ովքեր չեն կատարել այն, ինչը պետք է կատարելին ծառայութեան բերումով վարձկանների, իրենց ենթակա պաշտոնյաների կամ որևիցե այլ ոքի վերաբերյալ: Նրանք նաև իրավունք ունեն հետաքննութիւն կատարել և դատել բոլոր չարաշահութիւնները, որոնց կատարման մեջ կմեղադրուին պարոն հյուպատոսի տեղապահը և վերը հիշված բոլոր պաշտոնյաները, և կարող են պատժել յուրաքանչյուրին դրամական տուգանքով՝ ըստ իրենց հայեցողութեան: Նրանք նաև կարող են, եթե հարկավոր համարեն, կանչել կամ հրամայել կանչելու Սև ծովի բոլոր հյուպատոսներին և պաշտոնյաներին, բացի Կաֆայի հյուպատոսից, որպեսզի նրանք ներկայանան իրենց մոտ նույնիսկ իրենց հյուպատոսութեան և պաշտոնավարութեան ժամանակ և կարող են նրանց պատժել ու դատապարտել ըստ նրանց մեղքի ու չարաշահումների. բացի հյուպատոսներին կամ նրան-

ցից մեկին կանչել ցանկանալու դեպքում սինդիկները պետք է դիմեն Կաֆայի պարոն հյուպատոսին, իսկ եթե նա չհամաձայնովի դրան, ապա կանչելու վերաբերյալ գործը ներկայացվում է հիշյալ պ. հյուպատոսի, մասարների և խորհրդի որոշմանը, ընդսմին պ. հյուպատոսը օգտվում է միայն իր մեկ ձայնից:

659

...Նրանք նաև ուղղակի դատավորներն են այն բանի, ինչը վերաբերում է վերոհիշյալ պաշտոնյաների ռոճիկին՝ սահմանված ջենովական համայնքի կանոններով ու կանոնադրություններով, ինչպես նաև ամեն մի այլ անձի նկատմամբ, որ ծառայության մեջ խաբուսվում է արեւ կամ իրեն պահում է հակառակ գոյություն ունեցող կանոնների: Բայց քանի որ հաճախ պատահում է, որ այլ անձինք, զրուարտանք բարդելով, անարգարացի և շարամտորեն մեղադրում և մատնություն են անում որեւէ կառավարչի և պաշտոնյայի հասցեին ավելի շատ վրիժառությունից, քան թե արգարություն ձգտումից, ներկա կանոնադրությամբ հանձնարարում ենք, որ հիշյալ սինդիկները պետք է հետաքննեն գործը և դատական կարգով գործ ունենան ամեն մի անձի հետ, որը մեղադրանք կհարուցի և կհանդիսանա որեւէ պաշտոնյայի, զրադրի կամ մասնավոր անձնավորության հետ վարվող հետաքննության, հայցի կամ գործի մեղավորը, որեւէ հանցագործության անօրինականության և շարաշահությունների առնչությամբ. և եթե մեղադրողը լիովին կամ թեկուզ կիսով չափ չապացուցի նշված անօրինականությունը, հանցանքը կամ շարաշահությունները, որ նա իր կողմից կամ ուրիշների միջոցով բարդում է կառավարչի, զրադրի կամ այլ անձի վրա, ապա սինդիկները իրավունք ունեն նրան դատապարտել և իրենց հայեցողությամբ պատժել, կշտադատելով մեղադրողի կամ մատնիչի կողմից առաջադրած բոլոր դեպքերն ու եղանակները և, բացի դրանից, բուն փաստերը, պատճառներն ու հանգամանքները:

- 663 ...Ջենովայի քաղաքացու և Կաֆայի քաղաքացու,
ինչպես նաև Կաֆայի քաղաքացիների կամ ջենովացիներ-
րի միմյանց միջև հինգ տոնից ավելի եղած դորժերի
զծով պ. հյուպատոսի և տեղապահի հայտնած վճիռների
վրա կարող են բողոքներ ներկայացվել Կաֆայի մշտա-
664 կան սինդիկներին, որոնք || պարտավոր են նման բո-
ղոքները ավարտել մինչև 3-ամսյա ժամկետի լրանալը,
բողոքարկման օրից հաշված: Բողոքարկումները պետք է
տրվեն հրապարակայնորեն և օրինական ձևով մինչև
10-օրյա ժամկետի լրանալը, ալլապես կհամարվեն
ժամկետանց: Եվ թեև սինդիկների պաշտոնը մոտիկ կլի-
նի ավարտին, նրանք ունեն հիշյալ եռամսյա ժամկե-
տը, համարվելով ինչպես վերելում, և նրանց պաշտոնը
բողոքարկման վերաբերյալ շարունակվում է երեք
ամիս:

«ЗООИД», №. V, էջ 654—656, 659, 663—664:

19. Գանձատան⁴¹ խորհրդի ընտրության կարգի և նրա
պարտականությունների մասին:

Ջենովա, 1449 թ.

(Քաղվածք)

- 666 Որոշում և հրամայում ենք, որ Կաֆայի հյուպատոս-
սը իր գործունեության սկզբում և հետո, յուրաքանչյուր
վեց ամիսը մեկ, պարտավոր է ընտրել չորս հոգու՝ եր-
կու ջենովական և երկու կաֆացի քաղաքացիների, պահ-
պանելով ազնվականության և ոչ-ազնվականության
667 տարբերությունը, ստորև բերվող || կարգով. ինքը՝ պ.
հյուպատոսը, մասարների, Ավադների խորհրդի, չորս
ղլխավոր սինդիկների և գանձատան խորհրդի հետ միա-
սին պարտավոր են ընտրել դանձատան նոր պաշտոնյա-

ներ՝ սե և սպիտակ ընտրադնդակների քվեարկութլամբ: Ընդ որում ընտրվածի հաստատման համար պահանջվում է ընտրադնդակների առնվազն երկու երրորդը: Այս եղանակով ընտրված այդ շորսը իրենց գործունեութլան սկզբում երգվում են, որ այն կատարելու են լավ և օրենքներին համաձայն և չեն գնելու զինվորների, վարձկանների, արգուզիների կամ համայնքի մոտ ծառայութլան մեջ գտնվող ուրիշների վարձատրութլունն ու ռոճիկը: Նրանք էլ իրենց միջից հերթականութլամբ ընտրում են ավագ, որը պետք է իր մոտ պահի հիշյալ խորհրդի կնիքը:

Միաժամանակ որոշում ենք, որ սովորական և արտակարգ ծախսերի գծով չի կարող լինել հատկացում և բավարարում, որոնց վրա չլինի պ. հյուպատոսի, մասարների և հիշյալ խորհրդի կնիքը: Արտակարգ ծախսերի գծով պետք է պահպանվի հետևյալ կարգը. հենց ինքը՝ պ. հյուպատոսը, մասարների հետ միասին անհրաժեշտութլան դեպքում կարող են վճարել մինչև 500 ասպր, իսկ եթե դուժարը կգերազանցի 500 ասպրից, պետք է հրավիրի մասարներին, Ավագների խորհրդին, խնամատարութլան կոմիտեին և տասնվեց քաղաքացիների՝ կեսը ջնհովական քաղաքացիներից, իսկ կեսը Կաֆայի քաղաքացիներից: || 500 ասպրից անցնող նման դուժարի վճարումը պետք է վճուլի քվեարկութլամբ և եթե հավանութլուն տվող ընտրադնդակները առնվազն երկու երրորդից պակաս լինեն, ապա 500 ասպրից բարձր ոչ մի ծախսում չի կարող կատարվել: Հիշյալ անձանց կողմից այս ձևով սահմանված դուժարը հետո հաստատվում կամ չի հաստատվում դանձատան խորհրդի կողմից, առանց որի ընդունված որոշումը կարևոր է և չի կարող ի կատար ածվել:

«ЗООИД», в. V, էջ 666—667:

Ձեռնովա, 1449 ր.

(Քաղվածաբար)

674 Որոշում և օրինականացնում ենք, որ պ. հյուսա-
տոսը, մասարները և խորհուրդը պետք է քվեարկության
միջոցով ընտրեն շորս հոգու՝ երկուսը Զենովայի և եր-
կուսը Կաֆայի բաղաբացիների, պահպանելով ազնվա-
կան և ոչ ազնվական դասերի տարբերությունը այն հաշ-
վով, որպեսզի քվեարկության ժամանակ առկա լինի
ընտրագնդակների երկու երրորդը: Այս ձևով ընտրված-
ները պետք է լինեն և համարվեն բաղաբի կոմիտե, իսկ
նրանց պաշտոնավարությունը տևում է վեց ամիս:

Այդ պաշտոնյաները, համաձայն ավետարանի վրա
տված երդմանը, որը նրանք կատարելու են, համբուրե-
լով սուրբ գիրքը, պարտավոր են իրենց պաշտոնը վա-
րել լավ և ըստ օրինաց, ի կատար ածելով այն կանոն-
ները, որոնք սահմանված են ներկա կանոնադրության
մեջ: Նրանք պարտավոր են դանձել նշված գերատեսչու-
թյան բոլոր պարտապաններից հասանելի դրամը,
իրենց գործունեության վերջում կներել իրենց գիրքը և
կներված գիրքը ստորագրությամբ հանձնել իրենց հա-
ջորդներին՝ երկչուղ ունենալով տալ 25 սոնմ տուգանք
ամեն մեկից՝ նաև զրագրից, եթե չկնքվի նշված գիրքը:

675 ...նաև որոշում ենք, որ Կաֆայի պարխույների, զի-
նանոցի աշտարակների, իջեցված ցանցով³² աշտարակի
և նման այլ շենքերի կառուցման կամ վերանորոգման
գծով առաջացած ծախսերը պետք է կատարվեն հիշյալ
և ոչ թե ուրիշ գերատեսչության կողմից և այս նպատա-
կով այդ աշխատանքների կատարման համար նրան
տրվում են հարկ և տուրք հետևյալ պաշտոնյաներից՝
ամեն տարի պաշտոնի նշանակման համար:

676—677 ...Միաժամանակ որոշում ենք, որ ՝ հիշյալ պաշտոնյաները պետք է անդուլ խնամածություն տածեն այն մասին, որպեսզի տները չբանդվեն հողային տուրք գանձողների կամ այլ անձանց կողմից:

...Եվ ոչ մի ջնսովացի կամ Կաֆայի քաղաքացի չի կարող և չպետք է համարձակվի շեմքից դուրս ջուր կամ աղտեղություններ թափել՝ երկյուղ ունենալով ամեն մեկից ամեն անգամ վճարել 25 ասպր տուգանք: Բացի այդ, եթե նման դործողության ժամանակ պատահաբար փշանա որևէ մեկի հագուստը կամ որևէ առարկա, ապա նրանք պարտավոր են վնասվածքի դիմաց տալ հատուցում:

679 ...Նաև որոշում ենք, որ եթե հարկ լինի որևէ հողային տուրք կապալով տալ, հիշյալ պաշտոնյաները նշված հարկերը չպետք է տան, համարձակվեն տալ կամ զիջել այլ կերպ, քան հրապարակային աճուրդով նրան, ով շատ կվճարի, իսկ բուն աճուրդը պետք է տևի 8 օրից ոչ պակաս: Նրանք իրավունք չունեն առանց պ. հյուպատոսի և Գանձատան խորհրդի զրավոր թույլտվության ընդունելու որոշումներ վաճառքի վերաբերյալ:

«ЗООИД», в. V, № 674—675, 676—677, 679:

21. Կաֆայի պ. հյուպատոսի սինդիկներին⁴³ և նրա պաշտոնյաներին ընտրության մասին:

Ձեռովա, 1449 ր.

(Քաղվածք)

679 Որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆայի պ. հյուպատոսը մասարների, Ավաղների խորհրդի, զլխավոր սինդիկների, Գանձատան խորհրդի և խնամատարության խորհրդի հետ միասին, բացի դրանից կան-

680 շէլով 12 լավ մարդկանց, այն է՝ վեց Ս ջենովական բազարացիների և վեց Կաֆայի քաղաքացիների, պարտավոր են ընտրել չորս ջենովացուն՝ երկուսը ազնվական և երկուսը ոչ-ազնվական, և այդ չորսը պետք է դրված և նշանակված համարվեն ստուգելու համար նախկին հյուպատոսի, տեղապահի և նրա մյուս պաշտոնյաների գործողությանները: Ընտրությանը պետք է կատարվի սև և սպիտակ ընտրագնդակների քվեարկությանմբ, երբ առկա կլինեն ընտրագնդակների երկու երրորդը: Այս եղանակով ընտրված ու նշանակված սինդիկները նախապես պետք է ընտրողներից հրահանգավորվեն, որ իրենց իշխանության շարաշահման համար նրանք կըստանան արժանի պատիժը:

«ЗООИД», в. V, № 679—680:

22. Խազարիայի Առևտրական կոմիտեի ընտրության մասին:

Ձեռնակ, 1449 ր.

683 Որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆայի պ. հյուպատոսը մասարների, Ավագների խորհրդի, գլխավոր սինդիկների, խնամատարության կոմիտեի և Գանձատան խորհրդի հետ միասին պարտավոր է սպիտակ և սև ընտրագնդակների քվեարկության միջոցով ընտրել չորս պաշտոնյայի՝ երկուսը Ջենովայի և երկուսը Կաֆայի քաղաքացիների, պահպանելով ազնվական և ոչ ազնվական կոչման տարբերությունը: Ընդամեն ընտրված է համարվում միայն նա, որի ընտրության ժամանակ առկա կլինեն ընտրագնդակների առնվազն երկու երրորդը: Ընտրողները ամենից առաջ պետք է երգվեն, որ ընտրելու են լավ և խղճի մտքը:

Այս եղանակով ընտրված այդ չորսը պետք է հան-

684 դիտանան և համարվեն || պաշտոնյաներ ու խաղարիայի առևտրական կոմիտե և ունեն հատուկ կանոնադրություն մը սահմանված իրավունքներ և իշխանություն:

Նրանց պաշտոնավարությունը տևում է չորս տարի: Իրենց մոտ ստացված պաշտանագրի գծով բոլոր գործերը նրանք պետք է ավարտեն իրենց պաշտոնավարության ընթացքում այն ձևով, որ պատվիրում է նրանց կանոնադրությունը:

Ընդամեն որոշում ենք, որ այսպիսի պաշտոնյաները կամ թե նրանցից որեւէ մեկը իրավունք չունի և չպիտի համարձակվեն ոչ որից պահանջել դատի ներկայանալու իրենց մոտ (սեփական գործի գծով): Իսկ եթե այդ պաշտոնյաները կամ նրանցից որեւէ մեկը ցանկանա սկսել նրանց գերատեսչությանը պատկանող գործը իր պարտապահի հետ, ապա պարտավոր են (պաշտոնյաները — Վ. Մ.) գործեր վարել, պարտապահին կանչելով մըշտական սինդիկատների մոտ, որոնք պարտավոր են դատել առևտրական և խաղարիայի կանոնադրության կանոնների համաձայն, իսկ նրանց որոշումը այդ դեպքում պետք է ունենա այնպիսի ուժ, նշանակություն, ինչպիսին որ կունենար առևտրական պաշտոնյաների որոշումը:

Նաև որոշում ենք, որ այդ գերատեսչության քարտուղարը պետք է ստանա ռոճիկ՝ վեց սոնմ Կաֆայի արծաթյա դրամով, եթե գերատեսչության կողմից կնշանակվեն բավարար չափով տուգանքներ: Այլ տեղից, գանձարանից ստանալ (ռոճիկ — Վ. Մ.) նա չի կարող:

685 Որոշում ենք նաև, որ յուրաքանչյուր Առևտրական կոմիտե պարտավոր է իր պաշտոնավարության վերջում ներկայացնելու հաշվետվություն և իր ժամանակ նշանակված տուգանքների մնացորդը հանձնել || Գանձատան խորհրդին՝ երկյուղ ունենալով իբրև պատիժ իր կողմից վճարելու տուգանքը:

Որոշում ենք նաև և հրամայում, որ ոչ Կաֆայի պ.

հյուպատոսը, ո՛չ նրա տեղապահը չեն կարող ունենդրել ոչ ոքի բողոքներին Առևտրական կոմիտեի որոշումների դեմ և այն բանից հետո, երբ կայացել է որոշումը, ոչ ոք չի կարող ոչ խնդրանքով, ոչ էլ այլ կարգով դիմել հյուպատոսին կամ տեղապահին, բայց այն ամենը, ինչը կներկայացվի նրանց, նրանք պետք է կատարեն անպայմանորեն կամ պայմանականորեն, նշված խորհրդի որոշմանը համաձայն՝ երկյուղ ունենալով յուրաքանչյուրը և ամեն անգամվա համար տուգանվելու 25 սոնմ:

«ЗООИД», №. V, էջ 683—685:

23. Ոստիկանապետի մասին:

Ձեռնվա, 1449 ր.

(Քաղվածաբար)

696 Որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆայի պ. հյուպատոսի ոստիկանապետը (cavalerio—վ. Մ.)⁴⁴ որևէ եղանակով, որպիսին կարելի է հնարել, չի կարող և չպիտի համարձակվի հյուպատոսի կողմից նրան վճարվող ռոճիկից բարձր ռոճիկ ստանալ Գանձատան խորհրդից կամ թե որևէ այլ անձից՝ համայնքի գումարի հաշվին, բացի ստորև բերված եկամուտներից. այն է՝

Որևէ հանցանքի համար ճիպոտահարած յուրաքանչյուր մարդու համար 25 ասպր.

697 Նաև կախաղան բարձրացված, զլխատված կամ այլ ձևով մահապատժի ենթարկված յուրաքանչյուր մարդու համար 50 ասպր.

Նաև նշավակված ամեն մարդու համար 30 ասպր.

Նաև մարմնապատժի ենթարկված, բայց մահապատժված յուրաքանչյուր տղամարդու կամ կնոջ հա-

մար, այսինքն որևէ մարմնանդամի խեղահատման համար 35 ասպր.

Նաև ընդունված կարգի և վաճառականների կողմից պահպանվող սովորությանը հակառակ դանդի ղողանջից հետո բռնված յուրաքանչյուր մարդու համար 12 ասպրից ոչ ավելի:

Նաև զանգի ղողանջից հետո բաց մնացած կամ լուսավորված յուրաքանչյուր գինետան համար 15—20 ասպրից ոչ ավելի, որոնք իբրև տուգանք զանձվում են գինետան պահողից:

Նաև չի կարող (ոստիկանապետը — Վ. Մ.) կրտսանքի ենթարկված մարդուց կամ համայնքից նշված տանջանքի համար, կամ համայնքից որևէ բան պահանջել, շահադիտորեն հետամտել կամ որևէ բան ստանալ:

«ЗООИД», № V, էջ 696—697:

24. Հորգուզիների հրամանատարի մասին:

Ջեմովա, 1449 թ.

699 Որոշում և օրինականացնում ենք, որ հիշյալ ք. Կաֆայում պետք է լինի հորգուզիների մեկ հրամանատար, որը իր և իր ձիու համար պետք է ստանա լավ և հուսալի (վարձատրություն — Վ. Մ.) ամսական 150 ասպր: Այդ հրամանատարը պարտավոր է հորգուզիների հետ միասին գտնվել պ. հյուպատոսի մոտ և նրա հետ միասին ամեն անգամ մեկնել, երբ նրանից կստանա հրաման:

«ЗООИД», № V, էջ 699:

Ձեռովա, 1449 ք.

- 699 Որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆայի հիշ-
 700 լալ պ. հյուսիսաստի մոտ, նրան և նրան առջնիկեր գտնու-
 լող ծառայութեանը ուղարկելու համար || պետք է լինեն
 20 լավ, ճարպիկ և հուսալի հորգուզիներ, որոնցից յու-
 րաքանչյուրն, ըստ գոյութեան ունեցող կարգի, պետք է
 ունենա ձի, վահան, թիկնոց և իր զենքը: Նրանք Կա-
 ֆայի համայնքից ստանում են վարձատրութեան՝ յուրա-
 քանչյուրը ամսական 120 ասպր, և նրանցից ոչ մեկը չի
 կարող լինել անազատ և որևէ որի հպատակը:

«ЗООИД», № V, էջ 699—700:

26. Այն մասին, որպեսզի արվարձանների բնակիչների
 նկատմամբ չգործադրվեն հալածանքներ:

Ձեռովա, 1449 ք.

Որոշում և օրինականացնում ենք, որ արվարձան-
 ներում դարպասների ղինվորական վերակացուն ոչ մի
 գործ չպիտի ունենա այդ տեղերի բնակիչների հետ և
 չպիտի համարձակվի նրանց նեղութեաններ պատճա-
 ռել, պահանջելով դրամ կամ տուրքեր, բացի զիշերային
 պահակից, որի համար այն շկատարողներից նա կարող
 է վերցնել միայն 1 ասպր:

Այդ վերակացուն իրավասու չէ նաև վերցնելու հիշ-
 լալ դարպասներով ներմուծվող առարկաներից ոչ իրեր,
 ոչ սպարեն, ոչ տան իրեղեններ, ոչ որևէ այլ բան, բացի
 վառելավառից, որը վերցվում է ձմռանը հորգուզիների
 (զորանոցը — Վ. Մ.) տաքացնելու համար: Նա էլ պար-

տավոր է որոշակի ժամերին, բացառությամբ գիշերվա,
բացել ու փակել հիշյալ դարպասները:

«ЗООИД», հ. V, էջ 702.

27. Որ ժամին պետք է զանգը խփել:

Ջենովա, 1449 թ.

Որոշում և օրինականացնում ենք, որ որպեսզի ոչ
մի կասկած չլինի այն ժամի վերաբերյալ, թե երբ պետք
է զանգը խփել. հոկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը
այն խփում է երեկոյան իսկույն ևեթ այն պահին, երբ
կլինի ժամը 2-ը⁴⁵: Տարվա մյուս ժամանակներին զանգը
խփում է ժամը երեքից հետո՝ տուգանքի սպառնալիքով
(խախտման դեպքում — Վ. Մ.), որը վերցվում է ոստի-
կանապետից: Իսկ զանգը հարվածում է առնվազն 370
անգամ:

«ЗООИД», հ. V, էջ 711:

28. Կաֆա քաղաքի զինվորական պետի⁴⁶, նրա
պարտականությունների և եկամուտների մասին:

Ջենովա, 1449 թ.

(Փաղվածաբար)

712

Ցանկանալով կարգ մտցնել և կանոններ հաստատել
Կաֆա քաղաքի զինվորական պետի պաշտոնի վերաբեր-
յալ, որոշում և հրամայում ենք, որ հիշյալ պետը կա-
րող է յուրաքանչյուր կրպակից, որ գտնվում է Կաֆա

քաղաքում բերդից դուրս պարիսպների և բերդախրամի միջև, որը (բերդախրամը — Վ. Մ.) ձգվում է մի ժամանակ Վիկենտի⁴⁷ դե Կամալիային պատկանող տնից մինչև Թովմաչի մառանիկ կոչվող նկուղը, վերցնել ամսական 1 ասպրից ոչ ավելի, որը պետք է վճարի նա, ում որ պատկանում է կրպակը:

Մառանիկների միջև ընկած յուրաքանչյուր կրպակից կարող է վերցնել կես ասպրից ոչ ավելի:

Հիշյալ պետք նաև կարող է պահանջել և 15 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձից վերցնել 18 ասպր այն բանի համար, որ նրան կալանքի տակ կառնի, եթե այդ անձը Կաֆայի անվտանգության համար կատարված զանգառվությունից հետո բռնվել է քաղաքում առանց լսպտերի, պետի բնակարանից ութ տուն այն կողմ: Այս ձևով գտնված անձին հիշյալ զինվորական պետը պարտավոր է հենց որ կլուսանա անմիջապես ներկայացնել կամ որևէ մեկի հետ ուղարկել հյուպատոսի կամ տեղապահի մոտ, որպիսի ներկայացման դիմաց նա չի կարող որևէ բան ստանալ՝ 100 ասպր տուգանվելու երկյուղով: Նման տուգանքի է ենթարկվում նա ամեն անգամ, երբ որևէ բանում կվարվի վերևում ասածին || հակառակ, մինչդեռ մեղադրողը (նրան — Վ. Մ.) կստանա տուգանքի երրորդ մասը:

Հիշյալ զինվորական պետը նաև իրավունք ունի դիշերը ժամապահելու պարտավոր յուրաքանչյուր ժամապահից կամ պահակից պահանջել և ստանալ 6 ասպր, երբ նրան կգտնի քնած:

Հիշյալ զինվորական պետը նաև իրավունք ունի պահանջել և ստանալ 12-ական ասպր յուրաքանչյուր ժամապահից կամ պահակից, որոնք նշանակված կլինեն պահակության և որոշակի ժամանակին ու ժամին չեն գտնվի իրենց տեղերում:

Հիշյալ զինվորական պետը նաև իրավունք ունի

յուրաքանչյուր իշխանատան տիրոջից վերցնել 25 ասպր, որտեղ կգտնի լույս կամ կրակ ամռանը բաղաբի անվրտանգության համար կատարված երեկոյան զանգատըվությունից հետո, իսկ ձմռանը գիշերվա ժամը 3-ից հետո, ամառային ժամանակ համարիլով մարտի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը, իսկ ձմեռայինը՝ հոկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը՝ նույնիսկ այն դեպքում, երբ լույսի և կրակի ժամանակ կգտնվեն բաղմաթիվ մարդիկ:

Հիշյալ զինվորական պետը կարող է անառակ կնոջ տանը կամ բնակարանում՝ ամռանը զանգատվությունից հետո, իսկ ձմռանը ժամը երեքից հետո լույսի կամ կրակի ժամանակ բռնված յուրաքանչյուր մարդուց ստանալ 12 ասպր, երբ տունը գտնվում է բերդից դուրս պարիսպների և բերդախրամի միջև, իսկ գինետներ պահողներից նա կարող է կանոնի խախտման համար վերցնել 25 ասպր. բայց նա այդ տներում գտնվածներից ոչինչ պահանջելու իրավունք չունի՝ երկյուղ ունենալով ամեն անդամվա համար տալ 100 ասպր տուգանք, եթե վարվի հակառակ, որին նա ենթարկվում է ինքնաբերաբար և որի երրորդ մասը տրվում է (նրան — Վ. Մ.) մեղադրողին:

Նա նաև իրավունք ունի փախած ստրուկի կամ ստրկուհու յուրաքանչյուր տիրոջից ստանալ 50 ասպրից ոչ ավելի, որոնց կգտնի ինքը կամ իր ծառայողները բուն քաղաքի պարիսպներից դուրս մեկ մղոն հեռավորության վրա:

Հիշյալ զինվորական պետը նաև կարող է և իրավունք ունի բուն քաղաքում գիշերը, նույնիսկ զանգատըվությունից հետո, բաց պահելու կամ թույլատրել բաց պահելու երկու գինետուն և նրանցում վաճառել կամ թույլ տալ վաճառելու որքան կհաճենա: Բայց բացի այդ երկու տներից, ոչ ինքը՝ զինվորական պետը, ոչ էլ մի ուրիշ անձնավորություն չի կարող բաց պահել ոչ մի գինետուն և իրավունք չունի վաճառելու գինի՝ 100 ասպր

տուգանք տալու երկյուղով, որը գանձվում է զինվորական պետից և 25 ասպր էլ, որ վճարում են զինետաներ պահողները՝ հակառակ վարվելու պարագայում:

715 Բացի այդ, քանի որ հիշյալ զինվորական պետին և պատկանում քաղաքի ամբողջականության և անվտանգության հսկողությունը և նրա զլխավոր պարտականությունն է հետևել, որպեսզի այնտեղ հրդեհ չլինի, և շնայած դրան || նախկին զինվորական պետերը, վարվելով անազնվորեն և խախտելով իրենց պարտականությունը, դրամ էին վերցնում և թույլ էին տալիս վառել լույս և կրակ, դրա համար էլ սրանով զոռշացում և օրինականացնում են, որ առանց Կաֆայի պ. հյուպատոսի անվանական թույլտվության, այսուհետև ոչ ոք չի կարող ոչ մի ձևով թույլատրել մարդկանց, ինչ դրույթյան տեր էլ լինեն նրանք, լույս վառելու իջևանատանը, նկուղում, գինետանը կամ տանը, որ գտնվում է հիշյալ քաղաքում. հակառակ վարվելու դեպքում զինվորական պետը ամեն անգամվա համար վճարելու է 2 սոնմ տուգանք: Նման տուգանքը մուտք է արվում համայնքի օգտին, իսկ նրա երրորդ մասը պատկանում է մեղադրողին:

716 ...Նաև հիշյալ զինվորական պետը չի կարող դատու դատաստան տեսնել մարդկանց նկատմամբ, ինչ կարողության տեր էլ լինեն նրանք, չի կարող միջնորդ դատավոր լինել 100 ասպր գումարը գերազանցող իրերի կամ դրամի կապակցությամբ՝ հակառակ վարվելու դեպքում || ամեն անգամվա համար վճարելով 10 սոնմ տուգանք. այդ տուգանքի երրորդ մասը պատկանում է մեղադրողին:

718 ...Բացի վերը ասվածից նաև որոշում, սահմանում և պատվիրում են, որ ոչ հիշյալ զինվորական պետը, ոչ նրա ծառայողը, ոչ էլ նրա փոխարեն որևէ մեկը չի կարող և չպիտի համարձակվի որևէ հղանակով կամ ճարպկությամբ դրամ, կամ իրեր վերցնել, կամ թե մի-

շամտել և դժվարություններ հարուցել վատ վարքի տեր, կամ այլ կնոջ, բացի հասարակաց կանանցից, որոնք հրապարակախորհն օրը ցերեկով և բացեիքաց զբաղվում են իրենց արհեստով, որոնց տունը հաճախում են որպես հասարակաց տների: Նման կանանցից նա կարող է տարեկան ստանալ մեկ թուրքական դուկատից⁴⁸ ոչ ավելի: Այս բոլորը 1000 ասպր տուգանքի պայմանով, որ գանձվում է նախկին որոշումը չկատարող զինվորական պետից, և 200 ասպր էլ, որ վճարում են (նրա — Վ. Մ.) ծառայողները ամեն անգամ, երբ զինվորական պետն ու նրա ծառայողները վարվում են հակառակ: Հիշյալ ծառայողներն իրավունք չունեն որևէ կնոջ տուն մտնելու թեկուզ և նա վաստակած լինի հասարակաց կնոջ անուն, միայն թե չլինի (օրենքով — Վ. Մ.) այդպիսին:

720 ...Բացի զրանից, որոշ հիմնավոր նկատառումներից դրդված՝ որոշում ենք, որ ոչ մի պարագայում և ոչ մի առիթով Կաֆայի քաղաքացուն թույլ չի տրվում վարելու զինվորական պետի պաշտոն⁴⁹ 200 ֆլորին⁵⁰ տուգանք տալու պայմանով, որն անհապաղ գանձվում է ամեն անգամ յուրաքանչյուր հակառակ վարվողից:

«ЗООИД», № V, № 712—718, 720:

29. Շուկայի վաճառքին հետևող վերակացուի եկամուտների և պարտականությունների մասին:

Ձևովա. 1449 ք.

(Քաղվածաբար)

720 Յանկանալով դրադվել Կաֆայում վաճառքին հետևող վերակացուի համար կանոնադրության և կանոնների մշակմամբ, որոշում, սահմանում և կանխատեսում

ենք, որ նա կարող է գանձել և ստանալ ներքոհիշյալ քանակութիւնը հետեւյալ առարկաներից, այն է՝

քառանիւ մմեն մի սալլ որեւիցե կանաչու համար՝
7 ասպր.

նաւ՝ քառանիւ մմեն մի սալլ ձմերուկի համար՝
10 ասպր.

նաւ՝ քառանիւ մմեն մի սալլ վարունգի համար՝ ~
18 ասպր.

նաւ՝ որեւիցե բարկայով, ալսինքն՝ մեծ կամ փոքր սախարով⁵¹ վարունգի համար 45 ասպր.

նաւ՝ քառանիւ մմեն մի սալլ սեխի համար՝
3 ասպր.

721

նաւ՝ մմեն մի քառանիւ կամ երկանիւ սալլակ շագանակի համար՝ 15 ասպր, իսկ քառանիւ սալլ շագանակի համար՝ 30 ասպր.

...նաւ՝ մսի կրպակ ունեցող յուրաքանչյուր մսավաճառից՝ մմեն մի շաբաթվա համար՝ 6 ասպր.

նաւ՝ ցերեկը⁵² վաճառվող մմեն մի բարկա ոստրեի համար՝ 3 ասպր.

նաւ՝ մեծ պասին վաճառվող մմեն մի բարկա ոստրեի համար՝ 4 ասպր.

նաւ՝ մմեն մի զինեկավաճառից, յուրաքանչյուր 3 ամիսը մեկ՝ 1 ասպր.

նաւ՝ մմեն մի հացավաճառից, յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ 12 ասպր.

նաւ՝ մմեն մի սալլակ մրցեղենի համար՝ 2 ասպր.

նաւ՝ մմեն մի սալլակ սոխի համար՝ 10 ասպր.

նաւ՝ մմեն մի սալլակ կաղամբի համար՝ 9 ասպր.

722

... նաւ՝ մմեն մի սալլակ խաղողի համար՝ 2 ասպր.

նաւ՝ մմեն մի բարկա տափակաձկան համար՝
16 ասպր.

նաւ՝ մմեն մի սախար տափակաձկան համար՝
28 ասպր.

նաև՝ ամեն մի բարկա մուղարի⁵³ համար՝ 20 ասպր.
նաև՝ ամեն մի բարկա ստերլեդի⁵⁴ համար՝
28 ասպր.

Ընդամին, որոշում ենք, որ նշված վերակացուն կամ
թե նրա փոխարեն որևէ մեկը իրավունք չունի և չպետք
է համարձակվի որևէ պատրվակով, ուղղակի թե անուղ-
ղակի կերպով դանձել կամ ստանալ [դրամ], բացի
վերը ցույց տրված ու նշանակված քանակի դրամից՝
երկյուղ ունենալով ամեն անգամվա (խախտման — Վ. Մ.)
համար վճարել 50—500 ասպր տուգանք, որը դանձում
են սինդիկները՝ իրենց հալեցողությանը:

723 Քանի որ դարձել է հիմար սովորություն և շարաշա-
հություն, որ եկեղեցու նշանակած օրերին հիշյալ վերա-
կացուն թույլ է տալիս խանութպաններին, այսինքն
նրանց միջից նրանց, ովքեր փող են տալիս (վերակա-
ցուին — Վ. Մ.), կրպակները բաց պահել, որը դտնում
ենք անպարկեշտ և քրիստոնեական հավատը ստորաց-
նող, որոշում և հրամայում ենք, որպեսզի նա այսու-
հետև շահամարձակվի թույլ տալ հիշյալ խանութպաննե-
րին կամ թե նրանցից որևէ մեկին կրպակները բաց պա-
հելու հիշյալ տոներին՝ երկյուղ ունենալով յուրաքան-
չյուրից և ամեն անգամվա համար վճարելու 100 ասպր
տուգանք, որը կնիքակա է սինդիկների դանձմանը և որի
երրորդ մասը պատկանում է մեղադրողին: Սակայն սե-
փական տանը կարելի է աշխատել որքան ցանկալի է:

«ЗООИД», №. V, № 720—723:

30. Համայնքի զինամթերքների պահպանման մասին:

Ձեռովա, 1449 ր.

723 Որոշում և հրամայում ենք, որ համայնքի զինամթերք-
ներն ու զենքերը պետք է պահվեն համայնքի զինանո-

ցում, որը պետք է կողպվի երեք բանալիներ ունեցող երեք կողպեքներով: Դրանցից մեկը իր մոտ պետք է և՛ պահի հիշյալ զինանոցի վերակացուն, իսկ մնացած երկուսը՝ կաֆացի երկու քաղաքացիներ, որոնք պետք է ամեն տարի ընտրվեն ազնվականներից և ոչ ազնվականներից՝ պ. հյուպատոսի, մասսարների և ավագների կողմից: Վերակացուն պետք է ստանա ռոճիկ զանձատան գումարներից, ամսական հարյուր տոպր. և նշված ձևով ընտրված հիշյալ երկու քաղաքացիների հետ միասին ամեն տարի պարտավոր է կազմել հիշյալ զինանոցի իրերի ցուցակը և այն հանձնել քաղաքացիներից նոր ընտրված պաշտոնյաներին: Երկու պետերն ու վերակացուն ոչ բացահայտորեն և ոչ էլ զաղտնի կերպով ոչինչ իրավունք չունեն վերցնելու նշված զինամթերքներից և չեն կարող դրանք տալ ոչ ոքի՝ առանց դրանց զրավոր ձեակերպման՝ ստորագրված և կնքված պ. հյուպատոսի և մասսարների կողմից՝ երկյուղ ունենալով, որպես պատիժ վճարելու սեփական դրամով: Միաժամանակ որոշում ենք, որպեսզի այն վեները, որը ամեն տարի պարտավոր են տալ հյուպատոսն ու մյուս աստիճանավորները, զասավորվի և տեղադրվի Ստանտալիս⁵⁵ աշտարակում, որը նույնպես պետք է փակվի երեք բանալիներով և այդ բանալիները պետք է պահվեն այն նույն անձանց մոտ, որոնք ունեն զինանոցի բանալիները: Իսկ հիշյալ աշտարակի և Սուրբ Անտոն աշտարակի բանալին պետք է գտնվի ոչ թե հյուպատոսական ոստիկանի կամ ուրիշ պաշտոնյայի, այլ հենց իր՝ հյուպատոսի մոտ:

«ЗООИД», № V, էջ 723—724:

31. Այն մասին, որ ջենովացի ոչ մի վաճառական չի կարող
մի որոշ ժամանակ ոչ մի բան վաճառել, ոչ մի իշխանի կամ
սեփական վասալի:

Ջենովա, 1449 թ.

Որոշում և խստիվ հրամայում ենք, որպեսզի ոչ մի
վաճառական և ջենովացիներին ոչ ոք չհամարձակվի և
չմտածի ոչ գնել, ոչ էլ վաճառել իրեր և ապրանքներ ոչ
մի տիրակալ իշխանի կամ վասալի⁵⁶, կամ վաճառա-
կանի՝ ամբողջ խաղարիայի թաղավորության մեջ և Սև
ծովում, որպեսզի չհամարձակվի նաև փոխառություն
տալ հիշյալ տիրակալ իշխաններին, վասալներին և վա-
ճառականներին, չկնքել նրանց հետ պայմաններ, որոնք
նրանց կպարտավորեցնեն ջենովացիներին վերաբերող
որևէ բանում: Իսկ եթե որևէ ոք վարվի հակառակ, ապա
նրա խնդրանքը դրամ պահանջելու կամ պայմանները
պահպանելու վերաբերյալ չի հարգվի Ջենովայի հա-
մայնքի ոչ մի անդամի կողմից՝ ոչ այժմ, ոչ ապագա-
յում:

«300111», ff. V, l. 2 725:

32. Այն մասին, որպեսզի օտարերկրյա ապրանքները
չուղարկվեն ջենովականի անվան տակ⁵⁷:

Ջենովա, 1449 թ.

726 Որոշում և հրամայում ենք, որպեսզի ոչ մի վա-
727 ճառական և ջենովացիներին ոչ ոք չհամարձակվի և
չմտածի իր անվամբ գրելու դրսից եկած վաճառականին
կամ օտարերկրացուն պատկանող իրերը, կամ ապրանք-
ները, կամ դրանք ջենովականի անվան տակ ուղարկելու

ջենովական համայնքին Կաֆայում, ամբողջ խաղարիայի թագավորության մեջ և Սև ծովում՝ 25-ից մինչև 100 սոնմ տուղանքի ենթարկվելու սպառնալիքով, որ գանձվում է անմիջապես Կաֆայում ու. հյուպատոսի և նրա խորհրդի վճռով՝ հակառակ վարվող ամեն մի ոքից և յուրաքանչյուր անգամվա համար. դրա երրորդ մասը պատկանում է մեղադրողին, երրորդ մասը՝ համայնքին, իսկ մնացածը՝ խնամատարության կոմիտեին...

«ЗООФИД», № V. էջ 726—627:

33. Այն մասին, թե ինչպես պետք է ընտրել դեսպաններ Կաֆայի համայնքից:

Ձեռովա, 1449 թ.

728 Եթե պատահի այնպես, որ կցանկանան Կաֆայում ընտրել կամ նշանակել ղեկավարներ, ապա նման ղեկավարությունը կամ ղեկավարը, կամ ղեկավարները չեն կարող ընտրված լինել առանց Կաֆայի ու. հյուպատոսի, ևկագների խորհրդի, խնամատարության և Առևտրական կոմիտեների, մասարների և Գանձատան խորհրդի թույլտվության, և բացի այդ, 16 անձինք (8 ջենովացիներ և 8 Կաֆայի քաղաքացիներ պահպանելով դասային տարբերությունը)... ընտրում են ձայների երկու երրորդով (ղեկավարներին կամ ղեկավարությունը —Վ. Մ.):

Երբ այս եղանակով կընտրվի ղեկավարություն, նրա անհրաժեշտ ծախսերը պետք է սահմանվեն և որոշվեն հիշյալ ղեկավարի ընտրությունից առաջ: Իսկ եթե հիշյալ ընտրությունը չի կատարվի վերը նշված կարգով, ապա նրան մասնակցություն ունեցած հյուպատոսը ենթարկվում է տույժի՝ սեփական դրամով վճարելու նշված ղեկավարության ծախսերը, բայց միայն այն քաջառու-

լլամբ, որ, ընայած նախորդ որոշմանը, Կաֆայի քաղաքացիները միշտ կարող են դեսպանութիւն ուղարկել Ջենովա ալ կարգով, այն ընտրելով իրենց միջից և ուղարկելով իրենց հաշվին, և հյուպատոսը այն չի կարող արգելել կամ խանգարել նրան՝ ॥ սինդիկների կողմից տույժի ենթարկվելու սպառնալիքով: Նման դեսպանութիւնը կարող են ընտրել իրենք քաղաքացիները (իմա կաֆացիները —Վ. Մ.) իրենց ցանկացած կարգով: Ընդամին որոշում ենք, որ հյուպատոսը չի կարող միջամտել քաղաքացիների կողմից ուղարկվող դեսպանութիւն հրահանգվորմանը կամ խնդրին՝ 50-ից մինչև 100 սոնմ տուգանք տալու երկյուղով:

Նույնպէս որոշում ենք, որ հիշյալ համայնքի կողմից որևէ դեպքի առիթով ուղարկվող նման դեսպանը ոչ մի ձևով և ոչ մի պատրվակով չպետք է համարձակվի և մտածի իր հետ տեղափոխելու որևէ ապրանք իր դեսպանութիւն ժամանակ, առևտուր անելու, իր հետ ուղեկից ընկեր վերցնելու որևէ ոքի, որը իր հետ տանում է որևէ ապրանք կամ ունի առևտուր անելու նպատակ՝ յուրաքանչյուր հակառակ վարվողից և յուրաքանչյուր անգամ վերցնելով 100 սոնմ տուգանք Կաֆայի արծաթյա դրամով, որը մուտք է արվում Կաֆայի դանձատուն և որը դանձվում է պ. հյուպատոսի, մասարների և Գանձատան խորհրդի կողմից՝ երդման և սինդիկների վճռով տուգանվելու երկյուղի տակ: Այդ տուգանքի երրորդ մասը մնում է մեղադրողին:

«300H.I», 6. V, էջ 728—729:

34. Կաֆայի եպիսկոպոսի կողմից հուլների, հաշերի, հրեաների և մշուս աշխարհների նկատմամբ գործադրվող հալածանքների վերացման մասին⁵⁸:

Ձեռովա, 1449 թ.

730 Քանի որ Կաֆա բաղաբի եպիսկոպոսը, ասում են, երբեմն անհանդստացնում է աշխարհայիններին, նեղում և կողոպտում է նրանց, որ կարող է պատճառ դառնալ բնակչության նվազեցմանը բաղաբում և արվարձաններում և ծառայել Կաֆային բացահայտորեն վտանգելու և վնասելու օգտին, ապա ջանադրաբար քննելով գործը և հետևելով հին ալլ որոշման ձևին, որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆա բաղաբի ներկայիս և ապագա բոլոր եպիսկոպոսները չստորագրեն օտար թիմի պատկանող գործեր և ոտնձգություն չանեն ուրիշ ժողովրդի հունձրի վրա, այլ բավարարվեն իրենց քրիստոնյաների կառավարմամբ և նրանց հաստատմամբ բարի գործերում և արդարության մեջ: Իսկ եթե հիշյալ եպիսկոպոսը և կամ նրա հաջորդներից որեւէ մեկը չցանկանա ունկրդրել հյուպատոսի խնդրանքներին ու որոշումներին, ապա պարոն || հյուպատոսը և Ավագների խորհուրդը պարտավոր են հոգ տանել քննելու, որոշելու և իրենց հայեցողությամբ ձև ու միջոց ընդունելու, որպեսզի նըշված եպիսկոպոսին վերջնականապես շեղեն նման չարաշահումներից և որպեսզի հիշյալ հույները, հայերը, հրեաներն ու մշուս աշխարհայինները վտանգավերժվեն ամեն տեսակի կողոպուտից, ոտնձգությունից իրենց կալվածքի (թեմի — Վ. Մ.) նկատմամբ, երբ որեւէ մարդ կմահանա առանց կտակ թողնելու, և նշված եպիսկոպոսի պատճառած ալլ նեղություններից:

Հյուպատոսի և խորհրդի ընդունած որոշումներն ու սահմանումները պետք է պահպանվեն ճշտորեն և անշեղ կերպով, իսկ եթե ալլնալես պատահի, որ պարոն

Հյուպատոսն ու խորհուրդը նման դեպքերում վարվեն ծուլորեն և սխալ կերպով, ասպ պետք է սինդիկների վճռով ենթարկվեն տույժի:

«ЗООИД», 6. V, էջ 730—731:

35. Այն մասին, որպեսզի Կաֆայի բնակիչներին չվաճառեն անազատներին⁵⁹ փոխարեն:

Ձեռովա, 1449 ք.

(Քաղվածք)

Որոշում և հրամայում ենք, որ ոչ ոք, որպիսի դասի, կոշման, աստիճանի էլ լինի նա, ջենովացի թե հավասարապես նաև օտարերկրացի, չի կարող և չպիտի համարձակվի հրապարակայնորեն կամ զաղտնարար, Կաֆա քաղաքում կամ նրա արվարձաններում, գնել ինքը կամ ուրիշների միջոցով տղամարդկանց կամ կանանց Կաֆայի բնակիչներից՝ ինչպիսին էլ լինի նրանց տոհմը կամ ծագումը, որոնք վաճառում են իրենց կամ վաճառվում ուրիշների կողմից՝ երկյուղ կրելով իբրև պատիժ կորցնելու այն ամենը, ինչ վճարում է այդպիսի տղամարդու կամ կնոջ համար, կամ ինչ որ խոստացել է վճարել. բացի դրանից նման առքը համարվում է տեղի շունեցած և անկարևոր, և ոչ մաքսահավաքը⁶⁰, ոչ էլ մեկ այլ ոք չի կարող և չպետք է նման վաճառքից մաքս վերցնեն կամ հաստատեն նման առևտուրը կամ տան կանխավճար⁶¹ կամ որևէ այլ ձևով միջամտեն դրան՝ հակառակ վարվող ամեն ոք յուրաքանչյուր անգամվա համար տուգանվում է 100 ասպր կաֆայական արծաթյա դրամով:

«ЗООИД», 6. V, էջ 738:

36. Թաղարձների հետ Կաֆայի քաղաքացիների
հարաբերությունների դադարեցումն վերաբերյալ:

Ձեռնվա. 1449 ր.

739 Եկատի ունենալով, որ թաթար խանի և նրա հպա-
տակների ու վասալների հետ Կաֆայի քաղաքացիների
կամ նրանց մի մասի ունեցած եղբայրական բարեկա-
մություն և կապերի հետևանքով առաջ են գալիս մեծ
վնաս և կորուստ Կաֆա քաղաքին և ջենովական հա-
մայնքին, հատկապես այն պատճառով, որ հիշյալ քա-
ղաքացիները, ստանալով նվերներ և այլ օգուտներ հիշ-
յալ խանից ու նրա հպատակներից, թաթարներին են
հաղորդում բոլոր պաշտնիքները, մենք, ցանկանալով
դրա դեմ ընդունել բոլոր հնարավոր միջոցները և վերջ
դնել այդօրինակ վնասակար կապերին, որոշում, սահ-
մանում և հաստատում ենք, որպեսզի երկսեռ բնակիչ-
ներին ոչ ոք, ինչ կոչում էլ նա ունենա, չպիտի համար-
ձակվի այսուհետև ոչ ինքը, ոչ էլ ուրիշների միջո-
ցով ॥ ոչ մի նվեր, իր կամ իրեր վերցնել թաթար խանից
740 կամ թե նրա հպատակ որևէ թաթարից: Բացի այդ, ոչ
մի քաղաքացի և ոչ այլ ոք, որ գտնվում է կամ ապ-
րում է կամ իր տունը ունի Կաֆայի բերդում (իմա պա-
րիսպներից ներս — Վ. Մ.), չպիտի այսուհետև համար-
ձակվի ինքը կամ ուրիշների միջոցով բնակարան տրա-
մադրել կամ իր տանը կամ հյուրանոցում ընդունել խա-
նի հպատակ կամ ոչ հպատակ թաթարին՝ յուրաքանչյու-
րը երկչուղ կրելով մուծելու 25-ից մինչև 100 սոնմ տու-
գանք, որը զանձվում է ներկա և ապագա հյուպատոս-
ների և զանձատան պաշտոնյաների վճռով: Այդպիսի
տուգանքի կեսը պատկանում է մեղադրողին, որի անու-
նը հարկ է պահել դադանի, իսկ մյուս կեսը՝ համայն-
քին, որի օգտին էլ վերցվում է տվյալ նվերը:

Բացի այդ, որոշում ենք, որ ոչ մի քաղաքացի
չհամարձակվի քաղաքում կամ քաղաքից դուրս խոսակ-

ցության մեջ մտնելու հիշյալ թաթարների՝ Կաֆա ժամանող ղեսպանների հետ, բանի դեռ հիշյալ ղեսպանները չեն բանակցել Կաֆայի հյուպատոսի հետ, բացառութեամբ երբ կստանա թույլտվություն հյուպատոսից կամ ավագներից՝ 25-ից մինչև 50 սոնմ տուգանքի ենթարկելու երկուդով, որ նշանակվում է Կաֆայի մշտական սինդիկների կողմից:

«ЗООИД», №. V, էջ 739—740:

37. Այն մասին, որպեսզի ոչ ոք չմիջամտի կանլլուկներին⁶²
կողմից կատարվող մաքսահաւաքին:

Ձեռովա, 1449 թ.

Որոշում և հրամայում ենք, որպեսզի ջենովացիներին և Կաֆայի բնակիչներից ոչ ոք, որ ազգին էլ պատկանելիս լինի, չպիտի համարձակվի ուղղակի կամ անուղղակի կերպով, բացահայտորեն կամ զաղտնարար մասնակցելու կանլլուկների կամ նրանցից որևէ մեկի կողմից կատարվող մաքսի⁶³ հավաքմանը, չպիտի համարձակվի ոչ դրանք (մաքսերը —Վ. Մ.) կապալով վերցնելու, ոչ էլ ուղղակի կամ անուղղակի կերպով դրանց մասնակցելու, ինչպես նաև հարաբերութունների մեջ մտնելու նրանց մաքսային պաշտոնյաների հետ, նրանց ուղղակի կերպով կամ ուրիշների միջոցով որոշակի ժամկետով վաճառելով ապրանք. 50-ից մինչև 200 սոնմ տուգանք է վճարելու յուրաքանչյուրը, ով կապալով կվերցնի մաքսերը կամ դրանցից (մաքսերից —Վ. Մ.) որևէ մեկը, կամ եթե կմասնակցի դրանց: Իսկ եթե որևէ ոք կվաճառի որևէ բան մաքսային պաշտոնյաներին որոշակի ժամկետով, ապա որպես պատիժ կգրկվի ամբողջ վաճառված ապրանքից, որի արժեքի մեկ երրորդը կըստանա մեղադրողը, իսկ երկու երրորդը՝ համայնքը: Բա-

ցի այդ, Լիլի որեւէ մեկը կիսախտի վերը սահմանված կանոնները, ապա Կաֆայի պ. հյուպատոսը, տուգանվելու հրկյուղի տակ, պարտավոր է այդպիսի խանգարողին կապված և կալանդված ուղարկել Կաֆա, ուր նա կստանա իր արժանի պատիժը:

«ЗООИД», № V, էջ 741:

ՅՏ. Այն մասին, որ պ. հյուպատոսին և Ավագների խորհրդին արգելվում է միջամտել դատական վճիռներին:

Ձեռնվա. 1449 ք.

748 Ցանկանալով հնարավորին չափ հոգ տանել այն մասին, որպեսզի օրենքն ու արդարադատությունը ամենուրեք ունենան ղորություն և մեծ փայլ, և վերացվի դրանց միջամտելու ու խոչընդոտելու ամեն մի առիթ, որոշում, սահմանում և հաստատում ենք, որ Կաֆայի պ. հյուպատոսը, մասսարների և Ավագների խորհրդի հետ միասին, չհամարձակվեն և չմտածեն ոչ մի շափով միջամտել ընդունված որեւիցէ որոշման, տեղի ունեցող պրոցեսներին (դատական — Վ. Մ.) կամ գործողություններին, որ կատարվել են իր՝ հյուպատոսի, նրա տեղապահի և Կաֆայի մյուս պաշտոնյաների կամ միջնորդ դատավորների կողմից քաղաքացիական և քրեական գործերի գծով:

Բայց հյուպատոսն ինքը իր տեղապահի հետ միասին կարող է, շնայած վերոգրյալ որոշմանը, դատել և վճռել քաղաքացիական ու քրեական գործեր՝ հիմք ունենալով իրենց պաշտոնին շնորհված իրավունքները:

Վերոհիշյալ կանոնից առանձին բացառություններ թույլատրվում է կատարել միայն բոլոր այն դեպքերում և շարունակ, երբ հյուպատոսին, մասսարներին ու Ավագների խորհրդին, խնամատարություն կամ փախուստի հետ միա-

սին, ակնհայտ կթվա կամ եթե նրանք կիմանան, որ Զենովայի կամ Կաֆայի քաղաքացիներինց որեւէ մեկին վիրավորանք է հասցւել կամ բռնություն է կատարւել, այն ժամանակ, երբ հարկ էր նրանց (տուժած քաղաքացիներին — Վ. Մ.) ցույց տալ և արգարադատություն բուր տեսակի այն գործերում, որոնց կապակցութեամբ որեւէ ժամանակ կտրվի բողոքարկվող խնդրագիր խաբետոյան, կեղծիքի և կաշառքի վերաբերյալ, որի պատճառով արգարադատությունը դատավիճող կողմերից մեկի նկատմամբ, հշուպատուսի, մասարների, խորհրդի և հնամատարութեան կոմիտեի կարծիքով կամ նրանց հասած տեղեկութեանների համաձայն, կթվա խախտւած և դատավիճող կողմերից մեկը իր առավել զօրեղ հակառակորդի կողմից անարգարացիորեն ձնշված, — բոլոր այդ դեպքերում և նրանցից յուրաքանչյուրի ժամանակ հիշյալ պ. հշուպատուսը, խորհուրդը և հնամատարութեան կոմիտեն կարող են և իրավասու են լսել հակառակ կողմին կամ առնվազն, նրան օրինական ձեռք կանչելով դատարան, որպիսի կանչի մասին կնշվի դրասենյակի գործերում, ընդունել իրենց միջոցները և հոգ տանել այն մասին, որպիսի անարգարութեանը շտկվի և արգարադատութեանը, ինչպէս հարկն է, վերականգնվի: Նման դեպքերում, նախապես սե ու սպիտակ ընտրագնդակների քվեարկութեամբ, նրանք պետք է որոշեն, թե կարո՞ղ են արդոք, թե՞ չեն կարող միջամտել գործին կամ դատավիճին, որոնց կապակցութեամբ կտրվի խնդրագիր կամ կներկայացվի բողոք, և եթե ի հայտ գան հաստատող 11 ընտրագնդակներ՝ տրված հիշյալ պաշտոնյաների կողմից, որոնք գումարվել են նիստի իրենց լրիվ կազմով, ապա նրանք իրավունք ունեն և կարող են վերևում նշված չորս դեպքերում միջամտել և գործը որոշել ըստ իրենց հայեցողութեան: Իսկ եթե, ընդհակառակը, ի հայտ գան 11 րացասական ընտրագնդակներ, ապա խնդրանքն ու բողոքը համարվում են մերժված և հետո երբեք և չեն

ընդունվի: Բայց եթե դրանք քվեարկությամբ ոչ ընդունվեն, ոչ էլ մերժվեն, ապա այդպիսի պարագայում դերվում են երկրորդ քննարկման ու քվեարկման և դա կատարվում է միայն մինչև երեք անգամ, որից հետո, եթե չեն ընդունվի, ապա համարվում են մերժված և հետագայում երբեք դրանց մասին չի կարող բողոք լինել:

«ЗООИД», և. V, էջ 748—750: ~

39. Այն մասին, որ Կաֆայի քաղաքացիներից չի կարելի ձգանակել հավատարմատար Կաֆայի տահմաններից դուրս:

Ձեռնվա, 1449 ր.

Որոշում և հրամայում ենք, որ Կաֆայի քաղաքացիների համար, Կաֆայի սահմաններից դուրս, չի կարելի տալ կամ նշանակել հավատարմատար, ընդհակառակը, հայցվորները պետք է դիմեն այն տեղը, ուր դատվում է պատասխանողը⁶⁴:

«ЗООИД», և. V, էջ 751:

40. Ցամաքում գրավված ավարի մասին:

Ձեռնվա, 1449 ր.

357 Եթե կպատահի, որ կազակ⁶⁵ օրգուզիների կամ Կաֆայի մարդկանց կողմից ցամաքում գրավվի որևէ ավար՝ որը բաղկացած է որևէ թաթարի պատկանող իրերից, անասուններից և եղներից, որոշում և հրամայում ենք, որպեսզի ոչ Կաֆայի հյուպատոսը, ոչ քաղաքային դարպասների պահակը, ոչ Կաֆայի պաշտոնյաները, ոչ էլ որևէ այլ ուժ՝ ինչ կոչման էլ լինի նա, չհամարձակվի և չմտածի վերցնելու այդ ավարի կամ անասունների մի մասը. ընդհակառակը, այդպիսի ավարը պետք է լինի անձեռնմխելի և նրանք, ովքեր այն վերց-

րել կամ բռնել են, նրա նկատմամբ ունեն լրիվ իրա-
 758 վունք, և Կաֆայի պ. հյուպատոսը պետք է այդպիսի
 կազակ օրդուզիներին և բոլոր բռնողներին || պաշտպա-
 նի, նրանց ցույց տա օգնություն և հովանավորություն:
 Իսկ եթե Կաֆայի որևէ հյուպատոս, պաշտոնյա կամ
 ուրիշ այլ ոք [ավարը] բռնողներին վերցնի կամ բռնի
 [ավարը], ապա կենթարկվի տուգանքի, որը հավասար
 է իր կողմից նրանցից վերցրածի կրկնակի գնին:

«300ИД», № V, էջ 757—758:

41. Կոտակակատարների մատյանների ստուգման համար
 չորս ծառայողներ ընտրելու մասին:

Ձեռովա, 1449 թ.

762 Որոշում և հրամայում ենք, որ ամեն տարի հուն-
 վարի 1-ին Կաֆայի հյուպատոսին, Ավագների խորհրդին
 և գլխավոր սինդիկներին թույլ է տրվում արդար և ազ-
 նիվ մարդկանցից ընտրել և նշանակել չորս ծառայողի՝
 երկուսը ջննովացի, իսկ երկուսը Կաֆայի քաղաքացի՝
 ճշգրիտ և հանգամանորեն ստուգելու համար բոլոր
 կոտակակատարների ու հանդուցյալների վերջին կամքը
 կատարողների մատյաններն ու դրքերը, որպեսզի իմաց-
 վի, թե նրանք կատարում են արդյոք իրենց վրա դրված
 պարտականությունները լավ, օրինական, արդարացի
 կերպով և կոտակատուների կամքի համաձայն: Այսպիսի
 որոշումը վերաբերում է Կաֆայում մահացած լատինա-
 ցիներին, հույներին և հայերին. այդ նույն չորս ծառա-
 763 յողները պիտի հետևեն, որպեսզի հիշյալ կոտակակա-
 տարները տնօրինեն, կարգավորեն և բաժանեն ըստ
 կոտակատուների կամքի՝ || երկուսը կրելով իբրև պատիժ
 վճարելու սեփական դրամով այն, ինչը կբաժանեն հան-
 դուցյալների կամքին հակառակ:

«300ИД», № V, էջ 762—763:

42. Այն մասին, որպեսզի հարյուրապետները⁶⁶ տարբեր շագգերից ոչինչ չհավաքեն Կաֆա քաղաքի զինվորական պետի օգտին՝ նրան նվեր տալու նպատակով:

Ջենովա, 1449 թ.

Որոշում և հրամայում ենք, որ ոչ մի հարյուրապետ ոչինչ չի կարող հավաքել կամ մարդկանց վրա կոնտրիբուցիա բարդել, ինչ ազդի էլ նրանք պատկանելիս լինեն, Կաֆա քաղաքի զինվորական պետի և մյուս պաշտոնյաների օգտին կամ նրանց նվեր տալու նպատակով՝ երկյուղ կրելով տուգանվելու 100-ից մինչև 1000 ասպր, որի երրորդ մասը պատկանում է մեղադրողին:

«30011D», հ. V, էջ 763:

43. Այն մասին, որ կանլյուկների տուրունը⁶⁷ չմիջամտի Կաֆայի բնակիչների գործերին:

Ջենովա, 1449 թ.

Որոշում և հրամայում ենք, որպեսզի տուրունը կամ կանլյուկների պետը չհամարձակվի կամ չմտածի միջամտել Կաֆայի բնակիչների գործերին, երբ նրանք մեկ տարվա ընթացքում իրենց ընտանիքներով մնացել կամ ապրել են քաղաքում, որովհետև այդ ժամանակ նրանք պետք է համարվեն ջենովացիներ և ոչ թե կանլյուկներ և նրանց դատել պարտավոր են Կաֆայի պ. հյուպատոսը կամ նրա վիկարն ու դատավորները, որոնց վերապահությունը դա պատկանում է:

«30011D», հ. V, էջ 763:

V

44. Սր. Գևորգ բանկի⁶⁸ խնամատարները ծանուցում են
Կաֆայի հույ և հույն համայնքներին և նրանց
կախկոպոսներին, թե իրենց նստատեղն է ամեն
կերպ բարելավել գաղութի վիճակը:

Ձեռովա, 1455 թ., 13 մարտի

...Ի Քրիստոսն մեր սիրելիներին, տեր եպիսկոպոս-
սին և Կաֆայի հայկական համայնքին, հարգարժան
հայր և մեր սիրելիներ. հույս ունեմ աստծո ամենակա-
րողության վրա, որ նախքան այս նամակի տրանալը,
դուք արդեն տեսել եք մեր հոգատարությանը և [այն].
Խն որքան շատ ենք մենք առաջնորդվել ձեր բարո-
թյամբ և պաշտպանությամբ և այս քաղաքի պաշտ-
պանությամբ: Ուստի մենք չենք հոգնեցնի, ավելի շատ
դրելով մեր նպատակների մասին: Այդ պատճառով,
աստվածային բարեպաշտ միջնորդությամբ, կշարունա-
կենք հետևել և նպատակ լուրին, որպեսզի այն [Կա-
ֆան — Վ. Մ.] բարգավաճի և դառնա առավել լավ
[քաղաք]:

Հայտնում ենք, որ աստվածային բարեպաշտ միջ-
նորդությամբ մեր ամբողջ նպատակն է, որպեսզի այդ
քաղաքը շարունակի մնալ իբրև ամենանշանավոր և

Հայտնի Կաֆա քաղաք: Հետեաբար, մնացեք հաստատակամ և միք խնայի ձեր ուժերը, ինչպես լավ սերմնացանները, որոնք ուժ ու եռանդ չեն խնայում լավ պտուղներ ստանալու հույսով, ապագայի հույսով: Աստծո շնորհով գրված է 13 մարտի 1455 թ.:

«Atti», VI, էջ 296:

45. Վարձկան զորքերի⁶⁹ հրամանատար Զիովաննի Պիչինինոյի զեկույցից Կաֆայում պաշտպանական ամրությունների վերանորոգման մասին:

Կաֆա, 1455 թ., 8 հունիսի

(Քաղվածք)

Հարգելի և ազնվափայլ խնամատարներին... ազնվափայլ և գերապատիվ տյարք: Հայտնում եմ ձեր գրաստիցանը, որ ես (Զիովաննի Պիչինինոս, վարձկան զորքերի հրամանատարը Կաֆայում — Վ. Մ.) ազնվափայլ պարոն Դամիանո դե Լեոնեի հետ բարեհաջող հասել եմ Կաֆա և տեսնելով տեղանքի (հողային տարածության — Վ. Մ.) լիճակը, զբաղվել եմ այն հատվածների ամրացմամբ, որոնք ինձ թվացել են առավել անհրաժեշտ. այնպես, ինչպես իմ այլ գործերի միջոցով դուք այդ [արդեն] տեսել եք, և դրանք (ամրությունները վերանորոգելու գործերը — Վ. Մ.) արժանացել են ոչ միայն տեղի բնակիչ լատինացիների, այլև հույների և հայերի հավանությունը...

«Atti», VI, էջ 310:

46. Կաֆայի հայերի նամակը Սբ. Գևորգ բանկի
խնամատարներին Նիկիոյոզո Բոնալենտուրային կրկին
բաղաճի շուկայի և նրա արվարձանների վրա վերականգնու
նշանակելու մասին⁷⁰:

Կաֆա. 1455 թ., 6 օգոստոսի

351

Սբ. Գևորգի վարչության ազնվափայլ և ամենակա-
րող տեր խնամատարներին, Կաֆայի և ամբողջ Մեծ ծո-
վի (Սև ծովի—Վ. Մ.) տերերին, ինչպես և Կաղարիայի
տիրակալ ջենովացիներին.

Ազնվափայլ և ամենակարող տերեր. ուզում ենք հա-
վատացած լինել, որ ձեր տիրապետության մեջ անցյա-
լում շուկաներում և ձեր այս քաղաքին ենթակա արվար-
ձաններում տեղի ունեցած շատ հափշտակությունների,
վատ և անգործունյա կառավարիչների պատճառով,
նախկինում չեն հայտնաբերվել, որի հետևանքով խեղճ
առևտրականները մեծ վնասներ են կրել: Մինչդեռ այժմ,
հունվարից սկսած մինչև այսօր, շուկաներն ու արվար-
ձանները գտնվում են մեծ ասպահովության մեջ և դերծ
են ամեն տեսակի վնասներից: Դա բացատրվում է Նի-
կիոյոզո Բոնալենտուրայի գիշեր ու ցերեկ ցուցաբերած
հոգատար և ուշադիր հսկողությամբ, որն այս ամբողջ
ժամանակամիջոցում, մեր մեծ խնդրանքների և հարգու-
րանքների շնորհիվ, ի բարեբախտություն մեզ, հանդի-
սանում է շուկայի վերականգնու: Քանի որ անցյալ տար-
վանից մեր այս քաղաքը շրջապատված է թուրքերով ու
թաթարներով, նա մի հիսուն կամ ամենաշատը վախժուն
մարդկանցով, հացն ու դինին էլ իր հաշվին, աներևա-
կայելի հսկողություն է սահմանել, լինի դա գիշերը թե
ցերեկը, քաղաքի այն մասերում, որտեղ դրա կարիքն
զգացվում է:

Այդ ամենից հետո այժմ ձեր ազնվափայլ տիրա-
պետությունը ընտրել և մեզ մոտ է ուղարկել արվար-

ձաններին և շուկայի նոր վերակացու, որը, ինչպես և նրան նախորդածները, շունի հունարեն և թաթարերեն լեզուների խոսակցության այն փորձը, ինչպիսին ունի նիկոլոզս Բոնավենատուրան, և ոչ էլ [ունի] վերակացուին անհրաժեշտ վարվելաձև, էլ չի տեսնք այն մասին, որ նոր բնորոշվել շունի պարոն Բոնավենատուրայի ոչ հմտությունը և ոչ էլ զգոնությունը, մի մարդ, որը զիջերները բաց աչքերով ամեն ինչ իր հսկողության տակ է առնում: Ահա հենց այդ պատճառով է, որ նա հաճելի է բոլորիս համար և դուր է գալիս մեր բոլորին՝ որպես իր պարտականությունները կատարող շուկայի արժանավոր վերակացու, մանավանդ, որ իր ամբողջ գործունեության մեջ նա փորձառու, հարգված և անշահախնդիր մարդ է: Բացի այդ ամենից, նա գթասիրտ է, և իր պարտականությունները կատարելիս երբեք թույլ չի տալիս ոչ վիրավորանքներ, ոչ կոպտություն, ոչ ստորացնելու փորձեր և անհանդուրժող է յուրացումների և զոլության հանդեպ: Մեծի և փոքրի նկատմամբ արդարացի է, բոլորի հետ սիրալիր է և հարգալից:

352

Այդ պատճառով խոնարհաբար խնդրում ենք ձեր տիրապետությանը, որպեսզի դուր ներողամիտ լինեք և ինչքան հնարավոր է երկար ժամանակով թույլ տաք վերոհիշյալ պարոն նիկոլոզոյին, հիշյալ արվարձանների վերակացուին, || մնալու իր տեղում, որպեսզի մենք կարողանանք պահպանել մեր գոյությունը լավ և զգոն աչքերի հսկողության ներքո, կարողանանք ապրել առանց կորուստների և թալանչիների հասցրած վնասների: Մենք հայտնում ենք ձեր տիրապետությանը, որ մինչև հիշյալ պարոն նիկոլոզոյի վերակացությունը առևտրականները հարկադրված էին լինում, զոլերից և հանցագործներից ունեցած վախի պատճառով, իրենց ապրանքները, ոմանք շալակով, իսկ ոմանք էլ ձիերով, երեկոները խանութից տուն տանել, իսկ առավոտյան էլ ևս բերել խանութ:

Եղբայրակերպ մեր ասածները, մենք հուսով ենք, որ ձեր ամենակարող տիրապետությունը կանսա մեր խնդրանքը, ընձեռնելով մեզ մխիթարություն, հանգրստություն և խաղաղ բուն: Խոնարհաբար խնդրելով այս, մենք հույս ունենք, որ ձեր մեծությունը հավանություն կտա դրան և կպահպանի զովասանքի արժանի այն վարձը, որը նրան կատարի ստանձնելու հիշյալ պարտականությունը:

Տրված է Կաֆայում, 1455 թ. օգոստոսի 6-ին: Ձեր ազնվափայլությունը նվիրված ներքոստորագրյալներ, նշանավոր և այլ հայեր: (Հետևում են հայերեն գրված բազմաթիվ անուններ⁷¹):

«Atti», VI, 12 351—352:

47. Կաֆայի իշխանությունների զեկուցագրից Սբ. Գևորգ քանկի խնամաստարներին, անդամներին և ընդհանուր քարձրագույն առյանին տիրող վիճակի մասին:

Կաֆա, 1455 թ., օգոստոս

(Քաղվածաբար)

355 Ազնվափայլ տերեր. կասկած չունենք, որ սույն (նամակից) առաջ ձերդ ազնվափայլությունը ցույց է տրվել, թե ինչպիսի մեծ արիություն, բաշտյամբ և խիզախությամբ, ամենևին չվախենալով թուրքական լնդանությունների ռմբակոծումից և նրանց ուժից, անցել ենք Հելենսպոնտը⁷², հաղթահարելով թուրքերի դիմադրությունը, արհամարհելով մահվան երկյուղը և փոքրոգությունը և չունենալով այլ նպատակ, քան ձեր ազնվափայլությունների փառավորումը, ինչպես նաև այս վայրի բարօրությունը, վայր, ուր հասանք ապրիլի 22-ին: Հնարա-

վոր շեղավ սամաստրոսական⁷³ [նավերից] որևէ մեկին մոտենալ, որովհետեւ քամու պատճառով շեղվեցին... Հաջորդ իսկ օրը... մեր Սբ. Գևորգի թեթևագնեները բոլոր մեր վարձկաններով... կանոնավոր կերպով իջանք [նավերից] և դտանք մեր դաշնակից Դամիանո դե Լեոնեի տունը: Նա ցամաքով նախ Մոկաստրո⁷⁴, այնուհետև ծովային ձանապարհով այստեղ էր հասել այդ ամսի 2-րդ օրը...

359 Դուք ցանկանում եք, որպեսզի բազարացիները թափարին վճարեն այն տուրբը, որ պարտադրվել է անցյալ տարի. կարծում ենք այդ անհնարին է անել ատանց մեծագույն դժվարություն և հուզումի... քանի որ նրանց (հայերի և հույների — Վ. Մ.) մոտ տիրում է մեծագույն աղքատություն: Ժամանակը չէ հայերին և հույներին ծանրաբեռնել⁷⁵...

«Atti», VI, էջ 355—359:

48. Կաֆայի հյուպատոսներն ու մասաբները Սբ. Գևորգի կառավարչությունից պահանջում են տեղի լատին եպիսկոպոս Զիսկոմո Կամպորիի հետացումը:

Կաֆա, 1455 թ.. 6 սեպտեմբերի

(Քաղվածաբար)

365 Դուք դիտեք, որ այս երկիրը (Կաֆան — Վ. Մ.) զլխավորապես բնակեցված է հայերով, որոնք մեր ճանաչված հենարանն են և լավագույն վաճառականները և քաղաքին մեծ եկամուտ են բերում: Իսկ նա (եպիսկոպոս Զիսկոմո Կամպորին — Վ. Մ.) ամեն օր հետապնդում է նրանց և [հնարում է] նրանց համար նորամուծություններ⁷⁶, որոնց նրանք անսովոր են: Այդպես

նա վարվում է նաև մյուս աղգությունների հետ: Այդ բանը մենք ոչ մի դեպքում չենք կարող թույլ տալ:

367 Վերջին երկու ամիսների ընթացքում մենք հարկեր ենք դրել: Բայց մեզ թվում է, որ այժմ ժամանակը չէ այն վերցնել հայերից, հույներից և մյուս ժողովուրդներից: Մենք չգիտենք, որտեղից գտնել հարկատուներ, քանի որ այստեղ դրամ ունեցող մարդիկ չկան:

«Atti», VI, էջ 364, 365, 367:

49. Որ. Գևորգ քանկի խնամատարները հուսադրում են հայ եպիսկոպոսին, որպեսզի նա լավ հույսեր տաժի Կաֆայի ապագայի հանդեպ և նրան նախազգուշացնում են, որ չմիջամտի վարչական և աշխարհիկ գործերի:

Ձեռովա, 1464 թ., 31 հունվարի

Ի Քրիստոս հարգարժան հայր

Կաֆայի Հայոց տեր Լպիսկոպոսին.

Որքան մենք ուշադրություն ենք դարձնում Ձեր առաքինությանն և մտաբերում ենք Ձեր բարի գործերը՝ կատարված հանուն այս սքանչելի քաղաքի բարօրության և մեծության, հատկապես պարիսպների⁷⁷ շինարարության մեջ, այնքան ավելի ենք համոզվում, որ Դուք ցանկանում եք մեր իշխանության հարատևությունը և ունեք լավագույն հույսեր, որ կտեսնեք համընդհանուր գոհունակություն ու բերկրանք: Հետևաբար, մենք Ձեզ տեղեկացնում ենք, որ Դուք երբեք այնքան մոտ չեք եղել տեսնելու մեր գործերի կայունությունը և ապահովությունը, ինչպես այժմ, մեր հույսերի իրականացումը շարունակաբար մոտենում է: Այս իսկ պատճառով մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում ամենազոր Աստծուն...

Մենք, ինչպես դիտեք մեր նամակների և հրա-

հանգնների միջոցով, մշտապես հոգում ենք այս քաղաքի յալ կառավարման համար և ձգտում ենք առաջին հերթին այնպես անել, որ ոչ միայն զոհ լինեն նրանում ապրող բոլոր ժողովուրդները, այլև որպեսզի օտար երկրներից ժողովուրդներ ցանկանան զալ ապրելու այս ազնիվ քաղաքում: Ինչ վերաբերում է մնացածին, ապա մեր գերազանցությանը վաչել չի լինի, որ արդարագատության գործերին միջամտեն այլ անձինք, բան մեր սլաշտոնյաները: Թող Ձեզ զարմանալի չլվա, որ մեր հրահանգներում, որոնք բոլորն էլ այս քաղաքի և այս ժողովուրդների բարօրության համար են, մենք արգելել ենք, որ ոչ Դուք, ոչ էլ հույների մեծապատիվ եպիսկոպոսը շխառնվեք արդարագատության գործերի վարման մեջ: Միայն (զրադվեք) ամուսնական և հոգևոր գործերով: Այս բնազավառները մենք ուզում ենք վերապահվեն Ձեր իրավասությանը միշտ, և լավ ու սլատովով կատարվեն (Ձեր կողմից): Այդ մասին մեր նամակների միջոցով Ձեզ տեղեկացրել ենք: Յանկանում ենք, որպեսզի Դուք ոչ միայն հաստատուրեն շարունակեք (Ձեր գործերը), այլ նաև ջանաք անել ավելին, և այդպես՝ անելով՝ մեծ համբավ կվաստակեք և Ձեր հոգու փրկությունը կշահեք: Մեզ լվում է, որ դա ամենից առաջ Ձեր ցանկությունն է: Եթե որևէ բան սլատահի, որն արժանի է մեր իմացությանը, մեզ տեղեկացրեք, և ամեն ինչի մասին հոգ կտարվի ու գրել տվեք (Ձեր նամակները) լատիներեն, (որովհետև) շունենք հայերենից լատիներեն լարգամանող:

Տրված 31 հունվարի, Սուրբ Գևորգի բարձրագույն համայնական վարչության խնամատարների կողմից:

«Atti», VII, I, էջ 277—278:

Ձեռնովա, 1464 թ. 3 փետրվարի

291 հոնամատարները և ուրիշները, ցանկանալով իրենց
երախտադիտությունը հատուցել ծառայություն մատու-
ցած անձանց, որպեսզի նրանք տեսնեն, որ լավ գոր-
ծերը իրենց օգուտ են բերել, գիտենալով, որ
|| Կաֆայի հայ Կոթուլսան վերականուցել և նորոգել է
հրդեհից վառված տունը, մեծ զեղեցկություն հաղորդե-
լով Կաֆա քաղաքին, այս նամակի հեղինակությամբ
վերը նշված Կոթուլսային անձեռնմխելի և ազատ ենք
համարում և ցանկանում ենք, որ աչդպես լինի, իր ողջ
կյանքի ընթացքում նշված տան դիմաց Կաֆային տրվող
հողային տուրքից: Հանձնուրարում ենք և պարզապես
պարտադրում կատարման համար ներկա և ապագա
հարդարժան հյուպատոսին և բարձրաստիճան մարդ-
կանց, մասարներին և Կաֆայի ղրամատանը, որպեսզի
այս ազատ կացուցանումը անխախտորեն կիրառվի
նշված Կոթուլսայի վերաբերյալ նրա կյանքի ընթաց-
քում:

Տրված 3 փետրվարի 1464 թ.:

«Atti», VII, I, էջ 290—291:

51. Խնամատարները գովում և հուսադրում են Կաֆայի հալ
և հույն եպիսկոպոսներին՝ շարունակելու իրենց բարի գործերը
դավանակիցների շրջանում զաղորթի զարգացման համար:

Ձեռովա, 1465 թ., 28 հուլիսի

Պատվարժան հույն եպիսկոպոսին
և Կաֆայի մեր թանկազին հույներին.

- 347 || Ձեր առաքինությունը, հարգարժան հայր եպիսկոպոս, Ձեր բարեպաշտությունը և ճշտապահությունը և արագ գործելակերպը այս քաղաքի, միաժամանակ Ձեր քաղաքի բարօրության ամրապնդման և պարենավորման համար մեզ հայտնի են հյուպատոսի ու մասարնների կողմից Ձեզ արված գովասանքից... Ձեզ հորդորում և հուսադրում ենք, որպեսզի ոչ միայն հարատևեք Ձեր կատարած լավ գործերում, այլև Ձեր ջանքերը ավելացնեք այս քաղաքի բարօրության համար, հանուն որի Դուք առավել շափով կշահեք և կուրախանաք: Եվ թող հնազանդությունը մեր պաշտոնյաների հանդեպ միշտ լինի Ձեր մեջ այդ գործերը կատարելիս: Քանի որ հավատում ենք Ձեր հայրապետության առաքինությունը, կհանձնարարենք Ձեր հոտի ոչխարներին, դա Ձեզ հրեշվանք կպատճառի և կնպաստի, որ Ձեր բոլոր գործերը հաջողակ լինեն: Ուստի հուսով ենք, որ այս անցնող տարին մեզ, Ձեզ հետ միասին, ուրախություն կբերի: Նախապես Ձեզ տեղեկացնում ենք, որ Ձեր բարօրությանը և լավ համբավին վերաբերվող որևէ հարցում բաջ պատրաստ ենք և սիրով կանենք այն, ինչ Ձեզ հաճելի լինի ու սիրահոժար կերպով կընդունենք, այն, || ինչ արժանի կդառնա մեզ հանձնելու զրավոր ձեռով:
- 348

Տրված է 1465 թ. 28-ն հուլիսի Սուրբ Գևորգի վարչության խնամատարների կողմից. նույնը գրված է հայ եպիսկոպոսին և Կաֆայի հայերին:

«Atti», VII, I, էջ 347—348:

52. Սբ. Գևորգ բանկի խնամատարները նախագգուշացնում են Կաֆայի եպիսկոպոս Ջիրովամո Պանիսարիին⁷⁹, որպեսզի նա չմիջամտի հույների, ինչպես նաև Կաֆայի արևելյան դավանանքի քրիստոնյա մյուս ժողովուրդների ամուսնական գործերին:

Ջենովա, 1467 թ., 15 հունվարի

468 Ի Քրիստոս հարգարժան տեր Հերոնիմոսին (Պանիսարիին — Վ. Մ.)՝ Կաֆայի պատվարժան եպիսկոպոսին:

Ոչ առանց զարմանքի իմացանք, ի Քրիստոս հարգարժան հայր, որ Ձեր հայրապետությունը փորձել է միջամտել ինչ որ ամուսնական գործի, որն ասում են թե կայացել է մի ոմն բաղաբացու (բուրգենդես — Վ. Մ.)

469 Դե Ֆացիոյի և մի || հույն աղջկա միջև, որի եղբայրը և մյուս աղջկանները տեղյակ չեն եղել և չեն մասնակցել այդ գործին: Այս իրողությունը մենք ընդունեցինք զրգուհույն մեր հատկապես այն պատճառով, որ ոչ միայն Կաֆայի օրենքներով է Ձեզ արգելվում որևէ բան անել կամ կարգադրել այս բաղաբում բնակվող հայերին, հույներին կամ այլ հերետիկոսներին, կամ աղանդավորներին վերաբերող ամուսնական նույնանման գործերում, այլ նաև նրանով, որ Ձեր այստեղից մեկնելու ժամանակ մեր նախորդները ձեզանից խնդրել են և Ձեզ պատվիրել, որպեսզի Դուք նման ամուսնական գործերին չմիջամտեք: Ինչպես հայտնի է Ձեր շրջահայեցությունը, տեղի են ունեցել ոչ միայն վերը նշված Դե Ֆացիոյի գործը, այլև այլ սկանդալներ, այնքան վտանգավոր, որ ըստ մեզ, եթե անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնվեին մեր աշխարհիկ պաշտոնյաների կողմից, զրանք պատճառ կդառնային այս քաղաքի և մեր այլ տիրույթների

կործանմանը⁵⁰։ Աստված մի արասցե։ Հետեւեալ, Ձեզ կոչ ենք անում և Ձեզանից խնդրում ենք և ինչքան իրավասու ենք պարտավորեցնում ենք Ձեր հայրապետութեանը, որ վերը նշված գործերին չմիջամտեր ոչ մի ձևով, ինչպես այդ մասին կարգադրված է Կաֆայի օրենքներով և ինչպես դա հարմար է մեր պատվին և աշխարհաբարի բարօրութեանը։ Շնորհակալ կլինենք, եթե Ձեր հայրապետութիւնը վերը նշված հարցերի շուրջը մեզ պատասխան տա հնարավորին չափ արագ։

Տրված է 15 հունվարի 1467 թ.

Խնամատարներ։

«Atti», VII, I, էջ 468—469:

53. Խնամատարները հրահանգում են Կաֆայի քաղաքացիներին, որպէսզի նրանք չստեղծեն քաղաքաքնակների առանձին խմբեր և հավաքներ, ալ պահպանեն համերաշխությունը բնակիչների առանձին դասերի միջև։

Ձեռովա, 1467 թ., 15 հունիսի

Խնամատարները և այլն։ Ազնվաւիայլ և նշանավոր անձանց՝ Ջուլիանո Դե Ֆլիսկոլին, Լոդիսիո Դե Պետրարուբեային, Գասպար դատավորին և Բարթոլոմեո Դեսանկտո Ամբրոսիոյին՝ Կաֆայի քաղաքացիներին, մեր սիրելիներին.

487 || Մեր սիրելիներ, երբ ստացանք Ձեր նամակը՝ գրված անցյալ տարվա հոկտեմբերի 20-ին, այն ժամանակ Կամպանիան⁸¹ դեռ խաղաղեցված չէր, և հիմնականում նոր կայսրի (իմա՝ խանի — Վ. Մ.) գրութիւնը Ձեզ թվում էր օրինական հիմքերով երկյուղ ներշնչող։ Ուշի ուշով քննեցինք Ձեր գրածները, և այն որ Դուք խնդրում եք օգնել մեր աշխանավոր, շատ թանկագին քաղա-

քին Ձեր նամակում: Երբ մենք և մյուս բաղաբացիները մտաբերում ենք այն օժանդակությունները, որոնք մեզ այդ ժամանակ լիվում էին անհրաժեշտ, ստացվեց մեկ այլ նամակ՝ գրված նշանավոր Կալոկիրոս Գիսուլֆիի կողմից նոյեմբերի 19-ին: Այդ նամակում հայտնվում է, որ սկյութների⁸² մեծամեծները եկել են իրենց հնազանդությունը հայտնելու նոր կայսրին, որ Կամսյանիան վերջացած է և հաստատ հույսով կարելի է սպասել, որ բոլոր խառնակությունները, որոնք ծագել են Ագիկարեոսի մահից հետո, պետք է վերջանան: Այդ պատճառով էլ մեզ նպատակահարմար լիվաց, որ ներկա իրադրության մեջ բավական է ծովային ճանապարհով ուղարկել Ձեր նամակում նշված սպառազինության որոշ մասը. իսկ ցամաքով՝ հյուպատոս նշանակված ազնվափայլ այր Ալաոն Դե Աուրիայի⁸³ հետ միասին, որը Աստծո անունից դալու է Ձեզ մոտ և մեկնելու է առաջիկա օգոստոս ամսին, (կուղարկենք) թնդանոթների և այլ զենքի մի քանի մասնագետներ: Այս բոլորի մասին մենք Ձեզ կգրենք մեր մյուս նամակներում, ըստ կարգի:

Ինչ վերաբերում է Ձեր նամակի մնացած մասերին, հարկավոր չէ, որ Ձեզ այլ բան գրենք, քանի որ հարգարժան այր Կառլոուս Չիկոնիան⁸⁴, որը Ձեզ հյուպատոս է նշանակված և այժմ գալիս է Ձեզ մոտ, Ձեզ կբավարարի: Ուրեմն հաստատ հույս ունեցեք և այդ ժողովուրդներին համոզեցեք, որպեսզի հաստատ հույսով ապրեն, և նրանց ժողովելով՝ հորդորեցեք և համոզեցեք, որպեսզի նրանք հուսադրված լինեն, քանզի, ինչպես կարող եք հասկանալ բաղմաթիվ փորձություններից, մենք և բոլոր բաղաբացիները երբեք չենք թերացել և երբեք չենք թերանա անհրաժեշտության պահին հոգալ Ձեր և մեր այս շատ թանկագին ազնվափայլ բաղաբացի փրկության ու բարօրության համար:

«Atti», VII, I, էջ 486—487:

54. Կաֆայի պատվիրակներից մեկի՝ Բարտողոմեոս
Սանտամբրոգիոյի հաղորդմամբ խնամատարները
Կաֆայի բնակիչ հալ Արանտոնիոյին իր ողջ կյանքի
ընթացքում ազատում են բոլոր տեսակի անձնական
հարկերից ու տուրքերից:

Ձեռովա, 1469 թ., 1 սեպտեմբերի

Հարկից ազատում ենք, որովհետև լինելով ազնիվ
անձնավորություն՝ Արանտոնիոն կամովին համաձայն-
վել է, որպեսզի իր սեփական տերիտորիայի (հողի
— վ. Մ.) վրա գտնվող մի բանի տները բանդվեն կամ
գրավվեն հիշյալ բաղարի նոր պարիսպների շինարա-
րության համար:

«Atti», VII, I, էջ 632:

55. Սբ. Գևորգ բանկի խնամատարները գրում են լատին
եպիսկոպոս Ջիորջամո Պանիսարիին, որպեսզի նա զբաղվի
Կաֆայի հայերի համերաշխության խնդրով, որոնք պնդակալել
են իրենց նոր եպիսկոպոսի ընտրության առիթով:

Ձեռովա, 1473 թ., 25 փետրվարի

Կաֆայի մեծարգո եպիսկոպոսին, գիտեք ի Քրիս-
տոս հարգարժան հայր, որ պառակտումներ են առաջա-
ցել այս բաղարում բնակվող հայերի մեջ՝ իրենց նոր
եպիսկոպոսի ընտրության կապակցությամբ⁸⁵, և որ
|| հարգելի հյուպատոսը միջամտել է եկեղեցական այդ-
օրինակ գործին և կողմերից մեկի հանդեպ աշառություն
է ցուցաբերել, մյուս կողմի համեմատությամբ: Մենք
նրան և մասարներին գրում ենք նույն այն բովանդա-
կությամբ, ինչ [բովանդակում է] մեր նույն բովանդա-

կույթյան նամակի այն մասը, որի պատճենը կգտնենք ներփակ: Դրա համար էլ խնդրում ենք Ձեր հայրապետությանը, որի հավատին ու անաղարտությանը հավատում ենք, որպեսզի նման վեճերին շրջահայացորեն վերջ տալու համար մինչև վերջ կատարվեն մեր նամակի այդ մասում բովանդակված մտքերը և այս պատվերը կատարելիս այնպես վարվի, որպեսզի հետևանքը համապատասխանի այն հույսերին, որ առնչում ենք Ձեր հայրապետության հետ: Միշտ պատրաստ ենք Ձեր հայրապետության փառքին ու բարօրությանը վերաբերող ամեն ինչին (նպաստելու)...

Տրված է 1473 թ. փետրվարի 25-ին
Խնամատարներ և ուրիշներ:

«Atti», VII, II, էջ 36:

56. Խնամատարները խնդրում են լատին եպիսկոպոսից անձամբ զբաղվելու հայ աղջկա դատական գործի⁸⁶ շուրջը կաֆայում ծագած վեճով:

Ջենովա, 1474 թ., 24 մայիսի

105

Ի Քրիստոս հարգարժան հայր,
Կաֆայի մեծապատիվ տեր եպիսկոպոս.

Ինչպես ավելի մանրամասն կիմանաք Ձեր հայրապետությանը ուղղված այս մեր նամակից, որ այժմ գրում ենք, սույն բաղաբի հյուպատոսին և մասսարներին, մեզ օգտակար է թվում հանձնարարել Ձեր հայրապետությանը և նրանց՝ զբաղվելու հայ աղջկա ամուսնության կապակցությամբ հայերի մեջ ծագած վեճերով: Կարծում ենք, որ Ձեր շրջահայեցությունը այդ մասին լիակատար տեղեկություն ստացած է: Հետևաբար, խնդրում և հորդորում ենք Ձեր հայրապետությանը, որպեսզի

Դուք դժվար շփամարեր նշված հյուպատոսի ու մասար-
ների հետ մեկտեղ կատարելու այն, ինչ բովանդակված
կգտնենք մեր նամակում՝ վերոհիշյալի վերաբերյալ: Միշտ
106 պատրաստ ենք ծառայելու || Ձեր փառքին և բարօրու-
թյանը վերաբերող ամեն ինչում:

Տրված է 1474 թ. մայիսի 24-ին

Խնամատարներ և ուրիշներ:

«Atti», VII, II, էջ 105—106:

57. Հանձնարարական նամակ Կաֆայի հյուպատոսարանի
և ավագների կողմից՝ ուղղված Սբ. Գևորգ քանկի
գրասենյակին՝ գլխավոր վանահոր և երկու կաֆացի հայ
դոմինիկյանների օգտին, որոնք ուղևորվում են Հռոմ իրենց
գործը սուրբ աթոռին ներկայացնելու համար:

Կաֆա. 1474 թ., 18 հուլիսի

111 Ազնվափայլ և հզոր տերեր. իմ ամենաարժանա-
վոր տերեր. Քարոզիչների միաբանության գլխավոր
վանահայր եղբայր հայ Մաթիասը, եղբայր Գեորգեոսը
և եղբայր Լավրենտիոսը⁸⁷, նույնպես հայեր, մեկնում
են իբրև հոռմեական կուրիա այն վիրավորանքների կա-
պակցությամբ, որ պատճառել են նրանց և նրանց Սուրբ
Նիկիոյայոս վանքի հանդեպ: Որովհետև սրանք այն կղե-
րականներից են, որոնք բոլորից առաջ ապրելով այս
քաղաքում՝ աչքի են ընկնում իրենց անաղարտ վարքով
և բարքերի հարգարժանությամբ: Ուստի այս լավ եղ-
բայրներին հանձնարարում ենք Ձեր իշխանություննե-
րին, հատկապես այն պատճառով, որ Դուք այս ամբողջ
քաղաքի և զերազանցապես հայերի համար ամենաշնոր-
հակալ գործը արած կլինեք, եթե նրանք զղան, որ Ձեր
իշխանությունների շնորհիվ ինչ-որ չափով արժանացել
են [Ձեր] հաճկատարությանը և բարեհաճությանը, որ-

112 պեսզի Ձեր միջնորդությամբ կարողանան հասնել մինչև
կուրիա, նկատի ունենալով այն անտեղի || վիրավո-
րանքը, որ հասցվել է նրանց: Այլ կերպ չէր էլ լինի:
Պատրաստ ենք [ստանձնելու] Ձեր իշխանությունների
հանձնարարականները. Ձեր իշխանությունները թող ար-
ժանանան ամենաբարձրի երկարատև պահպանությամբ:

Տրված է Կաֆայում 1474 թ. հուլիսի 18-ին

Բարեպաշտներ՝

Բապտիստա Հուստինիանոս⁸⁸,

Կաֆայի հյուպատոս,

Օթերտոս Սկվարձաֆիկոս⁸⁹ (Սկվարձաֆիկոս
— Վ. Մ.) և Անտոնիոս դե Կաբելլա, խնամատարներ
և մասսարներ և Ավագների խորհուրդը:

Խոնարհ հանձնարարությամբ՝

Անտոնիոս:

«Atti», VII, II, էջ 111—112:

58. Յասկոտ մի այլ բողոք Դի-Նեգրոյի⁹⁰ կողմից ընդդեմ
սինդիկների և նրանց զանգատը Սբ. Գևորգի բարձրագույն
վարչությանը:

Կաֆա*, 1474 թ., 25 օգոստոսի

401 Այս Կաֆա քաղաքում տեղի ունեցող և տեղի ունե-
ցած իրադարձությունները դիտելը ցասումնալից դար-
մանք է առաջ բերում, եթե դրանց դեմ նախազգուշական
միջոցներ չգործադրվեն, աստվածային նախախնամու-
թյամբ կամ Գերագույն իշխանության կողմից, որն է
Սուրբ Գևորգի ազնվափայլ վարչությունը, ապա անհնա-
րին է, որ չարիքը վրա չհասնի նրան (բաղաբին — Վ. Մ.),
այն վատ [արարքների] պատճառով, որոնք կան այս
քաղաքում:

Հիրավի, հասել է մի ժամանակաշրջան, երբ շարագործությունը բարձրացվում է և ղովկատի արժանանում, և իրոք ավելի վատ է այն, որ այն անձինք, որոնք պետք է պատժեն շարագործներին, ընդհակառակը, նրանց հովանավորում են: Հայտնի է, թե ինչպես է (վարվել) տեր Բատիստա Հուստինիանոսը անցյալում իր հյուպատոս եղած ժամանակ Սոլդաչայի հյուպատոս Քրիստոֆերո դի-Նեզրոյի հետ, նրան հալածելով աջից ու ձախից: ...Հասել է ժամանակը, երբ Քրիստոֆերոն թեև վիրավորանք էր ստացել այդ նույն տեր Բատիստայից, այնուամենայնիվ կարողացավ ինքն իրեն զսպել և ինքը՝ Քրիստոֆերոն, այն վիրավորանքների մասին, որ նրանից և ուրիշներից ինքն ստացել էր, պահանջ էր ներկայացրել Երկու մեղադրանքների միջոցով՝ արված իր կողմից ընդդեմ հիշյալ տեր Բատիստայի: Ինքը՝ տեր Քրիստոֆերոն, ցանկացավ ստուգել հիշյալ մեղադրանքների բովանդակությունը, պահանջելով այդ մեղադրանքների և վերոհիշյալ տեր Բատիստայի կողմից դրանց արված պատասխանների պատճենները: Երևում է, որ նա բացեիքաց ասել է իրեն՝ տեր Քրիստոֆերոյին, թե նա չի ճանաչում նշված դրությունները և պատասխանները. դա պարտքի զգացողության և ազնվության դեմ է, մեր ամբողջ խորին հարգանքով հանդերձ:

0, հավերժական աստված, Դուք տյարք սինդիկատորներդ, պետք է, որ Ձեր վարչությունից ճշմարտությունը հայցեիք, սակայն երևում է, որ ավելի շուտ Դուք ցանկացել եք տեր Քրիստոֆերոյի դեմ արված վիրավորանքները ավելացնել և ընդհանուր շարիքը բազմապատկել, ցանկանալով Սուրբ Գևորգի ազնվափայլ վարչության պատիվը բարձրացնել. սակայն ընդհակառակը, մեր ազնվափայլ տեր վարչությունը ցանկանում է, որ ճշմարտությունը լույս աշխարհ հանվի... || Այսպիսով, վերոհիշյալը բացահայտում և ակնհայտորեն երևում է, թե ինչպիսի դատավորներ եք Դուք: Իրոք, հասարակայ-

նության մեջ ասում են, թե Դուր Հետապնդում եք Հիշյալ տեր Բաբտիստայի դեմ ներկայումս և ապագայում մեղադրանքներ ներկայացնող անձանց, որպեսզի բեկանեք այդ մեղադրանքները:

Մի՞թե Բարդուղիմեոս Մարմուսը չէր ցանկանում նույն տեր Բաբտիստայի դեմ մեղադրանք անել այն վիրավորանքների համար, որ հասցրել էր իրեն այդ Հիշյալ տեր Բաբտիստան: Եվ Յրանցիսկոս դե Սավիգնոնիսը մի ոմն հայ Ստեփանի հետ ունեցած (դատական) գործում իրեն հակառակ դատավճիռ ստանալով... Մի՞թե չէր ուզում մեղադրանքով հանդես գալ վերոհիշյալ տեր Բաբտիստայի դեմ և այդ անարդարացի դատավճռի վերաբերյալ: Եվ մինչդեռ ատյանում քննում էին նշված դատավճիռը բեկման ենթարկելու հարցը, կատարվեցին այնպիսի գործեր, որոնց ուժով նշված դատավճիռը զրկվեց ուժից, համաձայն այն բանի, որ հայտնի դարձավ, թե խորհրդի կողմից այն հաշվի չի առնվի, որովհետև հիշյալ Յրանցիսկոսը մեղադրանքներ չէր անելու հիշյալ տեր Բաբտիստայի դեմ: Չէ՞ որ հայտնի է, թե որքան մեծ նվաստացում է պատճառվում... խոջա Կալարեսին⁹¹, հայ Աստատուր Բազարբաշիին⁹² և Կոտուլբեյ Սյունեցուն⁹³, որոնք վիրավորանքի ենթարկվեցին և բանտարկվեցին Մանեքսիո դե Ռուբենոյի կողմից հիշյալ տեր Բաբտիստայի ժամանակ ինչ-որ աղջկա գործով: Այդ առթիվ խոսելը միթե ամոթաբեր չէ: Այն մեղադրանքը, որ հղեցին Ջեզ՝ սինդիկներից այդքան նվաստացումի ենթարկված այդ անձինր, հայտնի է բոլորին և բոլորին հայտնի է, թե ինչ ձևով և ինչ եղանակով է այդ բոլորը կատարված:

Շիրավի, մի այլ մեղադրանք բացելիքաց հղվեց Ջեզ, հիշյալ հայերի կողմից կառավարչությանը, Կաֆայի հայոց հարգարժան նախկին եպիսկոպոսի անունից՝ թե այդ եպիսկոպոսը ինչպես է հեռացվել իր եպիսկոպոսական աթոռից. ինչպես ասում են լղա կատար-

«Էլ էլ հակառակ օրենքի և կանոնների, որոնց մեջ նա-
խադրուշացվում է, թե հայ եպիսկոպոսներին վերաբե-
րող նույնանման գործերին հյուպատոսը ոչ մի ձևով
չպիտի միջամտի: Սակայն հիշյալ տեր Բարտիստան,
չունենալով հարգանք կանոնների և ոչ էլ ազնվափայլ և
սիրելի Սուրբ Գևորգի վարչության լիազորությունների
հանգեալ, ինչպես ակնհայտորեն երևում է իր խոսքե-
րից, ինքն է ցանկացել իր ձեռքը մեկնել նրան, ում կա-
մեցել է: Այդ խառնակությունների ու գործերի մասին
հիշյալ հայերը կապացուցեն Ձեզ⁹⁴ ի լուր ամենքի ներ-
կայացրած նրանց մեղադրանքներում և սրանց հետ կապ
ունի ամբողջ իշխանությունն ու ամբողջ ժողովուրդը:

Հիրավի, ինչպիսի ջանքեր և հատկապես վտանգա-
վոր սպառնալիքներ թափվեցին, որպեսզի հիշյալ մեղա-
դրանքները մեղմացվեն ու բեկանվեն, որպեսզի նրան-
ցից դատավճիռ չկազմվի: Երբ նրանք բացահայտվեն
իրենց էությանմբ, հասկանալի կդառնա, թե դրանք ար-
ված են մի նպատակով, որպեսզի նշված մեղադրանք-
ները թվան ամոթալի նպատակով կատարված:

«Atti», VII, II, էջ 401—402:

59. Հայեր Ասատուրի և Կալարեսի վեցերորդ մեղադրանքը:

Հայեր Ասատուրը և Կալարեսը մեղադրում են
նախկին հյուպատոս Ջուստինիանին 29 և ավելի օրվա
ընթացքում իրենց անարգարացիորեն բանտարկելու և
հայ եպիսկոպոսի դատավճռում ունեցած վատ ղեկավա-
րության համար:

Կաֆա, 1474 թ., 16 օգոստոսի

Խոջա Ասատուր Բաղարբաշին, խոջա Կալարես դե
Սյունին, տեր դե Ալսարիո նոտարիոսի և հիշյալ տեղ

սինդիկներին գրագրի հետ, ըստ սահմանված օրենքի հավաքվելով նիստի, դիմակազերծում և մեղադրում են պատվավոր տեր Բաբտիստա Զուստինիանին՝ Կաֆայի նախկին հյուպատոսին, և շարադրում են, թե ինչպիսի վիրավորանքի են ենթարկվել իրենք տեր Բաբտիստայի կողմից, որը, հակառակ օրինականության, նրանց բանտում պահեց ավելի քան 29 օր: Այդ հաստատույթներում է կուրիացում նրանց և նրանց հավատարմատարների կողմից կազմակերպված հարցաքննությունների ընթացքից, և թե ինչպես արդարադատությունը վկայակոչվեց՝ պարզ երևում է նշված դատական պրոցեսներից: Բացի դրանից, վերոհիշյալ տեր Բաբտիստան դրանից հետո ամուսնության և հարգարժան Տեր-Կարապետի եպիսկոպոսության գործերում վարվեց բուրբուլին հակառակ այն բանի, որ ինքը պարտավոր էր անել, և նամակ գրեց հիշյալ պատրիարքին⁹⁵ ու հակառակ ձեռով վարվեց. ուստի իր նամակները գրեց հիշյալ տեր պատրիարքին, անհարմար այլ գործեր արեց...

Ուստի [նրանք] պահանջում են, որպեսզի հիշյալ տեր Բաբտիստան դատապարտվի իրենց պատճառած չարիքների ու վիրավորանքների համար, նշված բանտարկության զործի կապակցությամբ, իրենց վճարելով վեներաբլյան 200 դուկատ⁹⁶: Նրդվում են, և այլն նմանապես (պահանջում են), որ նա դատապարտվի վերադարձնելու, տալու և վճարելու իրենց այնքան, որքան ծախսել են իրենք, որ նա դատապարտվի նաև այլ պատիժների, որոնք նախատեսված են օրենքի, օրինահոգվածների և կանոնադրության կողմից: Համաձայն սրան (զործը) կառավարության միջոցով կլուծվի...

«Atti», VII, II, էջ 423:

60. Հյուպատոսի պատասխանը Ասատուրի և Կալարենի
մեղադրանքին:

Կաթա. 1474 ք., 23 օգոստոսի

- 423 Կաթա՛յի նախկին Հյուպատոս պատվարժան տեր
Բապտիստա Ջուստինիանին օրենքի համաձայն և ներկա-
424 յությամբ և այլն դատական գործ է հարուցել || նման
անհեթեթ մեղադրանքի կապակցությամբ, որ արվել և
ներկայացվել է Ասատուր Բաղարբաշիի և Կալարենս դե
Սյունիի կողմից այս տարվա օգոստոսի 16-ին: Այդ
մեղադրանքի մեջ ասված է, թե ինչպիսի վիրավորանք
է իբր թե հասցվել նրանց հիշյալ տեր Բապտիստայի կող-
մից, որը նրանց պահել է բանտում ավելի քան 29 օր և
դա արվել է հակառակ օրինականության, ինչպես երևում
է տեղի ունեցած դատական դորժերից: Հիրավի, թե ինչ-
պես է արդարությունը նրանց կողմից մերժվել, երևում
է վերոհիշյալ դորժերից: Եվ երբ ինքը (Բապտիստան
— Վ. Մ.) պարտավոր էր վարվել իրենց օգտին ամուս-
նության գործում, վարվեց հակառակ ձևով և նամակ
գրեց տեր պատրիարքին:

Հակադրվելով, հակաձառելով և պատասխանելով
նշված մեղադրանքին, (Բապտիստան) ասում էր, թե
հիշյալ Ասասագորը և Կալարենը պետք է կարմրեն և
ամոթ զգան նշված մեղադրանքի մեջ եղած խոսքերի
համար, քանի որ ինքը՝ Հյուպատոս տեր Բապտիստան,
սովորություն չի ունեցել որևէ մեկին բանտարկել, եթե
չեն եղել արդար ու օրինական պատճառներ, ոչ էլ ինքը՝
տեր Բապտիստան հիշյալ Աստվածատուրին ու Կալա-
րենին բանտարկել է ավել, որովհետև աշխարհիկ դա-
տավորը իր աշխարհիկ իշխանությունը եկեղեցական
դատավորներից ու առաջնորդներից վեր չի դասում հան-
ցավորների նկատմամբ: Նույն այդ պատճառով իր փո-
խանորդ տեր Իոաննես Իպոլիտոսի խորհրդով, որը նշա-

նակված է Սուրբ Գևորգի ազնվափալ վարչության կողմից, ինքը՝ Բապտիստան տվեց և զործագրեց իր իշխանությունը և թույլ տվեց ձերբակալություններ կատարել միայն հարգարժան հայոց տեր եպիսկոպոսի պահանջով, և շուներ իշխանություն ու իրավունք պատժելու նույն Ասատուրին և Կայարեսին, որոնք հանցանք էին գործել վերոհիշյալ ամուսնության գործում, շքանկանալով հնազանդվել վերոհիշյալ իրենց եպիսկոպոսի հանձնարարություններին:

Նվ որովհետև ինքը՝ տեր Բապտիստան, չէր այն անձը, որ բանտարկեց վերոհիշյալներին, այլ նրանք բանտարկվեցին իրենց եպիսկոպոսի կողմից, նրան՝ տեր եպիսկոպոսին, փոխանցվեց աշխարհիկ իշխանությունը ըստ վերոհիշյալ փոխանորդի տված խորհրդի: Ուստի չպետք է մեղադրվի ինքը՝ տեր Բապտիստան, օրինական գործի համար⁹⁷: Իրոք, բոլոր վերոհիշյալների մասին երևում է կուրիայում կազմված ակտերից. նա ցույց տվեց, որ դրանք կատարվել են հանուն ճշմարտության:

Ինչ վերաբերում է այն խնդրին, որ ասված է, թե արդարադատությունը մերժվել է նրանց կողմից, նա [Բապտիստան — Վ. Մ.] ասում է, թե ինքը՝ տեր Բապտիստան, երբեք չի մերժել արդարադատությունը որևէ անձի վերաբերյալ, սակայն այդ պարագայում իր իրավասությունից դուրս էր որևէ բան կարգադրել կամ ձեռնարկել հիշյալ ամուսնության գործի վերաբերյալ, կամ որևէ բան հակադրել վերոհիշյալ տեր եպիսկոպոսի լիազորությունների կարգին, հատկապես ամուսնության գործում:

425 Ինչ վերաբերում է իրր թե զրված նամակին, մենք նրանց կպատասխանենք այսպես. անկասկած նրանք (Ասատուր Բաղարբաշին և Կայարեսը — Վ. Մ.) անամոթ հավակնությամբ ցանկացել են պնդերևաբար խտանվել տյարք հյուպատոսների նամակներին: Իրոք, այն ինչ սրվում է, բոլորը գրվում է քաղաքի բարօրու-

թշան և օգոստի համար և նման գործերը որևէ չափով չեն առնչվում սրանց (մեղադրողներին — Վ. Մ.):

Այն մասի վերաբերյալ, ուր նրանք ասում են, թե ինքը՝ տեր Բապտիստան, վարվել է հակառակ պաշտաձուխյանը... սրան կպատասխանեինք, որ նրանք իրենց բերանով ստում են, որովհետև ինքը (հյուպատոսը — Վ. Մ.) կատարել է այն, ինչը համապատասխանում է իր պաշտոնին և երբեք ոչ մի բան չի ընդունել որևէ անձից, բացի այն պարագայից, եթե այդ անձը իրեն պարտք է եղել որևէ բան: Եվ որովհետև երբեք չենք կարողանա ասացուցել, որ մեղադրանքի մեջ բովանդակվածը ճշմարիտ է և քանի որ ինքը՝ տեր Բապտիստան, նախանձախնդիր է իր պատվի հանդեպ, որչ պաշտպանում է և նրա մասին հոգալով այն դասում է ամեն ինչից վեր, այդ իսկ պատճառով վերոհիշյալ հավակնոտ հայ բանսարկուներին, որոնք բանսարկություն են անում իրեն՝ տեր Բապտիստայի դեմ, նրան մեղադրելով չափազանց մեծ հրեշավոր գործում, պահանջում է նախ դատապարտել տուգանքի՝ յուրաքանչյուրից 500 դուկատի չափով, նշված մեղադրանքի կապակցությամբ: Այդ գումարը կրաժանվի իրեն՝ Բապտիստայի և գրամատան միջև: Նմանապես պահանջում է, որ նրանք դատապարտվեն նույնատուժանքի օրենքի համաձայն, քանի որ չեն կարող ասացուցել, թե ինքը՝ տեր Բապտիստան, որևէ բան ստացել է որևէ հայից վերոհիշյալ ամուսնության գործի կապակցությամբ:

Ընդ որում ինքը՝ տեր Բապտիստան, պահանջում է նաև ձեզանից՝ հարգարժան տյարբ սինդիկներից, որ Դուր Ձեր պաշտոնի ուժով հետաքննեք խորաթափանց ձեռով այս գործը և խորհուրդ անեք նրա մասին, ելնելով Ձեր պաշտոնից և Ձեր իսկ պատվի համար, քանզի նման խոսքերը չպիտի մնան դետին ընկած, այլ պետք է հետաքննվեն մինչև վերջը: Թող վերջապես հասկանան հիշյալ հավակնոտ հայերը, թե ինչ է նշանակում մեղա-

դրել անմեղ հյուպատոսներին կաշառակերության մեջ. և այդ (իմանան —Վ. Մ.) արդարադատության միջոցով: Բացի դրանից, վերոհիշյալ տեր Բապտիստան ժխտում է շարագրվածները այնպես, ինչպես դրանք պատմվում են, այնպես ինչպես պահանջվում են...

1474 թ. երեքշաբթի, 23 օգոստոսի, ժամը 3-ին: Ներկայացված օրենքով և այլն, հիշյալ տեր Բապտիստայի կողմից, որը ապացուցում է և պահանջում, ինչպես վերևում շարագրված է, և որը խոստացավ գումարի քառորդ մասը, ի նկատի ունենալով վերոհիշյալ մեղադրանքը: Եվ նրա օգտին միջամտեցին և այլն Գրիգորիուս դե Պինուն և Անդրեոլուս դե Գուասկոն...

«Atti», VII, II, էջ 423—425:

61. Ասատուրի և Վաչաբեաի պատասխանը Ջուստինիանիի հեքքոլական պատասխանի կապակցությամբ:

Կաֆա, 1474 թ., 16 օգոստոսի:

Վերոհիշյալ խոջա Աստվածատուրը և Կայաբեսը, օրենքով դատական գործ են հարուցել, վերոհիշյալների ներկայությամբ և այլն իրենց մեղադրանքի և հիշյալ տեր Բապտիստայի կողմից արված պատասխանի կապակցությամբ, որի հետ նրանք համաձայն չեն:

Պատասխանելով, ասում են, թե եթե ինքը՝ տեր Բապտիստան, բոլորը նկատի ունենար, չէր կարող իրենց բանտարկել: Եվ դա միայն խոսք չէ: [Իրենք] չպետք է և ոչ էլ կարող էին բանտարկվել, ելնելով իրադարձությունների տրամաբանությունից և զործերի էությունից: Դրանց մասին նշված է երկու դատական պրոցեսների րնթացքում, որոնք կատարվել են տեր հյուպատոսի ներ-

կայություն, ինչպես նաև կուրիալի տկտերում ու ար-
ձանագրություններում: Դրանց միջոցով նա (Բապտիս-
տան — Վ. Մ.) պարզ կատենի, որ նրանք այդ ժամանակ
չէին կարող բանտարկվել, սակայն իրենց արգելվել է
օգտվելու իրենց իրավունքներին: Այդ բոլորի պատճա-
ռով իրենց հարկ է եղել առնել այստեղից ղանադան և
տարբեր ծախսեր և այլ հաշտնի շատ [գործեր]:

Հիրավի, այն մասին, որ ինքը՝ տեր Բապտիստան,
իր պատասխանում ավելի շատ բաներ է ասում, նրանք
ասում են, որ իրենք հայեր են, ատկայն թե ինչպիսի
ձևով է ամուսնական գործը ընթացել, դա հաշտնի է:
Հաշտնի է նաև, թե ինչքան զբաղ են ծախսել և վատ-
նել այդպիսի... բարեհաճությունների վրա: Եվ նույնպես
պարզ երևում է, թե արդյոք նա զբաղ է բաղադրի օգուտի
ու բարօրության համար. բանդի նրանց դատապաշտպան
պատգամավորների նամակը բողազերծվեց Տեր-Կարա-
պետի կողմից՝ մեղադրանքի ժամանակ ներկայացվելով,
և որպեսզի խաղաղությունը չխախտվի՝ իրենց կողմից
չի խոսվել որևէ կաշառակերություն մասին: Սակայն
սրանց մասին և նրանց կատարած բոլոր [վատ] գործերի
մասին Դուք տեղեկացած լինելով փաստորեն դատաքն-
նություններում նրանց բողազերծումից, Դուք պետք է
գիտենաք, թե ինչքան են տուժել իրենք վերոհիշյալ բան-
տարկության պատճառով, և ինչքան ստիպված են եղել
ծախսել ու [զբաղ] տալ նման դատավճերում: Վերո-
հիշյալ [փաստերը] նկատի ունենալով և որպես ու-
շադրության առարկա վերցնելով, պետք է դատապարտվի
հիշյալ տեր Բապտիստան հիշյալ մեղադրանքի նշված
ձևով և նա պետք է դատապարտվի [մեղադրանքում]
նշված տույժի և տուգանքի:

1474 թ., ուրբաթ օր, 16 օգոստոսի, երեկոյան ներ-
կայացված օրինականորեն:

Տյարբ սինդիկատորներ և այլն:

«Atti», VII, II, 12 426:

62. Պաշտոնագրով արված հայոց եպիսկոպոս Տեր-Կարապետի
յոթերորդ մեղադրանքը:

427 Մի այլ մեղադրանքի շուրջը՝ արված և ներկայաց-
ված հիշյալ տարվա օգոստոսի 16-ին, հայոց նախկին
Եպիսկոպոս հարգարժան Տեր-Կարապետի կողմից, ընդ-
դեմ հիշյալ տեր Բատիստայի, այն մասին, որ հիշյալ
տեր Բաբտիստան զրկեց իրեն՝ տեր Եպիսկոպոսին, իր
Եպիսկոպոսական աթոռից և նրան պաշտոնազրկեց,
նշանակելով և աթոռին նստեցնելով մի այլ Եպիսկոպո-
սի, համաձայն նշված մեղադրանքի ավելի մանրամասն
բովանդակության և ձևի: Եվ [ըստ] այդ մեղադրանքի
և այլն:

428 Հայոց Եպիսկոպոս Տեր-Կարապետը մեղադրում է
Ջուստինիանին՝ իրեն անօրինականորեն Եպիսկոպոսա-
կան աթոռից հեռացնելու համար և պահանջում է վնասի
փոխհատուցում:

Կաֆա, 1474 թ., 16 օգոստոսի

1474 թ., երեքշաբթի օր, 16 օգոստոսի, Երեկոյան.

Արժանապատիվ Տեր-Կարապետը, Կաֆայի հայոց
Եպիսկոպոսը, նշանակված ժամանակին հայոց տեր
պատրիարքի կողմից, դատական գործ է հարուցում,
ըստ օրենքի, ներկայությամբ և այլն, և ամբաստանում
ու մեղադրում է հարգելի տեր Բաբտիստա Ջուստինիա-
նին:

Շարադրում է այն մասին, որ իր Եպիսկոպոս եղած
ժամանակ, հիշյալ տեր Բաբտիստան առանց նրանից
օրինականորեն հաշիվ պահանջելու և առանց դատա-
քննության... տեր պատրիարքին տրված նամակի և կոն-
դակի դեմ հիշյալ Տեր-Կարապետին հնարավորություն չի

տրվել պաշտպանվելու: Եւ հետեարար, նրա պաշտոնա-
զրկումից առաջացել են վնասներ և կոիվներ՝ Տեր-Կա-
րապետի գեմ, որը անօրինական կերպով չի կանչվել
դատաքննության, ոչ էլ նրանից հաշիվ են պահանջել:

Պահանջում է (Տեր-Կարապետը — Վ. Մ.), որ Ձեր
տյարք սինդիկների կողմից հիշյալ տեր Բապտիստան
դատապարտվի հազար վենետիկյան դուկատ (տուգան-
քի) հիշյալ Տեր-Կարապետին պատճառած վնասների ու
վիրավորանքի համար, և ենթարկվի ավելի ծայրահեղ
պատժի, որ նախատեսված է օրենքի, օրինահոգվածների
և կանոնադրությունների մեջ...

«Atti», VII, II, 12 427—428:

63. Զուստինիանիի պատասխանը պաշտոնագրուի
Եպիսկոպոսի մեղադրանքին⁹⁸:

Մաթա. 1474 p., 23 օգոստոսի

- 428 Հարգելի տեր Բապտիստա Զուստինիանիս, Կաֆայի
նախկին հյուպատոսս, դատական դորժ եմ հարուցում,
օրենքի համաձայն և այլն, Տեր-Կարապետի՝ հայոց
-129 կարծեցյալ Եպիսկոպոսի || այս տարվա օգոստոսի 16-ին
արած այգրան անհեթեթ մեղադրանքի կապակցու-
թյամբ, որտեղ այնպիսի բանսարկություններ են բու-
վանդակված, որոնց համաձայն իբր լի հիշյալ Տեր-Կա-
րապետը իր Եպիսկոպոսական աթոռին նստած ժամա-
նակաշրջանում ինքը՝ տեր Բապտիստան, հակառակ օրի-
նականության, առանց դատաքննություն հրավիրելու և
առանց նրան կանչելու, շնչին նկատառումներով և դրը-
դապատճառներով, նրան՝ Եպիսկոպոս Տեր-Կարապետին,
զրկել է իր Եպիսկոպոսական աթոռից և նրա տեղը, որ-
պես Եպիսկոպոս, դրել Տեր-Հովհաննեսին, որպես լի

այդ ժամանակվա պատրիարքի կողմից շինծու նամակի և շինծու կոնդակի հիման վրա՝ տրված Տեր-Հովհաննեսին: Եվ հետևաբար, հիշյալ Տեր-Կարապետը պահանջում է, որ ինքը՝ Տեր Բաբտիստան դատապարտվի տուգանքի՝ 1000 վենետիկյան դուկատի չափով, ինչպես նշված է մեղադրանքի բովանդակության մեջ: Դե թող հայտնի լինի սա բոլորին, որի հետ նա համաձայն չէ: Հակաճառելով, հերքելով և պատասխանելով նշված մեղադրանքին, ասում է, թե բավական զարմանք է պատճառում իրեն հիշյալ Տեր-Կարապետը և նույնպես նրանք (զարմանք են պատճառում), ովքեր նրան նման խորհուրդ են տվել: Հիրավի, Տեր-Կարապետը քաջ գիտե, որ աշխարհիկ մարդկանց կողմից լսված բան չէ, որ աշխարհական տերերը եպիսկոպոսներ նշանակեն: Իրոք, եպիսկոպոսական աթոռին եպիսկոպոս նստեցնելը վերաբերում է տեր պապին, պատրիարքներին, պատվիրակներին և այդօրինակ եկեղեցականներին, և ոչ մի ձևով չի վերաբերում աշխարհիկ անձանց: Հիշյալ Տեր-Կարապետը լավ գիտե նաև, որ Կաֆայի հայերի առանձնաշնորհումների⁹⁹ թվում հյուպատոսները չեն կարող միջամտել հայոց եկեղեցական վեճերին ու դորժերին, քանզի նրանց (հայերին — Վ. Մ.) թույլատրվում է ապրել համաձայն իրենց կրոնի. և այդպես է եղել միշտ, ինչ Կաֆան Կաֆա է: Հետևաբար, ինքը՝ տեր Բաբտիստան, ասում է, թե ինքը չէր կարող զրկել, ոչ էլ զրկել է Տեր-Կարապետին եպիսկոպոսի պաշտոնից, այլ նրան (Տեր-Հովհաննեսին — Վ. Մ.) այդ աթոռին նստեցրել կամ նստեցրել են իր հայ բարձրաստիճան հոգևորականները, կամ իր պատրիարքը: Որովհետև առաջանում էին այդպիսի մեծ երկպառակություններ, գծտություններ և հսկումներ Կաֆա քաղաքում իրենց պատրիարքի կողմից [եկած] նոր լեզատների¹⁰⁰ ժամանման առիթով և քանի որ այդ երկպառակությունները տանում էին դեպի Կաֆայի ժողովուրդների մեծագույն անկումը և անասելի

աղետը, ինքը՝ հյուսիստոս տեր Բաբտիստան, միշտ հոգացել է, որպեսզի հանդարտեցնի նման երկպառակությունները և վեճերը բազմաթիվ բարօրության ու իր պատվի համար, որովհետև ինքը պարտավոր էր աչգուհս վարվել:

Հետևաբար, երբ հիշյալ Տեր-Հովհաննեսը¹⁰¹, որպես հիշյալ տեր պատրիարքի պատգամավոր, եկավ այստեղ, Կաֆա, և ինքը՝ տեր Բաբտիստան տեսավ, որ նա պատգամավորի իրավասություններ ունի, տյարբ Ավագների խորհրդով և որոշումով կանչվեց (պատգամավորը — Վ. Մ.) խորհուրդ, իբրև մի անձի, որն ուներ կոնգակ և իրավունք՝ նշանակելու կամ պաշտոնազուրկ անելու նրան, ում նախընտրաբար ցանկանում էր, որպեսզի վերջ դնի հայոց երկպառակություններին ու վեճերին:

Այդ Տեր-Հովհաննեսը խորհրդում եղած ժամանակ, իր սեփական հայեցողությամբ, որոշեց, թե ում էր ցանկանում նշանակել և ում պաշտոնազուրկ անել և իրեն՝ տեր Բաբտիստայի, իրավասությանը չէր վերաբերում հիշյալ Տեր-Կարապետին դատաքննության կանչել || օրինականորեն կամ ոչ օրինականորեն, որովհետև հյուսիստոսի իրավասությունից զուրս է որևէ եպիսկոպոսի դատաքննության կանչել, որպես մեղավորի, հատկապես եպիսկոպոսության հարցում: Ուստի, հիշյալ Տեր-Կարապետը պաշտոնազուրկ է արվել իր պատրիարքի պատգամավոր Տեր-Հովհաննեսի կողմից: Հետևաբար, և այստեղից բխում է, որ հիշյալ մեղադրանքն իր մեջ պարունակում է կեղծիք և մտքերի հակասություն: Ամբողջ վերահիշյալը, պարզ երևում է, Կաֆայի գրասենյակում պահված վավերական և հասարակական գրություններում, որոնք ցույց տվեց և ներկայացրեց հիշյալ գրասենյակի արձանագրություններում...

Եվ որովհետև հիշյալ Տեր-Կարապետը Սուրբ Գևորգի ազնվափայլ գրասենյակի լիազորությունների կարգին հակառակ հավանություն ցուցաբերեց ճշմարտությանը հակառակ մեղադրելու իրեն՝ նախկին տեր հյու-

պատոս Բաբտիստային, որն անմեղ է և առնչված չէ նշված մեղադրանքում [շարագրված] բոլոր պնդումների հետ... այդ պատճառով պահանջում է այն լավագույն ձևով, ինչ կարելի է, հետևելով Սուրբ Գևորգի վարչության լիազորությունների կարգին, դատապարտել և դատապարտված համարել հիշյալ Տեր-Կարապետին՝ վճարելու տուգանք 1000 դուկատի չափով, որ պետք է վճարվի կիսով չափ իրեն՝ տեր Բաբտիստային, որպես փոխհատուցում իր տուժած պատվի համար, և կիսով չափ՝ մասարների դրացենյակին, անշուշտ բոլոր ներկա ու ապագա վնասների և ծախսերի փոխարեն, որոնք պատճառվել են հիշյալ մեղադրանքի առնչությամբ...

1474 թ., երեքշաբթի, 23 օգոստոսի, ժամը 3-ին ներկայացված ըստ օրենքի և այլն, հիշյալ տեր Բաբտիստայի կողմից, որը խոստացավ հիշյալ մեղադրանքի առիթով 400 դումարի համար քառորդը նվ նրա օգտին միջամտեցին և այլն Գրեգորիոս դե Պինու և Անդրեևոս դե Գուասկո ներքո և այլն պատասխանողներ և այլն: Տյարք սինդիկները բոլոր վերոհիշյալը ընդունեցին և այլն:

«Atti», VII, II, 12 429—430:

64. Կայարեսի՝ Տեր-Կարապետ եպիսկոպոսի

Քաղաքապետարի պատասխանը:

Կաֆա, 1474 թ., 26 օգոստոսի

430

Վերահիշյալ Կայարեսը՝ պատվարժան Տեր-Կարապետի հավատարմատարը, դատական հարց է հարուցում և այլն հիշյալ Տեր-Կարապետի արած մեղադրանքին հիշյալ տեր Բաբտիստայի կողմից տված պատասխանի կապակցությամբ, որի (պատասխանի — Վ. Մ.) հետ նա համաձայն չէ... Ասում է, որ հարկ չկա զարմանալու

Տեր-Կարապետի կապակցությամբ, քանի որ բոլորը գիտեն || որ նա անարգարացիորեն է հեռացվել իր եպիսկոպոսական աթոռից, քանզի չպետք է և չէր կարող պաշտոնազրկվել, մի անգամ այդ պաշտոնին նշանակված լինելով ամենապատվարժան տեր պատրիարքի կողմից և այդ տեր պատրիարքի նամակի բացակայությամբ պաշտաններում, որով նա պիտի պաշտոնազրկվեր. նա չէր կարող և չպետք է պաշտոնազուրկ արվեր այդ ժամանակվա հյուպատոս հիշյալ տեր Բաբտիստայի ձեռքով:

Իրոք, բոլորը գիտեն, թե ինչպես այդ կատարվեց. պատվիրակի անունով հանդես եկողները (կարծեցյալ պատվիրակները — Վ. Մ.) երբեք չեն ներկայացրել երբեմնի տեր պատրիարքի նամակը, որով ինքը՝ Տեր-Կարապետը պիտի պաշտոնազուրկ արվեր և իբր թե գոյություն ունեցող կոնդակի հիման վրա, որը իբր թե ունեին և որով իբր իրավասություն են ունեցել նշանակելու և պաշտոնազրկելու [հայ] եպիսկոպոսներին: Պետք չէր առաջ գնալ այնքան, որ կատարվեր այդպիսի արտաոռյա արարք, հիշյալ Տեր-Կարապետին հեռացնելով իր եպիսկոպոսական աթոռից: Եվ իրենք՝ պատվիրակները, որոնք ապականված էին (կաշառք էին ստացել — Վ. Մ.) և գիտեին, որ հրամանագիր չունեն, թեև Կաֆայում էին հիշյալ տեր Բաբտիստայի հյուպատոս դառնալու ժամանակից շատ առաջ, չհամարձակվեցին օգտվել իրենց կեղծ և ապականված կոնդակից հարգելի տեր Իոֆրեզի¹⁰² հյուպատոսությունն ժամանակ, այլ սպասեցին հարմար ժամանակի, որպեսզի հիշյալ տեր Բաբտիստայի մերձավոր անձանց աջակցությամբ կարողանան իրականացնել իրենց կամեցածը՝ հակառակ պարտքի և ազնվության, քանզի չէր կարելի պաշտոնազուրկ անել Տեր-Կարապետին առանց նրան օրինական դատարանություն կանչելու և օրինականորեն պահանջ ներկայացնելու նրան: Որ իսկապես հիշյալ պատվիրակները կաշառակե-

րությամբ էին ապականւած՝ հաստատ երեւում է նրանց նամակից՝ գրւած երբեմնի: ամենապատւարժան տեր պատրիարքին: Այդ նամակից: կարելի է հղրակացնել, որ նրանք շէն ունեցել կոնդակ: Եւ ինչ-որ մեկի ասելով որպէս թէ հյուպատոս Ջուստֆինյանին կողմնակից էր նրանց, ովքեր ցանկանում էին Պանջիաշերին (Տեր-Հովհաննեսին — Վ. Մ.). իրենց նամակում, ի միջի այլոց, նրանք հայտարարում են, որ այդ անում են ոչ բանակահոլովյամբ և ոչ էլ տեր պատրիարքի որեէ կոնդակի համաձայն, այլ որովհետեւ այդպէս են ցանկանում հյուպատոսները, ընդ որում, ինչպէս ներկա, այնպէս էլ ապագա հյուպատոսը:

Նմանապէս, որ իրենք՝ պատվիրակները, բարոյազրկւած էին և ապականւած: Կաշառակերությամբ ու ցանկանում էին աջակցել ի օգուտ Պանջիաշերի, պարզ երեւում է իմ սեփական և կարծեցալ պատվիրակների: նամակներից, որոնք աղաչում էին, որպէսզի հիշալ նամակներով տեր պատրիարքը այնպէս անի, որ իրենք՝ պատվիրակները, այս բաղաբում խաշտառակության շմատնովեն, հասկացնել տալով, թէ հյուպատոսն այնպիսին է, որ թեև ցանկանում է, սակայն չի կարող այլ կերպ գործել, ուզենալով սիրաշահել ժողովրդին թուրքական սպառնալիքից¹⁰³: Դուք տեսնում եք, թէ ինչպիսի մտքեր են ընդմիջարկել [նամակում] իրենք՝ պատվիրակները. նրանք ցանկանալով շողոքորթել պատրիարքին, գրում էին, որ ունեն 400 դուկատ պատրիարարանի համար և 100 դուկատ՝ Կոստանդնուպոլսի պատվիրակի համար. սա կեղծ վավերացում էր, ինչպէս երեւում է նամակից, որտեղ այնուհետեւ գրում էին, թէ իրենք, ինչպէս նաև Պանջիաշերի շրջապատին պատկանող այլ անձանց հետ միասին ծախսել են 1000 դուկատ: Այդ և այլ փաստերի մասին ավելի մանրամասն երեւում է հիշալ նամակից, որը ներկայացւում է և որի միջոցով նրանք բացեիրաց ընդունում են, որ սպասել են հիշալ տեր Բարտիստայի (նշանակմանը):

Մյուսպիսով, հիշյալ նամակից կարելի է դատել, թե ինչպիսի մարդիկ են եղել հիշյալ պատվիրակները և
 || թե ինչպես չէր կարելի Տեր-Կարապետին հեռացնել իր
 աթոռից: Հետևաբար, արդարացիորեն հիշյալ տեր Բար-
 տիստան համարվում էր պատասխանատու հիշյալ Տեր-
 Կարապետին [պատճառած] բոլոր վնասների և նրա շա-
 հերի (բարօրություն — Վ. Մ.) համար, քանզի նաև խոս-
 վում է այն մասին և իմացվում է, թե ինչպիսի անտեղի
 բարեհաճություններ է նա արել հիշյալ Պանչիաջերին և
 այդ կարծեցյալ (Կեղծ — Վ. Մ.) պատվիրակներին՝ հա-
 կառակ պարտքի զգացումի ու ազնվություն: Եվ գերա-
 վանցապես, որովհետև տեսնում եք, թե հիշյալ կարծեց-
 յալ պատվիրակները կարծես ներողություն են խնդրում
 իրենց իսկ հիշյալ նամակում նրա համար, որ նա (Բար-
 տիստան — Վ. Մ.) այնպիսի հյուպատոս է եղել, որ
 ղեպերի բերումով այդպես վարվեց, պատճառաբանելով
 թուրքական սպառնալիքը, և դա այն պատճառով, որ
 հյուպատոսին հարկ էր հաճոյանալ Պանչիաջերի կողմ-
 նակիցներին:

Հիմա տեսնենք, թե արդյոք ճիշտ է, որ հյուպատոսը
 այդպես է վարվել թուրքական սպառնալիքից և այլ
 զրդապատճառներով, որոնք նշվում են այդ նամակում:
 Վերոհիշյալ և այլ [փաստերից] ելնելով, նա պետք է
 դատապարտվի: Եվ եթե ինքը՝ տեր Բարտիստան, անմեղ
 է կամ եթե, բայց իր ասածի, ինքը հանցանք է գործել
 այդ կարծեցյալ պատվիրակների պատճառով, նա [այդ
 ղեպերում] հանդես կգա հիշյալ կարծեցյալ պատվիրակ-
 ների դեմ: Հիրավի, չէ որ ինքը՝ տեր Բարտիստան,
 չպետք է հասներ իր նշանակությամբ այդպիսի մեծ գոր-
 ծի կատարման, կամ եթե հասներ այդ գործին, պիտի
 աներ միայն օրինական ձևով և օրինականության հա-
 մաձայն [դատաբնական] պրոցեսի միջոցով, որի ըն-
 թացքում պիտի բննվեին այդ գործի մանրամասները,

հատկապես այն պատճառով, որ բացակայել է տեր պատրիարքի նամակը, որը կհանձնարարեր Տեր-Կարապետին պաշտոնագրով անել:

Հետևաբար, նորից եզրակացություն է արվում, թե ինքը՝ տեր Բաբտիստան, լինելով վնասի պատճառը, պետք է դատապարտվի՝ կամ վնաս կրելու, կամ իր պատճառած վնասի հատուցումը տալու: Թե ինչպիսին են վնասները, դրանք հայտնի են և նրանք ինքնաապացույց են և պարզ են, որովհետև հարկ եղավ մարդիկ ուղարկել երկրի մայրաքաղաքը ամենապատվաբան տեր պատրիարքի մոտ. նրան գտան վախճանված և նոր պատրիարքի նշանակումից հետո այդ մասին իմացվեց այդ կեղծարար պատվիրակների նամակից ի դիտություն ամբողջ պատրիարքական կուրիայի: Հաստատ հավաստիացվեց, թե Տեր-Կարապետը նշանակված է իր նախորդի կողմից, 24 եպիսկոպոսների կամքով. այդ անգամ ևս [պատրիարքը] Տեր-Կարապետին հաստատեց և նշանակեց հիշյալ եպիսկոպոսական աթոռին, խուսափելով հիշյալ Տեր-Կարապետի պաշտոնազրկություն շուրջը եղած անվայել գործերի հիշատակումից: Նրա քննություն հաստատման վավերացման համար պատվիրակներ են ուղարկվել այս քաղաքը: Այդ բոլորը կարող էր տեղի ունենալ միայն (նյութական ու բարոյական — Վ. Մ.) մեծ վնասների ուղեկցությամբ, և դրանց ամբողջ փոխհատուցմանը պիտի դատապարտվի հիշյալ տեր Բաբտիստան:

Ի ներկայություն և այլն. վերապահությամբ և այլն: 1474 թ., ուրբաթ օր, 26 օգոստոսի, երեկոյան, ներկայացված ըստ օրենքի և այլն վերոհիշյալ Կայսրեսի կողմից. վերոհիշյալ անունից հանդես գալով, ինչպես վերևում: Տյարք սինդիկներ և այլն:

«Atli», VII, II, էջ 431—432:

65. Վերոհիշյալ սեղադրանքից հյուպատոս Ջուստինիանին
արդարացնելու որոշում:

Կաֆա, 1474 թ., օգոստոսի (վե՛րջ)

Նկատի ունենալով վերոհիշյալ մեղադրանքը և պարունակությունը, պատասխանը և բնոգրիմախոսությունը՝ վերոհիշյալ մեղադրանքին՝ կատարված հիշյալ տեր Բաբտիստայի կողմից; նույն տեր Բաբտիստայի կողմից և ներկայացված երաշխիքները, նկատի ունենալով նաև սույն ամսի օգոստոսի 26-ին հիշյալ պատվարժան Տեր-Կարապետի հավատարմատար Կայարես դե Սյունիի ներկայացրած զրդությունը, նրա բոլոր և յուրաքանչյուր պարունակությունների հետ, և միայն այդպիս և այլն, ըստ անհրաժեշտ ձևի և այլն ս. Քրիստոսի անունը վկայակոչելով և այլն:

Ակնհայտի կերպով քանզի հիշյալ տեր Բաբտիստային վերոհիշյալ բոլոր մեղադրանքից և նրա պարունակած բոլոր և յուրաքանչյուր բովանդակություններից (ազատել և համարել արդար — Վ. Մ.):

«Atti», VII, II, 12 433:

66. Կաֆայի հյուպատոս Անտոնիո Կաբելայի¹⁰⁴ զեկուցագիրը
Սբ. Գևորգ բանկի խնամատարներին՝ քաղաքում տիրող
դրության և հաշ կպիսկոպոսի ընտրության մասին:

Կաֆա, 1474 թ., 14 սեպտեմբերի

(Կրճատումներով)

148 ...Այդ ժամանակ պաշտոնազուրկ արված [հայ] եպիսկոպոսի ընկեր մի հոգևորական մեկնեց պատրիարքի մոտ (Կ. Պոլիս — Վ. Մ.), բայց նրան գտավ արդեն

վախճանված. և նրա օգնականին շարադրել է այդ պաշտոնադրկման փաստը, թե ինչպես բռնի ուժով այդ եպիսկոպոսը զրկվել է աստիճանից: Այսպիսով, ամեն ինչ հանգամանորեն պատմելով, նա շահել է նոր պատրիարքի վստահությունը, որն ուղարկել է երկու նոր պատվիրակներ, որոնք առ այսօր արդեն երկու ամիս է տպրում են Կաֆայում: Այդ պատվիրակները հետամտեցին երկրորդ եպիսկոպոսի պաշտոնադրկումը և երկրորդ անգամ ավոտին բազմեցրին առաջինին, հակառակ ժողովրդի մեծամասնության ցանկության, որը պաշտպանում էր երկրորդի թեկնածությունը, այն ժամանակ, երբ նրա մրցակիցը բարձր համբավի տեր և հարգանքի արժանի մարդ էր և ի լրումն դրա՝ ծննդյամբ կաֆացի: Այստեղից էլ թշնամական ելույթները, խռովությունները, եկեղեցիները փակելու սպառնալիքները և ցասումնալից անկարգությունները, որոնք առաջ բերեցին շարադետ բախումների ժողովրդի և իշխանությունների հարաբերություններում:

Նման փաստերի հետևանքով ես, տակավին իմ մասար եղած ժամանակ, կարդացել էի այն խիստ նկատողությունը, որն արել էր ձեր բանկը հյուպատոս Լերկարին այն բանի համար, որ նա միջամտել էր ներկա վեճին, և, չցանկանալով ընկնել նման մոլորության մեջ, ես ինձ մոտ կանչեցի նորերս ժամանած երկու պատվիրակներին, որոնք դեռևս ապրում են այստեղ, և մեր լատին պրելատի (եպիսկոպոսի —Վ. Մ.), մասար Օրերտո Սկվարչիաֆիկոյի և ավագների ներկայությամբ, լսելով փոխադարձ կշտամբանքներն ու փաստարկումները, խոսք տվեցի շմիջամտել նրանց վեճին, որը զուտ եկեղեցական բնույթի է, առավել ևս, որ իբրև զաղովի գերագույն դատավոր և հասարակական կարգի պահպան, ես պարտավոր էի կառավարել հայ բնակչության թե մեկ և թե մյուս կուսակցությանը, ոչ թե ինչ-որ մի

յոթ, ութ, տասը դժգոհներ: Չեմ հուզվի, մինչև ձեզանից չտաճանամ հետադա հրահանգներ: Այդպիսին են իմ ջերմ ցանկությունները ոչ այնքան ինձ, որքան իմ սեղակալների համար:

Չեմ ուզում թաքցնել մի հանգամանք: Կայարեսը՝ Կոմիտուլ-բեյի Սյունիի որդին, ինձ նվեր էր ուղարկել 200 ոսկե գուկատ, որպեսզի ես թույլ տալի ներկա եպիսկոպոսի աթոռազրկումը և վերականգնելի պաշտոնազրկվածին, որի հետևա ազդակցական կապեր ունի: Այդ նվերը ես արհամարհանքով մերժեցի, մարդ ուղարկեցի կանչելու Օբերտո Սկվարչիաֆիկոյին և Ֆրանչեսկո Ֆիեսկուն¹⁰⁵, իմ խորհրդականներին և օղնականներին, և նրանց ու Ավագների խորհրդի ներկայությամբ, ուղարկվածը (Կայարեսի ուղարկած անձը — Վ. Մ.) խոստացավ քաղաքում շառաջացնել ոչ մի խառնակչություն և հուզումներ՝ խանդարողից պանծառտան օգոտին 2000 սոմ տուգանք վերցնելու սպառնալիքով: Իսկ երկու նվիրականներին, երկրից վտարվելու սպառնալիքով, ես հրամայեցի ձեռնադհ մնալ եպիսկոպոսի բնարություն օրինականության և անօրինականության շուրջը առարկումներ անելուց: Խոստության այսօրինակ ձանադարհով ես, վերջապես, հաստատեցի հարաբերական հանգիստ և խաղաղություն այնքան զրգոված կրքերի միջև. սակայն զրան երաշխիք չեմ տալիս, որովհետև ինձ դիմում են համառ խնդրանքներով, որպեսզի ես թույլ տամ երկու պատվիրակներին օգտվելու իրենց պատրիարքական իրավունքից, բայց ինձ թվում է ավելի արդարացի կլինի բավարարել բնակչության մեծ մասին:

Այն ամենի մասին, ինչ որ ես գրում եմ ձեզ, դուք ավելի մանրամասն կարող եք իմանալ մեր քաղաքացիներից, որոնք վերադառնում են հայրենիք: Միայն թե չհարցնեք Գերարդո Վիվալդոյին, Կայարեսի մեծ բարեկամին: Նա կարող է մթապնել դործը և ամեն ինչը շասել: Այս վերջինը (Կայարեսը — Վ. Մ.), որովհետև հարուստ

149 և և մեծ գումարների վարկառու, պնդում է, թե || դրամով կարող է ամեն ինչ անել: Դուք, իմ խնամատարներ, արդարացի վարված կլինեիք, եթե Կալարեաին կանչեիք Ջենովա և զսպեիք նրա հանդգնությունը:

...Անցած հունիսին խանր ասպատակության ուղարկեց իր եղբայր Հալդարին:

...Ասպատակությունը կատարվել է Լեհաստանի մասերում, որտեղից բշված են մեծ քանակությամբ անասուններ և, որն ավելի վատ է, 18—20 հազար հոգի՝ Ռուսաստանից ու Լեհաստանից, որոնց մեջ, ասում են, շատ կան տղաներ, որոնց պահելու են որպես ստրուկներ: Իմացեք, որ մենք երկրորդ պատվիրակությունն ենք ուղարկել, որպեսզի համոզենք թաթարներին նրանց (գերիներին — Վ. Մ.) չծախելու թուրքերին, որպեսզի նրանք չզրկվեն հավատից: Ահա շուտով մենք կտեսնենք նրանց ծնողներին, որոնք կզան, որպեսզի փրկագնեն նրանց, բայց նրանց վիճակն էլ լավ չի լինելու: Պատասխանը սիրալիր էր, բայց ևս վախենում եմ, որ այդ պատանիների մի պատկառելի մասը արդեն վաճառված է, քանի որ որոշ թուրքեր, որոնք ժամանել էին իրենց ապրանքները վաճառելու, դրանք զիջել են էժան գներով, որպեսզի ավելի շատ դրամ հավաքեն և ստրուկներ գնեն:

«ИТВАК», № 55. 1918, էջ 148—149, համտ. «Атти», VII, II, էջ 117—124:

67. Մասար Օրերտո Սկվարչիաֆիկոն տեղեկացնում է խնամատարներին երկու հալ եպիսկոպոսների և հյուպատոս Կոսթելայի միջև ծավալվող վեճի ընթացքի մասին և քննադատում Կոսթելայի վարքագիծը այս խնդրում:

Կաֆա. 1474 ր., 13 և 14 սեպտեմբերի

325 Ազնվափայլ և հզոր տերեր, մեր ամենահարգելի տերեր. ցարդ տեղի ունեցած դեսպերի մասին Ձեզ տե-

ղեկացրել եմ երեքական և շորսական նամակներով, ինչպես որ ես պետք է անեի համաձայն ինձ տրված Ձեր հանձնարարության. և այսպիսով նմանապես՝ հիշելով իմ պաշտոնից բխող պարտականություններից՝ այսուհետև ես պարտավոր եմ Ձեր իշխանություններին տեղեկացնել տեղի ունեցող դեպքերի ընթացքի մասին... Հայերի Եպիսկոպոսության վեճի հարցը, որի մասին Ձեր իշխանությունները գրել էին մինչև իմ այստեղ գալը և որը գրեթե խաղաղեցված էր, նորից բռնկվեց: Ակներեաբար այն պատճառով, որ հայոց պատրիարքը, որը կարգվել է վերջերս, իր նախորդի մահվան հետեանքով, երբ իմացավ, որ հայ Եպիսկոպոսը իր վերոհիշյալ նախորդի կողմից հեռացվել է իր || Եպիսկոպոսական աթոռից և որ աթոռին մի այլ անձ է գրված, մեզ մոտ ուղարկեց պատգամավորներ՝ պաշտոնական նամակով, իրենց պատգամախոսություններ: Պատգամավորները նմանապես բերեցին այլ գրություններ տեղի հյուպատոսին և մեզ ու հարգարժան լատին մեր տեղի Եպիսկոպոսին: Այս գրություններում խոսվում է հայ երկրորդ այդ Եպիսկոպոսի պաշտոնանկության մասին, որպես անօրինականորեն նշանակված Եպիսկոպոսի: Խնդրում են մեզին և մեր հարգարժան Եպիսկոպոսից իրենց հայտնել, թե մենք ինչքանով պատրաստ և տրամադրված ենք ցանկանալու ներկա վերոհիշյալ Եպիսկոպոսի հեռացումը: Համոզում և հորդորում են մեզ և մեր հարգարժան տեղի Եպիսկոպոսին՝ վերականգնելու վերոհիշյալ նախորդ Եպիսկոպոսին իր Եպիսկոպոսական պաշտոնում, որպես օրինականորեն ընտրված ըստ իրենց կարգ ու կանոնների: Եվ առավելապես այն պատճառով, որ ոչ մի պատճառ չի եղել, որպեսզի նա հեռացվի իր Եպիսկոպոսությունից: Ինքը՝ պատրիարքը, այս նամակով բանադրանք է ուղղում հայ բնակչությանը և այն կղերականներին, որոնք հակառակվել են ներկա նշանակմանը: Այս բոլոր հարցերի առթիվ մեր ներկա հյուպատոսը ժողովի է հրավիրել

հարգարժան մեր եպիսկոպոսին, մեզ՝ մասարներին, և մեծամեծներին և բոլորի ներկայութեամբ՝ նույնպէս կանչվեցին նաև պատրիարքի պատգամավորները և իրենք՝ հայ երկու եպիսկոպոսները, որոնք առաջին և ցույց տվեցին՝ յուրաքանչյուրը իր իրավունքները եպիսկոպոսական աթոռի նկատմամբ: Սրանց լսելուց հետո նրանք մեր կողմից ազատ արձակվեցին. և տեր հյուպատոսը, շնանկացավ, որ ոչ մենք և ոչ էլ ինքը՝ տեր եպիսկոպոսը, և մեծամեծները այլ բան ասեն, այնպես որ այս գործը մինչև հիմա մնում է անորոշ աչն պատճառով, որ մեր այս հյուպատոսը ցանկացավ և ցանկանում է այդ գործը ինքնիշխան ձեով վարել ու լուծել: Եվ դա առաջ բերեց իրենց՝ հայերի, և ամբողջ գրասենյակի մեծ դժգոհությունը, որովհետև ասում են, որ այս արարքները կատարվել են շատ մեծ կաշառակերությունների միջոցով, որ հայերին մեծապես վանում են աչն բարեպաշտությունից, որ նրանք տածում էին Ձեր այս իրավակարգի հանդեպ, ուր Ձեր իշխանությունների կողմից շատ էր քարոզվում, որ Ձեր ցանկությունն է, որ Կաֆան լինի արդարության տաճար: Մինչդեռ, ընդհակառակը, այս կերպ մեծագույն վնաս է հասցվում այս քաղաքին և Ձեր պատվին: Քանզի Դուք քաջ գիտեք, որ այս երկրորդ եպիսկոպոսը, որն այժմ տիրում է աթոռին, չէր կարող փոխարինվել մշուսով հենց իրեն՝ պատրիարքի վկայակոչումով, որն ասում է, թե առաջին եպիսկոպոսին չի կարելի հեռացնել իր աթոռից, այնպես, ինչպես չի կարելի կնոջը բաժանել իր ամուսնուց՝ բացի մահվան դեպքից: Այս բանը այստեղ շատ քիչ է հարգվում:

Հետևապես, ազնվաբայ տերեր, ևս շարունակ ասել և իմ բողոքն եմ հայտնել աչն սոթիվ, որ նման գործերում պետք է հարգվեն մեր նամակներում բովանդակված հանձնարարականները. նրանք իրենց որոշ մասում շատ քիչ են հարգվել և ես այլ բան չեմ կարող ասել, բան հիշեցնել այդ մասին. սակայն ոչ իմ, || ոչ էլ մեր

տեր Եպիսկոպոսի հիշեցումները ոչ մի հետեանք չեն տվել, որովհետեւ մեզ չեն կանչել և չեն կանչում որեւէ տեական խորհրդի, և դորժը վարվում է լուսվյալմբ, ոչ առանց մեծ անպատվութեան և ծանրութեան մեր ղիրքի նկատմամբ: Սրա հետեանքով ոչ առանց բանական հիմքի հաղորդվում է, և դա շատ ճշմարիտ է, որ տեղի են ունեցել հսկայական շափի կաշառակերութեաններ...

«Atli», VII. II, 12 325—327:

68. Զիրուամո Պանիսարին՝ Կաֆայի լատին եպիսկոպոսը, հայտարարում է հյուսարտոս Կաբելային, որ իսկական և օրինական հայ եպիսկոպոսը, ըստ իր կարծիքի, Տեր-Կարապետն է և խորհուրդ է տալիս վերականգնել նրան իր աթոռին:

Կաֆա, 1474 թ., 14 սեպտեմբերի

- 329 Ի Քրիստոս պատվարժան հայր, տեր եղբայր Հերոնիմոս Պանիսարիոսս, աստծո և առաքելական աթոռի շնորհիվ Կաֆայի եպիսկոպոսս, ներկայանում է Ձեզ՝ ազնվափայլ տեր Անտոնիոտո դե Կաբելային, Կաֆայի հարգարժան հյուսարտոսին ներքոհիշյալ գործի կապակցությամբ. ասում է, որ պատվարժան... պաշտոնանկ
- 330 արված հայ եպիսկոպոս || Տեր-Կարապետը հեռացվել է իր եպիսկոպոսական աթոռից այդ պատվիրակների բերած կոնդակով և փոխարինվել է Տեր-Հովհաննեսով, որին Պանջիաջեք են կոչում [և] որը օրինականորեն է զբաղեցնում եպիսկոպոսական աթոռը: Պատվարժան տեր պատրիարքը վավերական մի նամակ է գրել իր պատգամավորների հետ այս քաղաքի ներկա եպիսկոպոս Հերոնիմոսին. նամակում նա իր ցասումն է հայտնում վերոհիշյալ Տեր-Կարապետի հեռացման առթիվ, որը եպիսկոպոս էր կարգվել օրինական կերպով իր նախորդ պատրիարքի կողմից և, որպես այդպիսին, հա-

մարվում է և այժմ հենց իր՝ պատրիարքի կողմից: Սրանից հերակացվում է, թե արդարությունը պաշտպանելու համար ինքը՝ լատին տեր եպիսկոպոսը, պետք է աջակցի արդարությանը, որպեսզի Տեր-Կարապետը խաղաղությունամբ հաստատվի իր եպիսկոպոսական աթոռին և ինքը՝ լատին տեր եպիսկոպոսը, այս հանգամանքից ելնելով պատրիարքական նամակի զորությամբ համարվում է պատվիրակ այս գործում... Այս տեղի չպիտի ունենար, որովհետև Պանջիաջերին (Տեր-Հովհաննեսին — Վ. Մ.) հարկավոր էր անմիջապես պաշտոնազրկել, բանի որ նա, չունենալով ոչ մի հեղինակություն հայ եպիսկոպոսի պաշտոնի համար, եպիսկոպոսական աթոռը վավթել է առանց որևէ հեղինակության և հարկ էր արդարության ու Կաֆայի օրենքների պաշտպանության և ավատական հին Կաֆայի պատվի պահպանման համար հիշյալ Տեր-Կարապետին նստեցնել իր եպիսկոպոսական աթոռին:

Եվ նրանք, ում պատրիարքի ատյանի կողմից հանձնվել է նամակը, իրենց պարտքն են համարում [պահանջել], որպեսզի հարգվի արդարությունը և խարդախություններն ու խաբեությունները տեղ չգտնեն, և հաղթանակի արդարությունը, որը պետք է ծաղկի Կաֆա բաղաբույսում, որ Սուրբ Գեորգ նշանավոր վարչության գերագույն իշխանությունը այնքան ջանասիրություն և կամք պետք է գործադրի, որպեսզի [Կաֆան] լինի արդարության տաճար: Եվ այս նշանավոր ատյանի հանձնարարականներն այն են, որպեսզի ոչ ոք, բացի լատին եպիսկոպոսից, չմիջամտի այդ գործին: Այս նամակում Ձեզնից՝ անվանի տեր հյուպատոսից, և այս գործին առնչվողներից (պահանջվում է — Վ. Մ.), որ այս կատարվի: Պետք է ցանկաք այնպես անել, որ տեղ լինի արդարության և տեր պատրիարքի հանձնարարությունների կատարման համար, պետք է ցանկաք խաղաղությամբ և պատվով Ձեր ձեռքը մեկնել վերոհիշյալ Տեր-

Կարապետին, որը ամենաառաքինի մարդն է և հայերի
իսկական եպիսկոպոսը, այնպես որ նա վերականգնվի
և վերահաստատվի իր հայ եպիսկոպոսական աթոռի
վրա, ինչպես այդ պետք է կատարվի վերոհիշյալ և շատ
հանրահայտ պատճառներով:

Մյուս կողմից, այս նամակում ներողություն է
խնդրում աստծուց և նշանավոր ատյանից, որ իրենից՝
լատին եպիսկոպոսից, կախված չի եղել և կախված չէ,
որ հիշյալ Տեր-Կարապետը նստեցվի իր եպիսկոպոսա-
կան աթոռին: Քանի որ համաձայն նրանց իսկ օրենք-
ների և եկեղեցական կանոնների, անհրաժեշտ իրավուն-
քով և օրինականությամբ ընտրված ու հաստատված հա-
յոց եպիսկոպոսը ուրիշ ոչ մեկը չէ և չի էլ կարող լինել
331 իսկական հայոց եպիսկոպոս, բացի վերոհիշյալ Տեր-
Կարապետից, || և նա այն անձն է, որն այս քաղաքում
ունի օրինական և լիակատար իրավունք ու տնօրինու-
թյուն Կաֆայի հայոց եպիսկոպոսության նկատմամբ:

Սեպտեմբերի 14-ին, 1474 թ., շորեքշարթի, երե-
կոյան, պալատի մեծ սենյակում, Թափեյհանոյի
վերևում:

Հաստատված է օրենքով ու ներկայությամբ վերո-
հիշյալ ազնվափայլ տեր հյուպատոսի, հարգարժան տեր
եղբայր Բատիստա Ֆատինանտիի՝ Կաֆայի Քարողիչե-
րի միաբանության փոխանորդի կողմից, որը այս գոր-
ծում ներկայանալով վերոհիշյալ հարգարժան եպիսկո-
պոսի անունից, վերոհիշյալի անունից ասում, պահան-
ջում ու բողոքում է, ինչպես վերևում նշված ամեն ին-
չում: Ազնվափայլ տեր հյուպատոսը վերևում նշվածները
ընդունեց ոչ այլ կերպ, բան այնքան, որքան դրանք
առնչվում են օրենքին, հայտնելով, թե ինքն իրեն ժա-
մանակ է վերապահում ավելի ընդարձակ կերպով պա-

տասխանելու հարգելի իրավագետ տեր փոխանորդի հետ
խորհրդակցելով, որին սպասում է մոտակայում:

Վերը արտագրված է, ինչպես վերևում կա, Կաֆայի
գրասենյակի հասարակական գործադրների իմ՝ ներքո-
ստորագրյալ գրասենյակի քարտուղարիս կողմից, Կա-
ֆա քաղաքի մյուս նշանավոր պրովիդոր և մասար տեր
Օբերտո Սկվարչիաֆիկոյի պահանջով ու հանձնարա-
րությամբ: Գրիգոր Անտոնիոս դե Բոցոլլո:

«Atti», VII, II, էջ 329—331:

69. Երկու հայեր՝ Ասատուր Բազարբաշին և Ավետիքը,

Տեր-Կարապետ եպիսկոպոսի հավատարմատարները,
ներկայացնում են Կաֆայի հյուպատոսին, մատարներին և
հյուպատոսական խորհրդին իրենց հովանավորյալի
փաստարկումները և խնդրում, որպեսզի ծանուցում տրվի

Ձեռնովայի Սր. Գևորգ բանկի վարչությանը:

Կաֆա. 1474 թ., 21 հոկտեմբերի

- 331 Ասատուր Բազարբաշին և Ավետիքը [հանդիսանում
են] աստծո և պատրիարքական աթոռի [շնորհոք] Կա-
ֆայի հայոց եպիսկոպոս, մեծապատիվ հայոց տեր պատ-
րիարքի կողմից օրինականորեն նշանակված և հաս-
332 տատված հարգարժան հայր Սեր-Կարապետի հավա-
տարմատարները, ինչպես [դա] երևում է մեծապատիվ
տեր պատրիարքի նամակից, որը բացեիքաց ցույց է
տրվել ու ներկայացվել է ազնվափաջ տեր հյուպատո-
սին, մեծապատիվ լատին տեր եպիսկոպոսին, հարգելի
տեր մատարներին և ավագների հարգարժան խորհրդին:
Եվ այս պատրիարքական նամակների շուրջը հենց սե-
նատում տեղի է ունեցել հանդիսավոր պատգամախոսու-
թյուն պատրիարքական աթոռի պատվիրակների կող-
մից: Այդ իսկ պատրիարքական նամակներում հայտա-
րարվում է, որ սիրելի արժանապատիվ տեր պատրիար-
քը տեղյակ է, որ վերոհիշյալ Պանջիաջների կողմից երկ-

պառակություններ ու անվայել հորժեր են նենգորեն սարքվել և դավադրութիւն պատրաստվել՝ եպիսկոպոսական աթոռը զավթելու համար: Այդ պատգամախոսութեան ժամանակ ներկա է եղել Կաֆայի սուրբ Նիկողայոսի հայ միաբանների արժանապատիվ փոխանորդը, որը նույնպէս վկայել է, որ ինքը այդ սենատում ներկա է գտնվել պատրիարքի մոտ, երբ վերոհիշյալ տեր պատրիարքը իր նշված նամակով Տեր-Կարապետին Կաֆայի իր հայերին եպիսկոպոս է նշանակել ու հաստատել:

Եվ զեպերն այդպիսի ընթացք ունեցան, որովհետեւ Տեր-Կարապետին ձեռք չմեկնեց ազնվափայլ հյուպատոսը: Սա հայտնի է, և քանի որ աստօծ կամքով չկա որեւէ թաքնված բան, որ չբացահայտվի, այնպէս պատահեց, որ այդ երկու կեղծարարները՝ Տեր-Հովհաննեսը և Տեր-Հովհաննեսը* հանգես դալով իբրեւ թե տեր պատրիարքի պատվիրակներ, սույն նամակը ներկայացրին իբրեւ կոնգակ գրութիւն: Այս գրութեամբ նրանք հավանում են, որ իբր թե պատրիարքական աթոռից բուլա ունեն գահընկեց անելու վերոհիշյալ Տեր-Կարապետին, և հյուպատոսական կուրիայի զանազան ատյաններում քննվում է այդ նամակի կեղծութիւնը և կեղծարարների ու կաշառակերների կողմից հյուսած դավադրութիւնը՝ վերոհիշյալ Տեր-Կարապետից զավթելու եպիսկոպոսութիւնը: Ահա թե ինչու, ինչպէս վերոհիշյալ Պանջիաջերի, այնպէս էլ վերոհիշյալ Տեր-Հովհաննեսի ու Տեր-Հովհաննեսի երկու կամ երեք գրութիւններում բանասարկութիւն է արվում, որ վերոհիշյալ Տեր-Կարապետը փորձել է կաշառք տալ ազնվափայլ տեր հյուպատոսին և այն էլ՝ գրամով: Այս գրվածքներին ու խոսքերին պատասխան չտրվեց մեծահոգութեան պատճառով: Սակայն վերոհիշյալ Տեր-Հովհաննեսը և Տեր-Հովհաննեսը ու Պանջիաջերը այս լռութեամբ չկարծեն թե իրավունք են նվաճել:

* Կ. Պոլսի պատրիարքի երկու պատվիրակների անունն էլ Տեր-Հովհաննէս էր:

Ձեզ կներկայանան՝ ազնվափայլ տեր Անտոնիոտո դե Կաբելայիդ՝ Կաֆայի հյուպատոսիդ, ազնվափայլ տեր Օբերտո Սկվարչիաֆիկոյիդ, Ֆրանցիսկո դե Ֆիլսկոյիդ՝ խնամատարներիդ և մասարներիդ և ազնվափայլ Ֆրանչիսկո դե Պաստինոյիդ՝ հյուպատոսի փոխանորդիդ, որպեսզի բացեիրաց քննվի վերոհիշյալ նամակների վերաբերյալ կոնդակի կեղծությունը: Եվ առաջին հերթին այսպես են ասում. վերոհիշյալ արժանապատիվ Տեր-Կարապետ եպիսկոպոսը եպիսկոպոսական աթոռին տիրանալու համար զերծ չի մնում հյուպատոսին և պաշտոնական այլ անձանց դրամ առաջարկելուց: Առաջին հերթին այն պատճառով, որ պատրիարքական հրամանով ու պատրիարքական նամակով նշանակվել || և հաստատվել է Կաֆայի հայերի իսկական եպիսկոպոսը: Պանջիաջերը վտարվել է և պարսավանքի ենթարկվել: Սրանից հետո վերոհիշյալ Պանջիաջերի կողմից դավադրություն է կազմակերպվել բնակչության մեջ: Վերոհիշյալ Տեր-Կարապետը շտապ դալով պալատ, ազնվափայլ տեր Ֆիլիպոս Յավորոյի¹⁶⁶ հյուպատոսության ժամանակ, ինքը՝ Տեր-Կարապետը, անձամբ ներկայացավ բացեիրաց տեր հյուպատոսին, մասարների ու Ավագների խորհրդին: Նրանք, զննելով պատրիարքի նամակը իր եպիսկոպոս նշանակվելու մասին և լսելով նույն տեր պատրիարքի պատգամավորներին, իրենց պատգամավորների հետ միասին որոշեցին, որ վերոհիշյալ Պանջիաջերը պետք է վտարվի Կաֆա քաղաքից, և վճռվում է, ինչպես երևում է հանդիսավոր ժողովի արձանագրությունից՝ զրված գրագիր տեր Ֆրանցիսկո դե Պաստինոյի ձեռքով, որն այդ ժամանակ քարտուղար էր...

Այնուհետև դավադրություն կազմակերպելով իր համախոհներով՝ վերոհիշյալ Տեր-Հովհաննեսներով, այդտեղից եկավ հիշյալ Պանջիաջերը ազնվափայլ տեր Իոֆրեդի¹⁰⁷ հյուպատոսության ժամանակ, բերելով կեղծ

և կեղծված նամակ՝ ինչպես կարծեցյալ կոնդակի, այն-
պես էլ այն ռենենալու փաստի վերաբերյալ՝ հիշյալ Տեր-
Կարապետին ամոռադուրկ անելու նպատակով: Որով-
հետև ոճրագործությունը երկյուղ է առաջացնում և քա-
նի որ նրանք տեղյակ էին Արևելքի այս ամբողջ երկրա-
մասում տարածված համբավին, որ տեր Իոֆրեզը (վա-
յելում էր), որն այդ ժամանակ հյուպատոս էր, արդա-
րությունը պաշտպանող մի մարդ, ընդ որում անգիջող,
որի ձեռքերը երբեք ոճիր չէին գործել, հանցագործու-
թյունները պատժող էր, [այս բոլորի պատճառով]
նրանք երբեք նրա հյուպատոսությունն ժամանակ չհան-
գրդնեցին ներկայացնել հերյուրանքներով առկեսուն ի-
րենց այդ կեղծ նամակը՝ գրված և կեղծված ոչ թե մեկ,
այլ բազմաթիվ ձեռքերի կողմից: Սակայն իրենց դավա-
դրության համար նրանք սպասեցին տեր Բաբտիստա
Հուստինիանոսի հյուպատոսության ավարտին: Թե այդ
ղեպքերը ի՞նչ վախճան ունեցան, այդ մասին պատշաճու-
թյունը հարկադրում է լռել: Պաշտոնական անձանց
պատվից ելնելով, սինդիկատներում (պաշտոնական
ատյաններում — Վ. Մ.) ավելի բարվոք համարեցին
լռել, քան թե խոսել, թեև նրանք ավելի շուտ այն կար-
ծիքին էին, որ ինքը՝ տեր Բաբտիստը, խաբվել է կեղծ-
ված այդ նամակով: Նրանք ավելի հակված են դրան,
քան այլ կարծիքի: Ամեն մի առողջ դատողության տեր
մարդ կարող է գլխի ընկնել և հասկանալ, թե ինչ պատ-
ճառներով այդքան ամիսներ մնացել են այս քաղաքում
իրենք՝ կեղծարարները, և մինչև վերահիշյալ տեր Բաբ-
տիստի հյուպատոս դառնալը չեն ներկայացրել այդ
կեղծ նամակը:

Նվ որովհետև մի քանի օր առաջ, Ձեր տեր Անտո-
նիոտի հյուպատոս դառնալուց հետո, Տեր-Կարապետի
Եպիսկոպոսության շուրջը հարգարժան տեր պատրիար-
քից պատգամավորներով և նամակով՝ ուղղված նաև
տեր լատին Եպիսկոպոսին, ստացվել են վերահիշյալ
գրությունները և որովհետև հին առանձնաշնորհումները,

որոնք նախատեսված են դուան¹⁰⁸ ազնվափայլ ղեկավարության, ինչպես և Սուրբ Գևորգի ազնվափայլ վարչության կողմից, որն այժմ այս երկրամասի գերագույն կառավարիչն է, այն են, որ պետք է հարգվեն տեր պատրիարքի իրավասությունները և որ հյուպատոսը, փոխանորդը և պաշտոնական անձինք չպետք է միջամտեն իրենց՝ հայերի մեծամեծների և եկեղեցական գործերին, || այդ առանձնաշնորհումների և իրավասությունների մասին գրություններով լցված են կուրիայի քարտաբաններն ու մատյանները. և ինչպես հին, այնպես էլ նոր:

- Եվ հերավի, Տեր-Կարապետը, իսկական եպիսկոպոսը, նշանակված և հաստատված պատրիարքարանի կողմից, կարիք չունեւ որ ինքը և ոչ էլ իր յուրայինները դրամ տալու, քանի որ արդարությունն իր կողմն է և քանի որ այդպիսի արդարություն ունենալով՝ կարիք չկա կաշառք տալու... Ուստի ինքը՝ Տեր-Կարապետը, արդարությունն իր կողմն ունենալով և պաշտոնապես ճանաչված լինելով կարիք չունեւ որևէ մեկին թերելու իր կողմը և նա, ով կցանկանա կամ կկարողանա ասել, թե ինքը՝ Տեր-Կարապետը, իբր թե որևէ մեկին փորձել է կաշառել, այդ ասողը թող հանդես գա: Նա (Տեր-Կարապետը — Վ. Մ.) կարող էր օրինականորեն ձեռք բերված իր առանձնաշնորհումներից օգտվել իր ուզածի պես, բայց ամեն ինչում նա վարվեց շիտակ:

Եվ ծանրացնող հանգամանք է այն, որ թույլատրվել է այդպես խոսել այդ գործի մասին, և որ դա ավելի վատ արտահայտություն է գտել գրություններում, որ Կալարեսը խոսել է Պաուլի դե Պուտեոյի կողմից, որը տեր հյուպատոսի մտերիմ անձնավորությունն է և իր կողմից, ինչպես այդ ամենուր հայտնի է դարձել, ազնիվ վկաների միջոցով: Եվ իրենք Կալարեսին ասել են, թե երբեք չէր հանդուրժվի, որ վերոհիշյալ Տեր-Կարապետը նստեր իր աթոռին, բացի դրամ տալուց: Իհարկե, իր

խոսքերում հիշեց հիշյալ Պատուոսին և նրանց, որոնց հետ գործարքի մեջ էր, որոնք ապրում են և ներկա են և այդ գիտե Կայարեսը, թե Պանջիազերը ինչքան է ծախսել իր համախոհների հետ և ինչքան դրամ է տվել պաշտոնյաներին... Վերոհիշյալ Պատուր հեղինակով այդքան աննշան գործը՝ ուղեց միայն 150 դուկատ, որոնք ստանալով՝ պահեց բազում օրեր և հիշյալ Կայարեսը տեսնելով, որ գործը մնում է այդօրինակ վատառողջ վիճակում, և որ հիշյալ Պատուր ամենօրյա շփման մեջ է մյուս կողմի համախոհների հետ, զլխի ընկալ կամ կասկածեց, որ վերոհիշյալ Պատուր կարող է այդ կողմին համոզել, որպեսզի նրանից ավելի շատ դրամ կորզի:

335 Վերջապես, որովհետև հաստատապես նա այդպիսի մարդ չէ... Ուղեց, որ հիշյալ Պատուր իրեն վերադարձնի դրամը և... Պատուր ասաց վերոհիշյալ Կայարեսին և այլ անձանց ու բավականաչափ || ահհհայտի հասկացրեց, որ անհրաժեշտ է ավելի վճարել: Հիրավի, նաև միջնորդի ասածից երևում է, որ վերոհիշյալ Պատուսը ցանկացել է ավելի մեծ գումար, քան սկզբում տրվել է իրեն և միայն ստացել է 200 դուկատ կամ դրանց արժեքը ապրերով, առաջարկելով 100 դուկատ հյուպատոսի համար և 50 դուկատ՝ նրա համար. և երկրորդ անգամ ստանալով դրամը, պահեց բազում օրեր: Եվ երբ Կայարեսը դժգոհում էր այդ ժամկետի երկարաձգման համար, հիշյալ Պատուսն ասում էր և հաստատում, թե ամեն ինչ համաձայնեցված է հյուպատոսի հետ և որ հյուպատոսը այդ դրամից արդեն ծախսել է կամ տվել, կամ ինքը՝ Պատուսը, նրա (հյուպատոսի — Վ. Մ.) դիմաց Լուբինո դե Պազանային վճարել է տեղի հյուպատոսի պալատը ստրուկներ տանելու ծախսերը: Վերոհիշյալ Կայարեսը և այլ անձինք նկատում են, որ հիշյալ Պատուսը ամենօրյա կապի մեջ է մյուս կողմի հետ. և դա կասկած առաջացրեց ու համոզմունք, որ հիշյալ Պատուսը միշտ դավաճանում է և անհարկի շահագործում հյուպատոսի

անունը: Վերջապես հիշյալ Կայարեսը տեղեկացած լինելով Բաբտիստա դե Սեմինոյի հաղորդածից ու հաստատ խոսքից, որը կասկածում էր, թե հիշյալ Պաուլոսը դավադրություն է կազմակերպել, համոզեց հիշյալ Բաբտիստան հիշյալ Կայարեսին, որ սա իր դրամը ետ պահանջի հիշյալ Պաուլոսից... Այդ տեղեկությունը ստացվեց հիշյալ Կայարեսի արժանահավատ անձանց կողմից և նրանք այն էին հասկացնում, թե հիշյալ Պաուլոսը հետեւել է այս ստացվածքին՝ ես հավատում եմ նրան, ով ավելի շատ է վճարում:

Ուստի հիշյալ Կայարեսը շղանկացավ այդ դրամը ստանալ դադարի կերպով. և սպառնալիք արվեց իրեն՝ Կայարեսին և այլոց: Հիշյալ Բաբտիստայի հաղորդածի համաձայն, եթե նա չէր ընդունում այդ դրամը, ազնվափաջ տեր հյուպատոսը խորհրդի նիստում կբացահայտեր, որ հիշյալ Կայարեսը ցանկացել է իրեն՝ հյուպատոսին, մղել կաշառակերության: Չցանկացավ (Կայարեսը) այն ստանալ բացի այն պայմանից, որ դա լինի բացեիքաց: Այսպիսի հետեւողականությամբ խորհրդում, Ջերդ ազնվափաջություն, տեր հյուպատոսի կողմից այսպես գեկույցվեց հիշյալ Պաուլոսին [խորհրդի] կանչելուց հետո: Սա (Պաուլոսը — Վ. Մ.) խոստովանեց, որ ստացել և պահել է նշված փողերը, և թե ինչ գեպրեր տեղի ունեցան, դա հայտնի է...

Նա (Տեր-Կարապետ Լախիկոպոսը — Վ. Մ.) և ուրիշներ համոզվեցին, որ ինքը՝ տեր հյուպատոսը, երբեք չպետք է հանդուրժած լիներ, որ հիշյալ Պաուլոսը աշգրպես հանդգներ խաղալու իր անվան հետ, և ինքն ու մյուսները համոզվեցին, որ ինքը՝ տեր հյուպատոսը, պետք է պատժիչ միջոցներ ձեռնարկեր նման շարագործների դավադիր հեղինակ Պաուլոսի դեմ, որպեսզի հյուպատոսի անմեղությունը աղտեղությունից մաքրվեր: Սակայն ուշադրություն դարձնելով Պաուլոսի ով լինելու վրա, պալատում || տեր հյուպատոսի և հակառակ կողմի

Հասարակական միջնորդի ներկայությունը ընտրություն-
նր (Եպիսկոպոսի — Վ. Մ.) կատարվել է աշնայես, որ
թույլ են տրվել սխալներ: Նկատի ունենալով նաև այն,
որ Դուր՝ ազնվափայլ տեր Հյուպատոսի, պաշտպանում
եք հայտնի կարծիքը հոգուդ հիշյալ Պանջիաշերի, գատե-
լով այն բանից, որ Դուր նրան համարում եք եպիսկո-
պոս, այն դրեկ փաստարկն էլ է ավելացվում, թե ազնը-
վափայլ զրասենյակը գրում է, որ իր մոտ դժգոհություն
է առաջ բերել Տեր-Կարապետի՝ առանց պատրիարքա-
կան հովանավորության եպիսկոպոս ընտրելը: Եվ եզրա-
կացրեց, որ պատրիարքի իրավունքները այսուհետև
պետք է պահպանվեն: Ազնվափայլ զրասենյակի այս
խոսքերը այսպես են գրվել, որովհետև նա տեղեկություն
է ստացել նախորդ հյուպատոսի կողմից, որ Տեր-Կա-
րապետը չի ունեցել պատրիարքի հովանավորությունը,
և դա եղել է սխալ, սխալ է եղել և այն, որ նա եպիսկո-
պոս է նշանակվել տեր Իոֆրեդի ժամանակ: Փաստերը
հերքում են այս:

Հիրավի, այժմ Ձեզ և գլխավոր խորհրդի համար
պարզ է արդեն, որ այս գործողությունները կատարվել
են տեր Ֆիլիպի (Կալվորյայի — Վ. Մ.) հյուպատոսու-
թյան ժամանակ... Աշնայես եղավ, որ սխալ դուրս եկավ
ազնվափայլ զրասենյակի գործը... Ազնվափայլ զրասեն-
յակի լիազորություններում ասված է, որ եթե Պանջիա-
շերը եպիսկոպոս չի համարվել հարգարժան պատրիար-
քի տված լիազորությունների հիման վրա, ապա նա
եպիսկոպոս լինել չէր կարող: Ազնվափայլ զրասենյակի
լիազորությունները նման գործերում սահմանավակվում
են տրված արտոնություններով և առանձնաշնորհումնե-
րով, տեր պատրիարքի լիազորությունները պահպանե-
լու և, հատկապես, պատրիարքի հին ու նոր լիազորու-
թյունների առկայության գեպքում, որոնք մերժում են
Պանջիաշերին:

Մեղմացուցիչ չէ և այն, որ Դուր հայտարարում էր,

Թե հիշյալ Պանջիաջները համարվում է եպիսկոպոս աչն ժամանակ, երբ դա փաստորեն հակասում է օրինական գրությանը, էլ շենք խոսում կեղծարարությունների մասին, որոնք քննարկվում են կուրիայում և այլ գրություններում՝ երբեմնի ուղղված տեր պատրիարքին Տեր-Հովհաննեսի և Տեր-Հովհաննեսի կողմից: Այդ նամակներում ասվում է, որ իրենք կոնդակ շեն ունեցել: Այնտեղ (նամակներում — Վ. Մ.), իմիջիպալոց, նրանք հասկացնում են, թե լատին, հույն, հայ, հրեա, սարաղին ժողովուրդները Պանջիաջերին են կամեցել և որ Զուստինիանի հյուպատոսը եղել է Պանջիաջերի... կողմնակիցը և այդպես է եղել նաև նրա հաջորդը: ...Եղբակացնում են, թե պալատը այդպես է ցանկացել, որովհետև ալ կերպ վարվել չէր էլ կարող թուրքերի հանդեպ ունեցած վախի պատճառով:

337

Ամենից առաջ տեսնենք, թե աստվածային շնորհոք աչս քաղարի հասարակական գրությունը արդյոք հասել է նման վախճանի: Նմանապես տեսնենք, թե իրոր ճշմարիտ է, որ Պանջիաջերին || այդ պատճառով են նշանակել կամ թելադրել, որ եպիսկոպոս դառնա: Նույնպես տեսնենք, թե արդյոք պալատը այդ արել է ժողովուրդներին հաշվի առնելով թուրքերի վախից, տեսնենք արդյոք, թե այդ խոսքերը իրական են: Պարզ ու հաստատ հակառակը: Տեր Բաբտիստայի ժամանակ տեղի ունեցած խորհրդակցության միջոցով երևում է, որ այդ խորհրդակցությունը կայացել է տեր պատրիարքի նամակը քննելու կապակցությամբ: Այս նամակը հրապարակվել և նրա սխալների մասին խոսվել է ներկաների մոտ:

Հիրավի, եթե ազնվափալ պատվիրակներ (լեղատներ — Վ. Մ.) Տեր-Հովհաննեսը և Տեր-Հովհաննեսը չապացուցեն իրենց գրածները, նրանք պետք է պատրժվեն՝ մեծությունը հասցրած վիրավորանքի համար... Այդ նամակի շատ հատվածներում երևում է, որ նման ան-

պատվութիւնն և ամոթ են բերում (նրանք — Վ. Մ.)
Յաֆա քաղաքին: Եպիսկոպոսութեան այս գործերի հա-
մար ծախսել են 1400 դուկատ: Այդ նամակից այլ իրո-
ղութեաններ էլ են հետեւում, որոնց մասին, սակայն, մեր
պատվի համար պիտի լռենք: Եվ քանի որ ուժի մեջ են
այն օրենքները, որոնց համաձայն Դուք՝ ազնւաբայ
հյուպատոսք, իրավասութիւն չունեք միջամտելու, գոր-
ծքն այսպէս է ընթանում և այնուամենայնիւ Դուք մե-
նակ հարգանքը պահպանելով հանդերձ, չեք կարող
ասել, թե Դուք Պանջիաջերին համարում եք եպիսկոպոս,
քանզի այդ գործի համար միայն Ձեզ չէ, որ տրված է
լիազորութիւն, այլ նաև հարգելի երկու տեր մասարնե-
րին: Նրանք ուղիղ տրամաբանութեամբ հասկացել են և
ներկայումս հասկանում են ազնւաբայ զրասենյակի
լիազորութեան իմաստը: Ամեն մի մարդ այդ շատ դյու-
րին կհասկանա, եթե նա անաշու է, այդպիսին են և
այդ երկուսը (այսինքն՝ մասարները — Վ. Մ.):

Նախ և առաջ խոսվում է այն մասին և ապացուց-
վում, թե Տեր-Կարապետը իսկական եպիսկոպոսն է,
որը նախապէս նշանակվել է պատրիարքական հեղինա-
կութեամբ: Այնուհետև, որպէս երկրորդ կետ, խոսվում
է այն մասին և ապացուցվում, թե նա բոլորովին վեր-
ջերս նշանակվել ու հաստատվել է պատրիարքարանի
կողմից և հիշյալ Պանջիաջերը մերժվել է: Դրանց ավե-
լացրած և այն, որ դերագույն ատյանի կողմից տրված
լիազորութեաններով և արտոնութեաններով հյուպատո-
սը և պաշտօնական անձինք չպիտի միջամտեն հայոց
առաջնորդներին և կրօնական գործերին և որ հայոց
պատրիարքի լիազորութեանները պետք է պահպանվեն:
Մեղմացուցիչ հանգամանք չէ և այն, որ ոմանք ազնւա-
բայ զերագույն զրասենյակի աշքերին փորձեն փոշի
փչել, ասելով, թե վտանգ կա, կապստամբեն: Հիրավի,
ազնւաբայ զրասենյակը լավ գիտե, որ բավական է,
որպեսզի ինքը իր ունեցած բավարար ուժով մի հրամա-

նազիր ուղարկի և այդ քաղաքում ժողովուրդները կհնա-
ղանդվեն վերին իշխանությանը: Սակայն այդօրինակ
գործելակերպ օգտագործելը հանգցնության և բարդ
քաղաքականության է, և որ իրադրությունը պահվում է
այդպես անհանգիստ և անորոշ ձգձգումների մեջ: Հի-
րավի, այնտեղ, ուր իշխում է արդարություն, այնտեղ
կլինի այն (խաղաղություն, — Վ. Մ.). հասարակության
մեջ ամեն ինչ հանգիստ ու խաղաղ կլինի:

338 Եվ ով ցանկանում է հակառակը պնդել, թող վեր
կենա և պատասխանի, որովհետև ոչ մի կասկած չի
լի կարող, որ բոլորը ենթարկվում են հյուպատոսի
հանձնարարությանը, որը բոլորի համար օրենք է: Իրոք,
երբ արդեն արժարժվել է այն, թե հիշյալ Պանջիաջերը
այնքան մեծ հանցագործություններ է կատարել, ինչպես
նաև դավադրություններ է կազմակերպել և զրպարտու-
թյուններ (հորինել — Վ. Մ.) ժողովուրդների դեմ, և
երբ լրիվ մերժված է (նա — Վ. Մ.) պատրիարքական
աթոռի կողմից, ինչ կարիք կա, որ այսուհետև պահվի
սնանկ || նկատառումներով, քանի որ ոչ մի հեղինակու-
թյուն չունի (լինելու) Կաֆայի եպիսկոպոսը: Այս բոլո-
րը հայտնի է և ապացուցված պատրիարքական նամա-
կով...

Սակայն քանի որ տեղին է, որ ազնվափայլ գրա-
սենյակը ճիշտ տեղեկություն ստանա, աղաչում ենք
Ձեզ, ազնվափայլ տյարք հյուպատոսներիդ, հարդելի
տյարք մասարներիդ և տեր փոխանորդիդ՝ Դուք տեր
փոխանորդդ, որ այդ ժամանակ եղել եք գրասենյակի
պետը ու արձանագրողը և ընթացք եք տվել բոլոր գոր-
ծերին, խնդրում ենք ձեզինից, որ Ձեր նամակում ճշմա-
րիտ ձևով Դուք [բոլորի] մասին տեղեկացնեք ազնվա-
փայլ վարչությանը և թե ինչպես ու ինչ ձևով է տեղի
ունեցել [վերահիշյալ] իրադարձությունը և թե որպիսին
է ճշմարտությունը. [տեղեկացնեք] նաև, թե երբեք հիշ-
յալ Տեր-Կարապետի վրա եղել է արդյոք թեկուզ և մի

փաստ, որն առիթ տաւ մեղադրելու նրան, արդյոք հիշ-
յալ Տեր-Կարապետի կողմից թույլ տրվել է որեւէ մի
արարք, որն արժանի լինէր պարտավանքի:

Հիւրավի, այս գրութեան մեջ շարադրված է բոլոր
ձշմարտութիւնը, և եթէ որեւէ բան պակասում է, եթէ
որեւէ մեկը առարկում է և ասում, թէ հիշու չէ, ապա այն
պետք է ապացուցի, և այդ անողները պետք է ենթարկ-
վեն անձնական պատասխանատւութեան և դատաւարա-
ւեն (զրպարտութեան գետնում — Վ. Մ.): Վերահիշյալ
քննական խորհրդակցութիւնների արձանագրութիւն-
ները, որոնք քարտուղարութեան վավերացրելու են,
դրւում են հասարակութեան տրամադրութեան տակ և
բոլորի կողմից կարող են ընթերցվել: Նմանապես հիշ-
յալ Պանջիաջերին պատկանող արտոնութիւնները,
որոնց մասին Դուք պետք է պահանջէք, որ Ձեզ հաշիվ
տան. այս արտոնութիւններից երևում է, որ հշուպա-
տոսն ու պաշտոնաւան անձինք չեն կարող միջամտել
նրանց (հայերի — Վ. Մ.) եկեղեցական և կրօնական
գործերին և որ պատրիարքական լիազորութիւնները
պետք է հարգվեն. այնպէս, ինչպէս այդ բոլոր վերահիշ-
յալ (արտոնութիւնների պայմանները — Վ. Մ.) վա-
ւերացվում են օրենսդրութեան հոգւածի մեջ Ձենովայի
ազնվափայլ գրասենյակի պետի, տարբեր Աւագների
խորհրդի և ուսմանական կառավարութեան¹⁰³ ազնվա-
փայլ վարչութեան կողմից հրատարակված՝ ի գիտու-
թիւն վիճող կողմերի: Ազնվափայլ տեր հշուպատոսի և
փոխանորդի հանձնարարութեամբ արձանագրվել են վա-
ւերացրելու նուազ Բրիստոֆերոս ղե Կանկայի ձեռ-
քով՝ հրապարակված ձեռն. նմանապէս արձանագրու-
թիւնների գրքում են գրանցված, որը Ձեզ՝ հշուպատոսի
մոտ է, տեր պատրիարքի տարբեր և դանազան լիազոր-
ութիւնները: Այս բոլորը նույնպէս վավերացվում է
ազնվափայլ առջանի տված ամենավերջին լիազորու-
թիւններով: Խնդրում ենք նույնպէս, որ պետական պաշ-

տոնյան կողմնակցութիւն չանի, այլ որպէսզի ամեն ինչում արդարութիւնը լույս աշխարհ բերվի և լուսաւորվի:

Գրված է 1474 թ., ուրբաթ, 21 հոկտեմբերի, ժամը 3-ին, հյուպատոսական պալատի մեծ սրահում՝ ներկայացված համաձայն օրենքի և ներկայութեամբ վերոհիշյալ տյարք հյուպատոսի, մասարների և փոխանորդի (վիկարի), վերոհիշյալ Աստվածատուրի և Ավետիքի կողմից. հիշյալ տյարքը արտահայտվեցին, շարադրեցին և խնդրեցին, ինչպես վերևում [գրված է]:

«Ատի», VII, II, էջ 331—338:

70. Պաշտոնազուրկ արված Տեղ-Կարապետ եպիսկոպոսի հաւատարմատար հայ Ավետիքի բողոքը Կաֆայի հյուպատոսական տալանին՝ ընդդէմ հյուպատոս Կաբելայի և եպիսկոպոսական արքունի տիրացած նրա հովանավորյալ Տեղ-Հովհաննէսի:

Կաֆա, 1474 թ., 17 դեկտեմբերի

339

Ձեզ՝ Կաֆայի հարգարժան հյուպատոս ազնվաւիայլ տեր Անտոնիետո դե Կաբելայիդ, Կաֆայի հյուպատոսիդ, տյարք պրովիզորներիդ և մասարներիդ՝ Օբերտո Սկվարչիաֆիկոյիդ և Ֆրանցիսկո դե Ֆլիսկոյիդ (Ֆիեսկոյիդ — Վ. Մ.) ներկայութեամբ, ներկայանում է հայ Ավետիքը՝ հաւատարմատար ի Քրիստոս հայր Տեղ-Կարապետի՝ հայոց եպիսկոպոսի Կաֆայի ամբողջ թեմի, աստծո և պատրիարքի կամքով ընտրված և հաստատված որպէս եպիսկոպոս վերոհիշյալ պատրիարքարանի օրինական վավերագրով, որը ներկայացվել է Գերագույն խորհրդին և օրինական ու վավերական է ճանաչվել Կաֆայի սենատում հայոց պատրիարքի պատ-

գամալորության անդամների կողմից և Գերագույն խորհրդում՝ հարգարժան տեր Հերոնիմոսի՝ աստծո և առաքելական աթոռի կամքով գերագույն եպիսկոպոսի ներկայությամբ՝ այս քաղաքում՝ ի երանություն հոռմեական եկեղեցու: Նրան ազնվափաջ տեր պատրիարքի կողմից ուղղվել է նամակ, որը ապացուցում և հաստատում է Տեր-Կարապետի եպիսկոպոս լինելը: Տեր Պանջիազերը մերժվել ու ամբաստանվել է հիշյալ տեր պատրիարքի կողմից: Եվ ազնվափաջ տեր պատրիարքի այս նամակից ակնհայտորեն երևում է, որ վերահիշյալ Պանջիազերի արարքները կեղծարարությամբ և փողի ուժով են հորինվել:

Քանի որ նման և այլ փաստեր ակներևորեն երևում են պապական բարձրագույն կուրիայի օրինական և վավերական գրություններից, գրություններ և խնդրագրեր է ներկայացրել ինքը՝ հիշյալ Տեր-Կարապետի հավատարմատար Ավետիքը, որոնք (գրությունները — Վ. Մ.) մեծ բանակությամբ հրապարակավ || ետ պահանջվեցին պապական կուրիայի գրագիրներից և երևում է, որ նրանք մերժեցին այդ, ասելով, թե Դուք՝ տեր հյուպատոսդ, արգելել եք տալ նրան այդ գրությունները, Ձեզ վերապահելով դրանց պատասխանելու: Կարիք չկար այդպես վարվելու, որովհետև նոտարների գերապատիվ պատենյակը նրանց կողմից կատարվող արձանագրությունների համար չունի ոչ վերակացու, ոչ պետ, ոչ էլ գերագույն հրամանատար, որովհետև գրագիրների գերագույն պարտականությունն է նշանակել օրը կամ ժամանակը կատարված արձանագրության և և՛ ին նույնիսկ նման խոչընդոտ կարող էր տեղի ունենալ, մագիստրները միշտ կարող են իրենց վերապահել պատասխան տալու իրավունքը և երբեք չպատասխանել և չսպիտով նոտարների պաշտոնին միջամտել ու խանգարել: Չափազանց մեծ (խախտում — Վ. Մ.) է թույլ տրվել հիշյալ Տեր-Կարապետի այդ գործի վերաբերյալ, որը

յուսերս զմտ ժղսմս ‘զվոսսսկոսկիւղ տոնէվչ րտի յ զվժվստ
-գիւղ յշղվվ վիւղղղտչ՝ մղսսնքսմն ճտիւնղ վնոզսմս ‘մղկ
-մտ վոսկսնտ նոքտոք նվնղտմս ‘ոզստկոսկ ‘մժմսն վմղղ
-սսնղ նսմղժտմղի մղտոնքսսղսստս վղտոնչ նտ մղսսնք
-սսնքտի ճտիւնղ կոնտտո չ զսսնքսկղնղտ տոսկ զվոտոք
նղսմս ‘մղղղսսնքսսնքսմ վտ յսսղնսղ ժղղ յնսկ վղ

։չ յսսնքսսնքտոս զվիսվ նտ ոզսնղվ ‘կոնքտկղն
-ղտ մչ տոսկ մսս ‘մղտոնքսսնքտի տոսկտիղնտ կոնքտկղն
-ղտ զվոտոք զտոնքսսղտոսկ մղիմնղղ մս ‘մչ զվնղտ ‘մոժ
-տղտղղ ։տվտտ չ նրսն յ յսսղնտոսկղղղ տղ մղսսնքսմն
նղղ ։մնստտոք զվտկտոնղղտոսն սս զմտսսղ վիտոնղղո
-տմն վտոքտո կտղտոքտո նտ յ մչ նսսղտոսկ կտղտոք
-տո նտ զմս ‘իսժսղղ վսսղվտտոք զն սկոսկղտոք մղս
չ կղիմն մղսսնքսմն նտ ‘ժտոնքսսմտտտոնչ ճտիմտ
ժտոնքսմն զտկտղիտի յ զղմսղտկտտտոնչ յսսնքս
-մսոկ զրսնտոքժտոչ չ յսստտտտոնչ մտժտղղղղղ ոզս
-նղղ ‘սժմղղ զտոնքտոքտի վկտոնղ յ զտոնքսսնքտոն
-տտոս ‘իսժրտի վղտոնքտոսկտտոս կտղտոքտո վսմսիտոք
կսկվղ մղս ‘ղտկոնղ ։ժսմո զտոնքսստտտոնչ վնղմղսկ
մղս կտղտոքտո զտոնքսստտտոսկոսկիւղ տոնղ չ կղիմտտոկ
զտժ չղմս կ շս յ կղիկտղտոնղ վ՝ ոստտոսկիւղ ժղմղղ տղ
մս ‘մչ զմ զժվնղղ ճղղտոնղղ յղ ։ժտոնքսկտղղղղ
զտկտժտոսկտտոս չ կղիմսղմ յ մչ ոստտոնչ կտղտոքտո
նտ զմս ‘նղղնսկ վկտոսկղղ նղմղսկ մղս տոսկտիղնտ
կղիկտղտոնղ չ ոստտոսկիւղ մտղտտոնղ-մղՏ տոնէվչ զղ
‘չ կղիղտոնչ իստմղկ տոսկ զտմղ -ժնմտչ զտոնքստտտոսկ
-ոսկոնղ տոնէվչ կղիտոնղղղտ չ իստմղկ տոսկ մղտոնքսսնքտի
վնմսղղ ժմսղ տոնէվչսմղի զղ ‘ժնմտչ զմ չ յսսնքտոք
-մտ ժմղ ‘զմ չ յսսնչսս տտն մղղղղղղ ։չ զղսսնքսսղտոկ
-նղ զրսնտոքն վկիմղ ոտ յ վտոքտո մս ‘մղսսնքսսնքտի
տոսկտիղնտ վնմսղղ ժմսղ զղղղտոն ‘մղղղղղղղ
-տոկղղ զրսնտոքն զղղղղ չտտոն վկտոք զտոնքսսղտոսկ
մսժտոք սս շղղղ վնոզսմս ‘նղմտոնղղղղ մղղղղղղտոս
սս մղղղնսնղ ‘մղմնտոնղղղղ (՝.Ղ — մտղտտոնղ-մղՏ)

էին և ձեզնից ազնվորեն պահանջում: Պատճառն այն է, որ Ձեր՝ տեր հյուպատոսիդ և մասարներիդ միշոցով սիրելի վարչութիւնը պետք է հաստատ տեղեկանա ամբողջ իրականութեան մասին: Եվ եթէ վերոհիշյալ իրողութիւններն իրական են և կամ ոչ, այս նամակում Ձեր՝ հյուպատոսիդ և մասարներիդ կողմից, որոնց նաև նպիսկոպոսութեան շուրջը հիշյալ նյութերից բացի տրուված են լիազորութիւններ՝ իշխանութեան հետ զուգընթաց, թող հանձնարարվի հիշյալ գրագիրներին. այդ բարեհաճեցեք հանձնարարել (գրագիրներին — Վ. Մ.), որպեսզի իրենց նոտարի շղիկով պաշտօնը կատարեն, արձանագրութիւններ կազմելով պաշտօնական ձևով, որպեսզի այդ արձանագրութիւնները օրագրի նման պահվեն, ինչպես որ այդ պետք է անել:

341

|| Երկրորդ, նմանապես պետք է բարեհաճեք հաղորդել և հաստատ տեղեկութիւն տալ սիրելի վարչութեանը, թէ ինչպիսի հիշյալ Պանջիաջերը մերժված է և սխառավանքի ենթարկված իր պատրիարքի կողմից՝ նրա վերջին նամակում: Այդ մասին (խոսվել է — Վ. Մ.) վերևում. հիշյալ Տեր-Կարապետը, որպես օրինական և իսկական նպիսկոպոս, կանգնում է հիշյալ նպիսկոպոսական թեմական եկեղեցում առանց որևէ պատրիարքական հովանավորութեան, սակայն ավելի շուտ մերժված է այդ տեր պատրիարքի կողմից, ինչպես երևում է նորագույն նամակից, որի մասին վերը նշվեց: Եվ (նամակի հեղինակը — Վ. Մ.) խնդրում է տեղեկացնել և հաստատ համոզել սիրելի վերին իշխանութեանը խարդախների նամակի կեղծիքների մասին, որոնց վերաբերյալ ակներևաբար հաստատվում է արձանագրութիւններում նաև Պանջիաջերի ու նրա պատգամավորների անձնական խոստովանութիւններից: Դավադրութեան ժամանակ արված այս խոստովանութիւններից հաստատ երևում է, որ տեր Պանջիաջերի այդ պատգամավորները եղել են կեղծ, չեն ունեցել որևէ կոնգակ՝

այդ ժամանակաշրջանում եպիսկոպոսական աթոռից հե-
ռացնելու հիշյալ Տեր-Կարապետին, որը այժմ իսկական
և օրինական եպիսկոպոսն է ամբողջ ներկա թեմում:
Այժմ [նա] գրկված է իր սեփական հայրենիքից, ուր
(Կաֆայում — Վ. Մ.) ծնվել է և որի քաղաքացին է և
որի իսկական օրինական եպիսկոպոսն է. և շնայած, որ
նա գրկվել է իր հայրենիքից, բայց, այնուամենայնիվ,
անհնարին է, որ նա չլինի հայոց իսկական եպիսկոպոսը
այս ամբողջ թեմում:

Եվ հիշտ է նախատեսել Ջենովայի վերին իշխանու-
թյունը, երբ արգելել է Կաֆայի հյուպատոսին: և պաշ-
տոնյաներին՝ միջամտելու հայոց մեծամեծների [գոր-
ծերին], ինչպես երևում է սիրելի իշխանության օրենքով
գրանցված կուրիայի գործերից և քաղվածքից, որը
հանվել է նոտար Քրիստոֆերոս դե Կանեալի ձեռքով,
որը նա ցույց է տալիս պաշտոնական ձեռքով: Եվ որովհե-
տե, ինչպես ասվեց, եկեղեցական իշխանությունը տըր-
վում է ոչ թե աշխարհիկ առաջնորդի, այլ ամենաբարձ-
րագույն առաջնորդների կողմից, ըստ նրանց կրոնական
կարգի, հանդել ենք այն բանին, որ թեև անօրինականո-
րեն օրինական եպիսկոպոսը գրկվել է հայրենիքից, այ-
նուամենայնիվ, նա մնում է եպիսկոպոս իր թեմում:

Նշում և տեղեկացնում է Ջեր իշխանություններին,
որ հիշյալ Տեր-Կարապետը դուրս է մնացել ոչ թե օրի-
նական ճանապարհով, այլ նկատի ունենալով տեր հյու-
պատոսի մանդատներին հնազանդվելու հանգամանքը,
դա [կատարվել է] ի մեծ վնաս նրա համախոհների...
Երեք օրում ծախսվել է մեկ վինետիկյան դուկատ, բացի
այլ վնասներից, որոնց մասին պաշտոնապես բողոք է
արվել և արվում է ընդդեմ վերոհիշյալ տեր հյուպա-
տոսի:

Թող տեղեկանան Ջեր իշխանությունները, որ վե-
րոհիշյալ Տեր-Կարապետը մնում է եպիսկոպոս, որպես-
զի ավելի համոզվել կարողանա սիրելի վարչությունը,

Թե վերոհիշյալ զանցառումները իրեն՝ Պանջիաջերի շարագործության արդյունքն են... Որովհետև նրանք սովոր են իրենց բոլոր գործերը կատարել դրամի ուժով, ինչպես դա ապացուցվում է նրանց կեղծարար պատգամավորների՝ հյուպատոսին ուղղված նամակով, այն նպատակով, որպեսզի թյուր կարծիք ստեղծվի տեր պատրիարքի մոտ:

342

Եվ մեծագույն || հերյուրանքը այն պարուրանքով ներկայացրին, որպեսզի պալատը շցանկանա եպիսկոպոս Տեր-Վարապետին, ինչպես այդ նրանք ջանացին անել, և ապացուցվում է հիշյալ նամակով, որ այդ արևել ու գրեթե են հիշյալ Պանջիաջերի դավադրությունամբ, ինչպես այդ ապացուցվեց այդ պատգամավորների սեփական խոստովանություններով: Այս դավադրական գործողությունների և կեղծարարությունների ու դրամի ուժի միջոցով նրանք փորձում են օգտագործել հիշյալ Տեր-Վարապետի եպիսկոպոսական աթոռի դեմ դավադրական եղանակ, քանի որ Տեր-Վարապետի կենդանության օրով օրինականորեն երբեք չի կարելի նրան հեռացնել, եթե ոչ-օրինական պատճառներով, ինչպես այդ են ցանկանում օրենքն ու ղեկրետները:

Բողոք է արվում այն մասին, թե ինչ էլ տեղի ունենա կամ պատահի, դա կհամարվի Ձեր՝ տեր հյուպատոսիդ, մեղքի հետևանքը, որովհետև միջամտած կլինեք հայոց մեծամեծների [գործերին], նաև [բողոք է արվում] կատարված և կատարվող այլ արարքների ու զանցառումների դեմ՝ անհիմն կերպով ուղղված հիշյալ Տեր-Վարապետի դեմ: Այնպես որ ամեն պարագայում, տեր հյուպատոս, մեր ամբողջ հարգանքով հանդերձ, Դուք պատասխանատվություն եք կրում հիշյալ Տեր-Վարապետի հանդեպ, բոլոր կրած վնասներով, որոնցում տուժել և տուժում է [նա] և այսպես հանդիսավորապես բողոքում է անձամբ Ավետիքը՝ նրա հավատարմատարը, որը ներկա նամակը բողոքով և խնդրանքով Ձեզ՝ տեր

Հյուպատոսիդ և մասարներիդ է ներկայացնում: Նրանցում զուգընթացաբար վերին վարչության կողմից տրված են լիազորություններ հիշյալ եպիսկոպոսական գործերի շուրջը, որպեսզի պահպանվեն սիրելի տեր պատրիարքի իրավունքները:

Դուք նմանապես Ձեր նամակով պետք է բարեհաճեք տեղեկացնել և համոզել դերագույն կառավարությանը աստծո ջինջ ու մաքուր իրականության մասին: Այս ամակը, եթե հաճո է, կամ եթե օրինականորեն է խնդրվում, նա պահանջում է տալ իրեն (Ավետիքին — Վ. Մ.) առաջարկելով հիշյալ եպիսկոպոսի ծախսերով, այն դեպքում, երբ երկուական կամ երեքական օրինակներ տրվեն ուղարկելու համար սիրելի գերագույն վարչությանը՝ մեր վերին իշխանությանը:

1474 թ., շաբաթ, 17 դեկտեմբերի, ժամը 3-ին, պալատի սրահում, որտեղ խորհուրդներ են տեղի ունենում:

Ներկա գրությունը վերը նշված բողոքով և խնդրագրով տրվեց և ներկայացվեց հասարակայնորեն տեր Հյուպատոսին, ազնվափայլ տյարք մասարներին և պրովիդորներին հիշյալ Ավետիքի կողմից: Նշվածի անունից նա բողոք ու խնդրանք է ներկայացնում վերևում նշված ամեն ինչի մասին, դրանք ներկայացնելով այնպես, ինչպես վերևում է:

Ազնվափայլ տեր Հյուպատոսը և մասարները բերված փաստերն ընդունեցին այնքանով, որ օրենքով պարտավորված է (այդ անել — Վ. Մ.) և այլ կերպ իրավունք չունեն վարվելու, և բացի այդ՝ ինքը՝ ազնվափայլ Հյուպատոսը, ասաց, իր դեմ արված բողոքի մասին, որ հնքն իրեն իրավունք է վերապահում պատասխանելու հիշյալ բողոքին՝ իր ժամանակին և տե-

դուռ։ Ինչ վերաբերում է այն հատվածին, որտեղ պընդ-վում է, թե ինքը՝ հյուպատոսը, անձամբ պարտադրեց կամ թեղադրեց կուրիայի գրագիրներին, թե ինչքանով նրանք չպետք է կազմեն այդ գրությունները, որոնց շուրջը ինքը՝ հյուպատոսը իրավունք է վերապահել արդար վճիռ անել, || նա (հյուպատոսը — Վ. Մ.) ասաց, որ դա ճիշտ է, այսինքն, որ ինքը պարտադրել է հիշյալ գրագիրներին, որպեսզի նրանք թույլ չտան, որ հիշյալ գրությունը կնքվի և ընթացք ստանա, և դա արել է այն պատճառով, որ նպատակ է ունեցել նախ պատասխանել գրությունների գրություններին, որոնց մասին ինքն իրեն իրավունք է վերապահել պատասխանելու։ Ուստի գոհ է և ցանկանում է, որ հիշյալ Ավետիքը հիշյալի անունից ունենա (տա՛նա — Վ. Մ.) պատճենը իր ցանկացած որևէ գրության։ Այնուամենայնիվ թող նախ ինքը՝ հյուպատոսը, իր պատասխանը տա այդ գրություններից որևէ մեկի առթիվ, որոնք շոշափում են իր արժանապատվությունը։ Եթե երբեք դրանք տրվեն, նա պարտավորվում է միշտ այդ անել։

[Նամակի] այն հատվածի կապակցությամբ, որ պահանջում է, թե պետք է գրել նամակ Սուրբ Գևորգի ազնվափայլ վարչությանը և տեղեկացնել հիշյալ վարչությանը վերոհիշյալ փաստերի ջինջ և անաղարտ իրականության մասին, [հյուպատոսը] ասաց, որ ինքը այժմ և միշտ պատրաստ կլինի արագորին տեղեկացնելու հիշյալ վարչությանը վերոհիշյալ փաստերի շուրջը եղած անաղարտ իրականությունը, ինչպես նաև վերոհիշյալ փաստերից որևէ մեկի շուրջը առաջացած որևէ մեկի մասին և, բացի այդ, առաջարկում է ճշտորեն, ըստ իր հայեցողության, անել այն, ինչ որ համապատասխանում է իր պաշտոնին։

Ներկա գտնվող հարգելի տեր Օբերտո Սկվարչիաֆիկոն երկու մասարներից մեկը, և խնամակալը, վերոհիշյալը տեսնելով, լսելով ու հասկանալով ասում է,

թե ինքը պատրաստակամութիւն է հայտնում նամակը գրել հիշյալ ազնվափայլ վարչութիւնը և նրան ներկայացնել, ըստ իր հայեցողութեան, բոլոր վերոհիշյալ անց ու դարձի շուրջ անաղարտ և ջինջ իրականութիւնը: Այդ նամակը նա միշտ պատրաստ է կաղմել ու գրել, նմանապէս պատրաստ է անել այն բոլորը, ինչ պարտավորված է անել Սուրբ Գևորգի ազնվափայլ վարչութեան գրութեան ու լիազորութիւնների համաձայն. ցանկաւնում և նպատակադրված է դրանք պահպանել:

Ներկա գտնվող տեր Ֆրանցիսկո դե Ֆլիսկոն (Ֆիեսկին — Վ. Մ.), մասարներից երկրորդը, լսելով ու ըմբռնելով վերոհիշյալը, ասաց: Ներքոհիշյալը.

Ազնիվ տեր Ֆրանցիսկո դե Ֆլիսկոս, խորհրդի նըստելով՝ ազնվափայլ տեր հյուպատոսի և ազնիվ տեր Օբերտո Սկվարչիաֆիկոյի՝ մյուս մասարի հետ, այդ պաշտոնին նշանակված աշատեղ, Կաֆայում, ապագա հյուպատոսի փոխարեն, ասաց, որ ինքը տեսել է Սուրբ Գևորգի վարչութեան կողմից հյուպատոսին և մասարներին տրված լիազորութիւնները զուգընթացաբար հայոց եպիսկոպոսութիւն և ամուսնութեան հարցերի շուրջը և հատկապէս լիազորութիւններն ու սիրելի վարչութեան ամենավերջին նամակները՝ ուղղված հյուպատոսին ու մասարներին: Եպիսկոպոսութեան այդ հարցերի շուրջը ծագում են ամենօրյա վեճեր ու անհամաձայնութիւններ, գործեր և երկպառակութիւններ և բանասարկութիւններ: Եթե այդ գործերը արդարամտութեամբ լուծվին կամ եթե նրանց հետ վարվին խելամոռեմն ու չբողենին աշտպես, առկա՞ս վիճակում, ապա խաղաղութեամբ [դրանք] կհանդարտեցվեն և ավարտ կստանային: Մեծ և վրդովմունքով լի դարմանք պատճառեց հենց իրեն՝ Ֆրանցիսկոյին, || որ ազնվափայլ տեր հյուպատոսը այնքան ժամանակ չի խորհրդակցել և այդ չի բնակ ազնիվ տեր Օբերտոյի և իրեն՝ Ֆրանցիսկոյի հետ: Զէ որ հիշյալ նամակներն ու լիազորութիւններն ընդհա-

նուր են նրանց բոլորի համար և զուգընթացաբար նրանք լիազորված են և զրանք գրավոր ձևով տրված՝ ազնվափայլ վերին վարչության կողմից:

Եվ քանի որ որևէ հարմար ժամանակ ինքը՝ Ֆրանցիսկոն, ներողություն կխնդրի կամ կկարողանա ներողություն խնդրել ամենուր և վերին ատյանի առջև, կոչ է անում ազնվափայլ տեր հյուպատոսին, որպեսզի նա ցանկություն հայտնի մասարների հետ փոխադարձաբար խորհրդակցելու հենց այդ գործերի շուրջը, որպեսզի որևէ արդարամիտ վերջ ու սահման տրվի այդ գործերին՝ արդարադատության, խաղաղության ու անգործի հետ միասին այս քաղաքի և հայ ժողովրդի համար, որոնք այդքան վնասի են ենթարկվում այս վեճերի ընթացքում՝ բոլոր բնակիչների հետ միասին: Այս վիճակից հետագայում կարող են ավելի լուրջ երկպառակություններ առաջանալ անկում ապրող այս նշանավոր քաղաքում:

Ինչպես վերևում, քաղվածքը հանված է հասարակական ակտերից և այլն:

Նոտարիոս Դոմինիկոս դե Ալսարիո:

«Atti», VII, II, 12 339—344:

71. Օբերտո Սկվարչիաֆիկոն և Ֆրանչեսկո Ֆիեսկին,
Կաֆայի մատարները, գանգատվում են խնամատարներին*
և հյուպատոս Անտոնիո Կարելային մեղադրում կաշառակերության
մեջ՝ Կաֆայում վեճի առարկա դարձած դեռատի հայ աղջկա
և հայ եպիսկոպոսի գործով

Կաֆա, 1475 թ., 18 հունվարի

Ազնվափայլ և հզոր մեր ամենահարգարժան տերեր.

Ձեր նամակում՝ ուղղված հյուպատոսին և մեզ, մասարներիս, գրված անցյալ տարվա մայիսի 24-ին, Ձեր

* Զենավայի Սր. Գեորգի բանկի կառավարիչներին:

ազնվափայլությունները հյուպատոսի և մեր ուշադրությունն են հրավիրում եպիսկոպոսության և այդ հայ ազգիկա ամուսնության գործերի վրա: Որովհետև այդ գործերը շատ են զբաղեցնում հայ ժողովրդին և ամբողջ այդ քաղաքին, Ձեր իշխանություններին այդ գործերի մասին պետք է լիակատար տեղեկանք տրվի: Եվ ուստի, շտաբերելով այդ գործերի հետագա պարագաները, բայց միայն գրում ենք այս նամակը Ձեր իշխանություններին, որպեսզի նրանք հասկանան, որ հյուպատոսը մեզ մասնակից չի դարձրիլ այդ վեճերի լուծման ուղղությամբ իր ձեռք առած անհրաժեշտ միջոցառումներին, ինչպես որ նա պետք է աներ, եթե ցանկանար, ինչպես պարտավոր է պահպանել Ձեր հանձնարարությունները: Քանի որ Ձեր նամակը ընդհանուր է [ուղղված] միաժամանակ և նրան (հյուպատոսին — Վ. Մ.) և մեզ, այլ բան չենք ցանկանում, քան թե վեճերն ու տարաձայնությունները խաղաղեցվեն, որոնք այս գործերի պատճառով տիրում են ժողովուրդների մեջ և որոնք ամենամեծ վնասն են պատճառում մեզ և ամբողջ այս քաղաքին...

Մեզ բավական օգուտ տվեց մեր բողոքը՝ իրեն, հյուպատոսին, Ձեր նամակի և Ձեր հանձնարարությունները չկատարելու վերաբերյալ, այնպես, ինչպես այդ երևում է կուրիայի արձանագրություններից: Այս արձանագրությունները Ձեզ արդեն վաղուց ներփակ ուղարկված կլինեին, ինչպես այդ կատարում ենք այժմ, եթե ինքը՝ հյուպատոսը, կուրիայի գրագիրներին և քարտուղարներին չարգելեր ամենաժանր պատիժներ սպառնալով, որ նրանք արձանագրություն չկազմեն՝ ուղղված որևէ ատյանի, առանց իր թույլտվության:

186 Հետևաբար, որոշեցինք Ձեր ուշադրությունը հրավիրել վերոհիշյալի վրա, որպեսզի || Ձեր ազնվափայլությունները իմանան, որ մենք ոչ մի բանում չենք թերացել մեր պաշտոնի մեջ՝ մեր պարտականությունների

կատարման ասպարեզում, որպեսզի առաջիկայում այն-
պիսի միջոցառումներ առաջարկվեն նման վեճերում,
որոնք Ձեր պատվին և Ձեզ ծառայողների ազնվությունը
հատուկ լուծում գործադրեն, այնպիսի մի լուծում, որը
լույս աշխարհ բերի կաշառակերների այդքան մեծ անա-
մոթությունը, որպեսզի անազնիվների պատճառով Ձեր
ազնիվ ծառայողները անազնիվ դուրս չբերվեն: Եվ եթե
նման կաշառակերներին հայտնաբերելիս այդպիսի լու-
ծում չտրվեր, ակնհայտորեն կերևար, որ Ձեր իշխանու-
թյունները նեցուկ են նման հանցագործներին:

Եվ քանի որ ոչ առանց մեծ շրջահայեցողյան հոռ-
մեական գրասենյակի, ապա և Ձեր իշխանությունների
կողմից շրջահայացորեն արգելվել է, որ հյուպատոս-
ները և Կաֆայի պաշտոնյաները միջամտեն եկեղեցա-
կան և նաև հայ մեծամեծների գործերին, բացի այն
դեպքերից, երբ անհրաժեշտ է պաշտպանել նրանց
պատրիարքի իրավունքները, որոնք այս բնազավառում
ոտնահարվում են, որովհետև պաշտպանվում է միայն
այն եպիսկոպոսը, որը հիշյալ պատրիարքի կողմից
մերժվել է, և այն եպիսկոպոսը, որը նշանակված է նրա
(պատրիարքի — Վ. Մ.) կողմից, հեռացվել է Ձեր տեր
հյուպատոսի կողմից այս մեր քաղաքից: Դուք այդքան
կամենում եք, որպեսզի այս բնազավը լինի արդարու-
թյան տաճար:

Հետևապես, ամենապարզ ձևով երևում և այս քա-
ղաքի բնակիչների մեջ այդ ասվում է բոլորի կողմից,
որ սրանք կատարվել են փողի և կաշառքի ուժով, և
նույնիսկ խոշոր կաշառքների միջոցով, քանի որ այս
եպիսկոպոսը, հորջորջված Պանջիաջևի, նման կաշառա-
կերություններ իր աթոռի վրա պահվում է այս հյուպա-
տոսի կողմից առանց մեզ և այլոց մասնակցության, և
ընտրված մյուս եպիսկոպոսը այսպիսի աղաղակող
(անարդարություններ — Վ. Մ.) մնում է վտարված, որը
բնիկ այս քաղաքից է: Ուստի պետք է նախազգուշական
միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի նման կաշառակերու-

թյան դեպքում կաշառակերները չփառաբանվեն իրենց հանցանքներում և որպեսզի աշխարհն իշխանավոր քաղաքում ցուցադրվի Ձեր կամքը՝ չհանդուրժելու նման [հանցագործություններ], ընդհակառակը, այն ամենը, ինչ որ անաղարտ է և անկեղծ, արդարություն հետ անհետանում է:

Ուստի թախանձագին խնդրում ենք սիրելի Ձեր իշխանություններից, որպեսզի Ձեր և մեր պատվի համար, վերոհիշյալի քննությանմ առաջարկեք Ձեր լուծումը: Մենք մեր բոլոր հնարավորությունները տրամադրում ենք Ձեր այդ որոշմանը և պատրաստ ենք կատարելու Ձեր յուրաքանչյուր հանձնարարականը:

Տրված է Կաֆայում 1475 թ. հունվարի 18-ին:

Փետրվարի 14

Կնքված վերոհիշյալ թվականով: Հետագայում ոչ այլ ինչ է հետապնդված, բացի Ձեր իշխանություններին արժանի տեղեկությունից:

Բարեպաշտ հարգողներ՝

Օրերտոս Սկվարչիաֆիկո և Ֆրանցիսկո դե Ֆլիսկո պրովիդորներ և մասարներ, խոնարհ հանձնարարությամբ:

«Atti», VII, II, էջ 185—186:

72. Հյուպատոս Անտոնիո Կաբելայի նամակը Սբ. Գևորգ քանկի խնամատարներին հայ եպիսկոպոսի արժողի շուրջը ծագած վեճի մասին:

Կաֆա, 1475 թ., 12 փետրվարի

(Քաղվածաբար)

163 ...Ապրում եմ այն համոզմամբ, որ ձեր սլայծառափայլությունները այստեղից արդեն շատ լուրեր են ստացել հայ եպիսկոպոսի վերաբերյալ, որի մասին

- դուր, հավանաբար, լիովին տեղյակ եք: Այստեղ ես լրացնում եմ այդ տեղեկությունները և կարծում եմ, որ ինձանից լիովին դու՛հ կմնաք:

164 Ահա օրերս մեզ մոտ ժամանեցին երկու պատվիրակներ ուղղակի հյուպատոսին հասցեած պատրիարքի նամակով, որը (պատրիարքը — Վ. Մ.) ինձ տեղեկացնում է այն մասին, թե՛ իմանալով եպիսկոպոս Դերոնանեսի (Տեր-Հովհաննեսի — Վ. Մ.) ազգանվամբ Պանջիաջերի մասին, որ նա կաշառքների միջոցով և բռնի ուժով իր մրցակցի Դերկարաբետի (Տեր-Կարապետի — Վ. Մ.) կողմից հեռացված է, նա (պատրիարքը — Վ. Մ.) խնդրում է Կաֆաջի բաղաբացիական իշխանությունը օգնել նրան ընդդեմ աթոռի հեռացնելու այդ ինքնակոչին և նրա տեղը վերադարձնելու նախկին ընտրվածին: Այդ պատճառով բաղաբում տեղի ունեցավ մեծ խմորում և տարածայնություն, որոնք հանգեցրին բախման նույնիսկ եկեղեցու մեջ, ուր հավաքվել էին երկու կուսակցությունները, մինչև 300 հոգի, որոնք պատրաստ էին կռվի մեջ մտնելու: Ես անմիջապես այնտեղ ուղարկեցի իմ ձիավորին, որպեսզի դադարեցնեն հուզումը և ինձ մոտ բերեն երկու կողմերից վեց առաջնորդ-ազիտատորների, որոնց ստիպեցի վճարել 2000 սոմ մոտ գանդ: Հրդեհը մարելու համար դրամն ավելի ղորեղ միջոց է, քան թե ջուրը: Բայց էլ ավելի մեծ անկարգություններ զրգռելու համար մեջտեղ եկավ Կաշարեսի վնասակար ձեռքը իր ընկեր նիկոլո Տորիլիայի հետ միասին, որը Դերկարաբետի (Տեր-Կարապետի — Վ. Մ.) օգնականն ու բարեկամն է. սրանք բոլորին հետամտում են սպառնալիքներով, բողոքներով ու թրջթերով՝ ի պաշտպանություն իրենց հովանավորչալի:

Սակայն պատահեց այնպես, որ այն պատրիարքը, որը նվիրակներին տվել էր այդ կարգադրությունը, մահացավ, իսկ նրա օգնականը հրամայեց եպիսկոպոս հաստատել Դերկարաբետին: Իսկ ես, նկատի ունենալով

այդպիսի հանգամանքները, տատանվելով դրանցից որևէ մեկին հանաչել լեզալ կերպով ընտրված և երկյուղ կրելով այն բանից, որ Կայարեսի և նրա ընկերների նենգության հետևանքով ներկա պատրիարքը կարող է կաշառված և խաբված լինել, քանի որ փոթորիկը կարող է ալվելի ու ալվելի մուկեգնել, որովհետև ժողովրդի մեծամասնությունը Դերոնանեսի (Տեր-Հովհաննեսի — Վ. Մ.) կողմն է և որ հարուստների ու անհանգիստների ընդամենը ինչ-որ մի խմբակ է պաշտպանում երկրորդին, սրտամոտ ընդունելով խիստ հանդիմանաբները, որոնք արվել էին ձեր կողմից իմ նախորդներ Լերկարիին և Ջուստինիանիին այն բանի համար, որ նրանք միջամտել են այդ վեճին, որոշեցի ոչ մի ձևով չխառնվել այդ գործին, սպասելով ձեր կարծիքին և խորհրդին։ Այդ պատճառով դատարանում (վեճի քննարկման ժամանակ — Վ. Մ.) ես արժանացա Կայարեսի հորդորով ուղարկված մարդկանց և այլոց, հավասարապես նաև իմ պաշտոնակից մասարների ատելությանը, որոնք ցանկանում էին այդ կախարդված գործը լուծել թմբկահարությունը։ Ինձ արվեց զազրելի առաջարկություն վերցնելու 200 ոսկի չերվոնեց, որից ես արհամարհանքով հրեա շուռ տվի։ Այդ գործը կազմակերպել էին Կայարեսն ու Նիկոլո Տորիլիան։ Լիահույս եմ, որ կդա օրը, երբ այդ գործողությունները ձեր կողմից կպատժվեն։ Նիկոլոն այլևս չպիտի մնա այս քաղաքում, որովհետև նա վնասակար մարդ է։

Այս բոլորից բացի, իմ դժբախտությունն այն է, որ ես մնում եմ մենակ առանց օգնականի։ Զիշտ է, Ֆրանչեսկո Պաստինեն փոխարինում է նրան, բայց այս վերջինին հավակնորդների մի կուսակցությունը, մասամբ նաև ես, շնք վատահում։ Երբ ես խոսում եմ նրա հետ որևէ գործի մասին, նա ինձ պատասխանում է շատ սառը։ || Այստեղից եզրակացնում եմ, որ նա ձգձգում է որոշումը։ Պատրիարքի ուղարկած երկու պատվիրակնե-

165

քից մեկի՝ կոշումով եպիսկոպոսի և նրանց միջից առավել հարգվածի, կարծիքն այն է, որ նա խոստովանեց ինձ, որ եթե պատրիարքը լիակատար տեղեկություններ ունենար ժողովրդի մեծամասնության ցանկության մասին, նա, հավանաբար, կհրամայեր իր պատվիրակներին չպաշտպանել Դերկարաբետի կուսակցությանը: Այժմ այդ պատվիրակը հեռացել է այստեղից, իսկ Կալարեսի խումբը գաղտնի կերպով լուր է տարածում, որ նա հեռացել է թույլ տալով իրեն համոզել, այսինքն՝ ինձ հետ համաձայնված: Աստված վկա նման կեղտը աղտոտում է իմ ձեռքերը և խեղդում իմ հոգին: Եթե ես պետք է դրամ վաստակեմ, ապա աստծո ողորմածությամբ ուզում եմ, որ դա լինի արդարացի, բայց պատվազրկել ինձ ձեր առաջ՝ աստված միաբանացի... Բայց, մյուս կողմից, ինչպե՞ս զսպել շար լեզուները:

Ահա շուտով կգա նոր տեղապահը և ես նրա հետ կխորհրդակցեմ, թե օրենքով ինչպես ես վարվեմ Տորիլիայի հետ: Եթե ես ստիպված լինեմ նրան ձերբակալել և ուղարկել Զենովա, քանի որ ես նրան վնասակար եմ համարում այս քաղաքի համար, ապա թող Քրիստոսը ինձ ների, եթե ես դա անեմ ատելությունից կամ շարությունից: Ես այդ ասում եմ ամբողջ ժողովրդի և ամբողջ ժողովրդի բարօրության համար: Նա մի այնպիսի սովիստ է, որ շեղած տեղից էլ ճարում է վեճի շարժառիթ և դիտավորյալ կերպով ձգձգում է գործերը: Հայ եպիսկոպոսի և մյուս, առևանգված [հայ] աղջկա հարցում նրան խոստացել են 400 կաֆայական սոմա կամ նույնիսկ 1000 շերվոնեց, եթե նա շահի գործը: Ահա թե ինչու է նա դիմում ամեն տեսակի խորամանկությունների, որպեսզի ժամանակ շահի, քանի դեռ ես չեմ հեռանում պաշտոնից, համոզված լինելով, որ այն ժամանակ (երբ հյուպատոսը չի լինի Կաբելան — Վ. Մ.) նա կանի այնպես, ինչպես իրեն հարմար է: Աղջկա հարցը գտնվում է նախկին վիճակում, որովհետև մեզ զրազեցնում են

ավելի կարեւոր խնդիրներ՝ Կամպանիայի դրութեան գործերը և պարենի հոգսերը: Առայժմ, խմբիչիայլոց,՝ այս վերջին հարցերը մասամբ լուծված են:

166 ...Դուք արդեն գիտեք, որ Մամակի մահից հետո, Զիոֆրեդո Լերկարիի հյուպատոսութեան ժամանակ, Մենզլի-Գիրեյ¹¹⁰ խանի և մեր քաղաքի շատ բնակիչների ու քաղաքացիների, հավատարմուհիս նաև իմ ու Զուստինիանիի, այն ժամանակ մասարների, հավանութեամբ Կամպանիայի կուսակալ նշանակվեց էմինեկը: Այդ պաշտոնը նրան հանձնվեց մեր բոլորի այն համոզմամբ, որ նա իր ջանքերը կդնի ամբողջ Ս մարզի բարօրութեան համար: Իսկն ասած խանը բավականին կասկած ունեւր նրա հանդեպ և նրան համարում էր անհուսալի, և նրա կռահումները գործով հաստատվեցին: Այսպես, իր նշանակման առաջին իսկ օրից էմինեկը սկսեց ձանձրացնել խանին և մեզ մշտական խնդրանքներով: Նա խանի եղբայրներից մեկին շնորհազրկեց, կազմակերպեց և ղեկավարեց զայրացուցիչ ասպատակութեանը դեպի Լեհաստան, ոսկից քշվեցին-բերվեցին 15,000 զերիներ, որոնց մի մասը վաճառեց, իսկ մյուսը՝ պահում էր իբրև ստրուկներ, արգելեց պարենի ներմուծումը Կաֆա, որով և մեզ հասցրեց սովի, լուրեր տարածելով, թե դրանում մեղավորը խանն է, որն իբր թե մեզ թշնամաբար է վերաբերվում: Որպեսզի ցրենք նման կեղծիքը, մենք հրավիրեցինք խանին Կաֆա մեզ հետ անցկացնելու մի քանի օր: Նա համաձայնվեց դրան և այստեղ եկավ էմինեկի հետ միասին:

Մենք օգտվեցինք այդ ժամանումից, որպեսզի զաղտնի կերպով հարցնենք Մենզլի-Գիրեյին, թե ինչպիսի դիրք մենք բռնենք էմինեկի հանդեպ: Մեզ լուր է հասել, որ էմինեկը իր վատահիւսներին ուղարկել է Կոստանդնուպոլիս սուլթանի մոտ և դավաճանութեան է պատրաստում: Մենք արդեն տեղեկութեան ունենիք թուրքական մեծ նավատորմի ճախապատրաստութեան

վերաբերյալ, բայց ջանացինք խանից թաքցնել այդ տեղեկությունները, որպեսզի նրան չանհանգստացնենք, և համոզեցինք Մենզլի-Գիրեյին պաշտոնազրկելու էմինեկին, որպես մի մարդու, որը ընդամաքար է վերաբերվում նրա իշխանության հանդեպ: Թաթարական մեծ Հորդայից Սալթախին կանչելով Կաֆա, մենք նրան ընտրեցինք Կամպանիայի կուսակալ, էմինեկի փոխարեն: (էմինեկը — Վ. Մ.) փախավ Զիխա¹¹¹ կամ Տանա¹¹², բայց մենք նրա դեմ ձեռք առանք նախազգուշական միջոցներ:

167 || ...Խնդրում եմ չզարմանալ, եթե շեմ գրում մասար Սկվարչիաֆիկոյի ընկերակցությանը, բանի որ հայ եպիսկոպոսների հարցում մեր կարծիքները տարբեր են: Նրան ցանկալի է համաձայնվել Կայարեսի հետ և աթոռին նստեցնել նրա սիրելիին, իսկ ես ուզում եմ սպասել ձեր վճռին: Չգիտեմ, թե նա ինչ շահ ունի այդպես վարվելու, բայց ենթադրում եմ, որ նա ցանկանում է գոհացնել Սիստո Չենտուրիոնեին և Զիպրիանո Վիվալդիին՝ Կայարեսի մերձավոր ընկերներին: Հետագայում կգա օրը, երբ դուք կիմանաք այս խառնաշփոթության էությունը և այնժամ կկարողանաք զլուխ հանել, թե մեր երկուսից ո՞վ էր ընտրել լավագույն ուղին: Ավարտն է պսակում գործը...

«ИТВАК», № 55, № 163—166, հմտ. «Atti» VII, II, № 197—204:

73. Դրամատուսն վարիչը և պաշտոնատար անձինք Կաֆաշում միասնաբար ներկայացնում են խնամատարներին նյութական և քարոչական այն ծանր հետևանքները, որոնք առաջացել ու առաջացնում են քաղաքում միմյանց հետ մրցող երկու հայ եպիսկոպոսների տակավին չլուծված վեճի պատճառով:

Կաֆա, 1475 թ. ապրիլի վեճը

344 ...Ազնվափայլ ամենազոր մեր տերեր: Մտածում ենք այս նամակը հանձնել Ձերդ իշխանություններին մի

որոշ ձևով, որովհետև հայոց եպիսկոպոսության հայտնի հարցը, որպես մեծագույն անպատվություն Ձեր պաշտոնյաների և այս քաղաքի, այսքան երկնար ժամանակ ձգձգվում է և դրան վերջ չի տրվում: Եպիսկոպոսության այդ հարցի վերաբերյալ երևան են հանվել պատգամավորների նամակներ, որոնք նշանակված եպիսկոպոս են հայտարարել Պանջիաշերին, որը այդպես նշանակված լինելով հանդերձ մնում է իր աթոռին: Հայտնի է, որ բոլոր այդ արարքները կատարվել են փողի և կաշառքների ուժով: Այդ պատճառով ոչ առանց հիմքի ամբողջ այս քաղաքում հասարակայնորեն վատ համբավ են ձևեր բերում Ձեր հյուպատոսները. եթե նրանք այս գործում ցանկացած լինեին ղեկավարվել արգարամտությամբ... (վեճը), հիրավի, ի հանդարտեցված կլինեիր, և այլևս չէին լինի երկպառակություններ առաջացնող բոլոր կռիվները: Հետևաբար, աստված վկա է, թե ինչպիսի ստորություններ են կատարվել և շարունակում են կատարվել, թե այդ ստորությունը ինչպես է աճում Ձեր պաշտոնյաների շրջանում, հասարակական ու անձնական կյանքում, Ձերդ իշխանությունները արդեն կարողացել են հասկանալ բազմաթիվ անձանց նամակներից ու հաղորդումներից: Եվ հարկ է, որ Դուք այս բոլորը չպետք է համարեք այլ բան, քան կատարված դրամատվություն և կաշառքների միջոցով, քանի որ Ձեր հյուպատոսներին չի պատկանում [իրավունք] խառնվելու հայերի եկեղեցական գործերին, ինչպես այդ հին օրենքներում ու կանոնադրություններում պաշտոնապես որոշվել է:

Հետևաբար, մեր կամքին հակառակ, մենք տեղեկացնում ենք այդ մասին Ձերդ իշխանություններին, այն նպատակով, որպեսզի նրանք հոգ տանեն այդքան հսկայական նշանակություն ունեցող գործերի մասին, որպեսզի երկպառակություններ հարուցանող սկանդալներ չծագեն Ձեր այս քաղաքում, որոնք հետագայում այնքան էլ

հեշտ չի լինի խաղաղեցնել: Որովհետև Դուք ունեք հայ ժողովուրդ, որը այս բաղաբի բնակիչների երկու երրորդ մասն է կազմում, ժողովուրդ, որը ամեն ինչով ամենա-
 ևրախտագետն է և ամենահնազանդը Ձեր իրավակարգի հանդեպ: Նրանք (հայերը — Վ. Մ.) այնքան են կեղեքվել կաշառակերների կողմից, որ բացեիքաց ասում են, թե այս լատիները, մեր հյուպատոսները, մեզ և մեր գույքը կողոպտում են: Հետևաբար, ազնվափայլ տյարք, հայցում և թախանձագին խնդրում ենք այգուլիսի երկ-
 պառակույթյուններ առաջացնող խայտառակ դեպքերին վերջ տալու համար Ձերդ իշխանությունները այնպիսի նախնական միջոցներ կիրառեն, որ նման հսկայական կաշառակերությունները հայտնաբերվեն ու երևան հան-
 վեն դրամաշորթները և պատժվեն այնպես, որ դա հա-
 մապատասխանի Ձեր ասածին, որ Դուք ցանկանում եք, որպեսզի Կաֆան լինի արդարության և ազնվության տա-
 ճար: Ձերդ իշխանություններին մենք մեզ հանձնարա-
 րում ենք և պատրաստակամություն հայտնում կատա-
 րելու Ձեր հանձնարարությունները:

Տրված է Կաֆայում 1475 թ. (օրը պակասում է)*

Աստծո կամքով

բարեպաշտներ՝ Կիպրիանո դե Վիվալդի առաջին,
 Նիկոլաուս դե Տուրիլիա,
 Հուլիանոս դե Ֆլիսկո

Կաֆայի դրամատան պաշտոնատար անձինք,
 խոնարհ հանձնարարությամբ:

«Atti», VII, II, էջ 344—345:

* Արտարին շապիկի վրա գրված է. Կաֆայի դրամատան վարչության նամակը եպիսկոպոսության դործի մասին, առանց օրվա նշումի, ստացված 12 մայիսի [14] 75 — թվ.:

74. Հրաման Ձեռնվայից Կաֆայի հյուպատոսին՝ հայ
եպիսկոպոս ընտրելու վերաբերյալ¹¹³:

Ձեռնվա, 1475 թ., մայիս

Այն դեպքում, եթե ներկա գրությունը ստանալիս
վերոհիշյալ գործը մնացած լինի իր նախկին անլուծելի
աստիճանում, ապա երեք օրվա ընթացքում, այս հրա-
մանը ստանալու օրից հաշված, ժողովեցեք բոլոր բարձ-
րաստիճանավորներին, եկեղեցիների գլխավորներին և
հայերի ավագներին, որոնք ապրում են Կաֆայում, հա-
վասարապես նաև մեկական ներկայացուցիչ ամեն մի
ծիսական համայնքից, և նրանց հայտնեք, որպեսզի ձեր
ներկայությամբ նրանք տեղնուտեղը ձայների մեծամաս-
նությամբ իրենց համար ընտրեն երրորդ եպիսկոպոսին,
որը ծննդյամբ լինի կաֆացի, բացառելով երկու հա-
վակնորդներին, և, այսպիսով, ուղարկեցեք նրան ճա-
նաչվելու և հաստատվելու իբրև միակ և օրինական
հոգևորականի: Պատրիարքին գրեցեք, թե ձեր գործը
այդ ուղիով է լուծվել մեր հրամանով, և լատին եպիս-
կոպոսի օգնությամբ ջանացեք, որպեսզի ձեր ժողովրդի
հավատի ու հանգստության բարօրության համար նա
վավերացնի և հաստատի այդ ընտրությունը:

«ИТҮАК», № 55, էջ 169, հմտ. «Аlti» VII, II, էջ 149:

75. Ալբա-Յուլիա¹¹⁴ քաղաքի եկեղեցու ավագերեց, պապական
ներկայացուցիչ Դոմինիկի հաղորդումը¹¹⁵ թուրքերի կողմից
1475 թ. Կաֆան գրավելու մասին՝ ուղղված հունգարական
թագավորի դեսպանորդին:

Ալբա-Յուլիա, 1475 թ., (ամառ)

6 Ձեզ, գերազնիվ գեսպանորդիդ, ցանկալի է ինձնից
համառոտակի իմանալ, թե ինչպես Կաֆա քաղաքը, որ
մինչև այժմ պատկանում էր ջենովացիներին, զրավվել

է թուրքերի կողմից: Կատարելով ձեր ցանկությունը, կպատմեմ այն, ինչ լսել եմ հենց իրենից՝ Մուղավիայի վոյեվոդա Շտեֆանից¹¹⁶ նորին մեծության մեր թագավոր Մատվեյի¹¹⁷ կողմից նրա մոտ ուղարկված դեսպանության կազմում գտնվելու ժամանակ: Այս իշխանը (Շտեֆանը — Վ. Մ.), ազդված այդչափ հանկարծակի աղետից և սպառնացող վտանգի մեծությունից, որից հարկավոր էր երկյուղ կրել տեղի մոտիկության պատճառով, հրամայեց հանդամանորեն քննարկել այդ գործը, թե ինչպես է այն տեղի ունեցել, քանի որ, ինչպես ասում են հայրենակիցները, եթե նավարկվի համընթաց քամիով [Կաֆան] գտնվում է Մուղավիայից մեկ օրվա հեռավորության վրա, իսկ ցամաքով դնալու ժամանակ 4 կամ 5 օրվա ճանապարհ է: Այդքան մեծ դժբախտության պատճառը երկու ավագ թաթար իշխանների միջև եղած դժտությունն է¹¹⁸, որոնցից մեկը ցանկանալով իշխել || և հենվելով իր հպատակների օգնության վրա հայրենիքից արտաքսելով մյուսին, ստիպել է նրան ապրել Կաֆայում տարագրության մեջ: Իսկ նա տեսնելով, որ օրավուր սպառվում են թշնամուն բռնելու հույսերը, դիմեց խորամանկության և թուրքի մոտ դեսպանություն ուղարկեց, առաջարկելով կիսել ավարը, եթե նա ցանկանա օգնություն ցույց տալ բաղաբի զրավման ժամանակ, սակայն հատուկ պայմանագրում արտացոլված այն պայմանով, որ եթե հաջողվի բաղաբը զրավել, թաթարից կախված կլինի տիրանալ բաղաբին և թե նրանում գտած ավարին. իսկ թուրքը պետք է բավարարվի նրանով, ինչ որ նրան կզիջի թաթարը: Օգտվելով նախորդած դեպքից, թուրքն իսկույն ուղարկում է պատրաստի զորքով նավատորմիդ, Արևելքի փաշայի ղլխավորությամբ և հրամանատարությամբ: Թաթարը մտածելով, որ իրեն կզան օգնության, իսկույն հեթ ինքը ևս նույնպես իր զորքերը շարժեց բաղաբի վրա: Այսպիսով,

7

դժբախտ քաղաքը՝ ծովից ու ցամաքից շրջապատված, մասամբ իր քաղաքացիների դավաճանություն*, մասամբ զենքի ուժով ընկավ թուրքի իշխանության տակ՝ սկզբում բուն քաղաքի, իսկ հետո նրանում եղած բերդի գրավումից հետո: Տիրելով քաղաքին, թուրքը, իր հին սովորության համաձայն, խախտեց պայմանագիրը և, ամբողջ ավարը համարելով իրենը, թաթարին զրկեց զրավված քաղաքին և վերցված ավարին տիրելու իրավունքից: Չափահաս մարդիկ, որոնց միջոցներն ու խելքը առիթ էին տալիս երկչուղածության, որպեսզի նրա (թուրքի — Վ. Մ.) զեմ ոչինչ չձեռնարկեն, տեղափոխվեցին Կոստանդնուպոլիս, իսկ Կաֆայում թողնվել է միայն հասարակ ժողովուրդը, որի վրա || քաղաքը պաշտպանելու համար պետ է նշանակված ինչ-որ մի տրապիզոնցի հույն, 10 հազարանոց հետեակով:

Տարագրության մեջ ապրող թաթարը կալանավորվեց և զլխատվեց, իսկ նրա գլուխը, ցցի վրա ամրացված, երկու ոսկեզօծ դրոշակներով, որոնցից օգտվում էին քաղաքի [նախկին] կառավարողները, 500 աղջիկների և նույնքան էլ տղամարդկանց հետ միասին, որոնց այդ ավարի մեջ գեղեցկությանմբ և տարիքով համարել են նշանավոր, ուղարկել են նվեր թուրքին և, ինչպես հաղորդեց տեր հայր Նիկոլայ Տինեսկուն, որն այս տեղեկությունը ստացել էր Վալախիայի վոյեվոդից, որը այդ ժամանակ մեր իշխանի հրամանով եղել է այն վայրերում նման ղեսպանության հետ, այդ քաղաքի ավարից թուրքին են ուղարկել զրամով լիքը 1011 կաշվե պարկեր, չհաշված այլ ապրանքներ, թանկարժեք քարեր և թանկարժեք այլ իրեր. իսկ ամեն մի պարկը այդ ժողովուրդի մոտ սովորաբար պարունակում է 600 դուկատ: Ձերդ գերազանցությանը տեղեկացնելով այդ տեղերի դրության

* «Քաղաքացիների դավաճանություն» տակ պետք է հասկանալ կաֆաբնակ թաթարների լնամական դիրքը: Նրանք դրսի իրենց ազգակիցներին էին հայտնում պաշարված քաղաքի դադանիքները:

մասին, հայտնում եմ նաև, որ երկու իշխաններն էլ՝ ինչպես Մոլդավայի Շտեֆանը, հավասարապես նաև Վալախիայի Բոժորադը¹¹⁹, իմ և տեր հայր Տինսկուի միջնորդությամբ, ամբողջ երկրի հետ միասին հանդիսավոր երգում են տվել նորին կայսերական մեծությանը և նրա սուրբ թագին մշտապես հպատակվելու մասին¹²⁰ և անձամբ ու երկու երկրների ամբողջ ժողովրդով այժմ ղինվում են ծառայելու մեր թագավորին ընդդեմ թուրքի, և մենք չկասկածելով հավատում ենք, որ || թուրքի դեմ վերստին ձեռնարկվող ներկա արշավանքին երկու մարզերից կհավաքագրվեն 60 հազար ղինվորներ ծառայելու նորին մեծությանը: Ահա այն նորությունները, որոնք հաղորդում եմ համաձայն ձեր ցանկության:

«Заседание Одесского об-ва любителей истории » древностей», из протокола № 269, от 3 III, 1893 г. стр. 6—9.

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Կազարեցի կամ կազարիացի—այսինքն՝ Ղրիմեցի (տե՛ս ծնթ. 27)։

2. Գալերա—խոշոր առագաստաւ և թիւանաւ. ջննովացիները հիմնականում օգտւում էին երկու տիպի նավերից՝ գալերաներից և տարիզաներից (տե՛ս նաև ծնթ. 11)։ Ջննովական գալերան երեքկայմանի էր, որոնցից յուրաքանչյուրն ուներ երեք առագաստ։ Գալերան կարող էր վերցնել 265 հակ, այսինքն՝ 48 տոննա բնու։ Անհրաժեշտության պարագայում գալերան հեշտությամբ վերածում էին ռադմանաւի։

3. Կոնեստասիոն—հավանաբար Մոնկաստրո քաղաքն է (տե՛ս ծնթ. 74), որտեղից նշանակալից բանակությամբ ցորեն էր արտահանւում։ Անհավանական է, որ Կոնեստասիոնը զտնվեր Ղրիմում, որովհետև այս շրջանում հացահատիկի մշակումը լավարներին անծանոթ էր և թիսած հաց նրանք չէին գործածում։ Ուստի և Ղրիմում դժվար թէ արտահանման նպատակով ցորեն արտադրվեր, այն բերվում էր այլ վայրերից, որոնց ընդմէջ Մոնկաստրոյից։

4. Մոդի՝ շափի միավոր, հավասար էր 9 լիտրի։

5. Բարկա (barcha) — զետային, առհասարակ թեթև բեռնանաւ։

6. Ասպեր կամ ասպր—հունական դրամական միավոր։ Մեկ ասպրը հավասար էր երկու սուի կամ երեք կոպեկի (XIX դարի 60-ական թվականների արժեքով, տե՛ս ծնթ. 29)։

7. Կաֆա, Քեֆե, այժմ Բիւղոսիա։ XIV—XVIII դարերում Կաֆան Սև ծովի ամենանշանավոր նավահանգիստներից էր, առևտրական խոշոր կենտրոն։ XIII դարի երկրորդ կեսին բաղաբը, լավարների հետ կնքված պայմանագրով, անցնում է ջննովացիներին։ Ջննովայի հանրապետական իշխանությանը այն ենթարկվում էր մինչև 1453 թ., իսկ 1453—1475 թթ. կառավարութունը, ընկնելով ֆինանսական ծանր վիճակի մեջ, բաղաբը իրեն ենթակա Ղրիմի հարավ-արևելյան ծովափով և առհասարակ Սև և Ադովի ծովերի, ինչպես նաև մերձկուբանյան առևտրական կենտրոններով ղիջում է Ջենովայի Սուրբ Գևորգ բանկի կառավարչությանը (տե՛ս ծնթ. 30)։

8. XIII դարի վերջին բառորդից սկսած Կաֆայում գործում էր ջենովացիների հիմնած նոտարական ակտերի գրասենյակը. որտեղ վիաների ներկայությամբ իրավական ձևակերպում էին ստանում առևտրական և այլ կարգի գործարքները:

9. Հիպերպեր՝ ոսկե դրամ:

10. Պերա — Կ. Պոլսի արվարձաններից մեկը, որտեղ վարչական և դատական իշխանությունը պատկանում էր ջենովական պողեստային: Բյուզանդական կայսրության մեջ ապրող բոլոր ջենովացիները ենթարկվում էին նրան («Zeitschrift für Staatswissenschaft», Stuttgart, 1858, Heft 4. Վ. Հայդի հոդվածը):

11. Տարիդա — գալերայի (տե՛ս ծնթ. 2) նման տարիդան էլ ուներ և՛ ստագրատ, և՛ Բիեր: Տարիդան կարող էր վերցնել 300 մարդ և 30 ձի:

12. Բարիբաշ — հավանաբար, Բուրբերեն պարզգաթ (փայլուն) բառի ազավազված ձևն է, ինչպես որ զրիմահայերը արծաթյա դրամը հաճախ անվանում էին սպիտակ:

13. Սոլդաչական ասպր — Սոլդաչայում (տե՛ս ծնթ. 19) բաց թողնված դրամներ:

14. Սուր — նավահանգիստ միջնադարյան Սիրիայում, այժմ Լիբանանում:

15. Արգուն (կամ Արգուն) խան — հավանաբար Ոսկե Հորդայի կուսակալ ալն խաններից մեկն էր սա, որոնք նստում էին Ղրիմում մինչև Ղրիմի խանության ստեղծումը (1428 թ.):

16. Արադա կամ Արադիա — միջնադարյան աղբյուրներում նման անվանում էր տրվում ժամանակակից Արխադիային:

17. Սոլկատ, նաև Սուրդատ, Սուրխատ, էսկի Ղրիմ—այժմ Հին Ղրիմ բաղարը: Մի շարք հետազոտողներ (Ք. Քուչներյան, Սուրխաթյան, Ա. Լ. Յակոբսոն), գտնում են, որ Սուրխաթ անունը մերձակա լեռանը տրված հայերեն Սուրբ հաշ անվան՝ ջենովական ազավազված ձևն է: Ավելի ուշ դալով Ղրիմ, ջենովացիները (նշենք, որ բաղարին մերձակա էր հայկական Սուրբ խաչ վանքը) բաղարն անվանել են Սուր-Ղատ: Քուչներյանը նշում է, թե այն ժամանակ լատիներենում «շ» տառի բացակայության պատճառով ջենովացիները Surb—ghatch—ի փոխարեն արտաբերել են Surb—ghat, իսկ օրինակողները ղեղջել են նաև «ն» տառը և «Surb»-ը դառնել է «Sur», ուրեմն և Sur—ghat (տե՛ս Ք. Վ. Քուչներյան, Պատմություն գաղթականության երիմու հայոց, Ս. Ղազար, 1895, էջ 106—111):

18. Արենլյան ապրանքները եկամտի մեծ աղբյուր էին և Սուրխատում լավ սպառողներ էին գտնում: Վախենալով ի հակակշիռ Կաֆայի Սուրխատի առևտրական բարձրացումից, Կաֆայի ջենովական վարչությունը սահմանափակում էր առևտրականների գործունեությունը ալնտեղ, խախտողներին սպառնալով մեծամեծ տուգանքներով:

19. Թուղալա, Կաև Սուղղեա, Սուրոմ—ժամանակակից Սուղալին է, որը միջնադարյան Ղրիմի նշանավոր նաւահանգիստներից էր:

20. Քալիբատ — տե՛ս ծնթ. 12:

21. Երեմիա, նույնը Հերոնիմոս—պապական առաջին Եպիսկոպոսը Կաֆայում՝ նշանակված 1318 թ.: Մինչև 1818 թ. Կաֆան մտնում էր Պեկինի (պալինըն՝ Արևելքի) թեմի մեջ, թեև մինչ այդ էլ ուներ իր Եպիսկոպոսները. որոնցից առաջինը նշանակվել էր դեռ 1268 թ.: 1318 թ. բաղաբը դառնում է առանձին թեմի կենտրոն, թեմ, որ տարածվում էր Բուլղարիայից մինչև Սարայ, Սև ծովից մինչև ռուսական տերիտորիաները:

22. Ջենովայի, և Կաֆայի կառավարիչները թուրքական առաջացող վտանգին դեմ-հանդիման կարեոր նշանակություն էին տալիս զորմահայությանը և վերջինիս՝ ներկայացուցիչներին Ֆյոդենցիայի տիեզերածոզովին մասնակից դարձնելու խնդրին: Կաֆայի հյուպատոսը պապին հուշում է տիեզերածոզովին կաֆահայերից հատուկ պատվիրակություն հրավիրելու անհրաժեշտությունը: 1438 թ. ամռանը այդ նպատակով Կաֆա են ժամանում պապական նիկիական Ֆրանչիսկո Բուդիացի Կրտսերը, լյուդովիկոս վանականը և Ֆակոբո դը Պրիմատիցիսը: Սրանց և հյուպատոսի մասնակցությամբ գումարվում է Կաֆայի հայաց երեկինիի ժողովը, որը և ընդունում է «Հրամանադիր պատգամաւորաց հայոց» վճիռը՝ տիեզերածոզովին մասնակցելու վերաբերյալ (տե՛ս Վ. Ա. Միլայելյան, Ղրիմի հայկական դադուքի պատմություն, 1964, էջ 231—232):

23. Մադարիա — Կաֆայի հայոց Եպիսկոպոսը 1430—1440-ական թվականներին:

24. Պաուլոս Իմպերիալ — Կաֆայի հյուպատոսը 1438 թ.:

25. Եվդենիոս IV—Հոմի պապ, 1431—1447 թթ.:

26. Ռոմանական պաշտոնյաներ — Արևելքում, այն է՝ Ռոմանիայում (Բյուզանդական կայսրության մեջ), հաղարիայում (տե՛ս ծնթ. 27), Սիրիայում և եգիպտոսում կատարվող առևտուրը կարգավորելու և հսկելու նպատակով 1413 թ. Ջենովայում ստեղծվում է հատուկ հաստատություն՝ *Officiales provisionis Romaniae*-ն՝ Ռոմանական կոմիտեն: Նրա ծառայողների՝ Ռոմանական պաշտոնյաների, պարտականությունն էր բարելավել և կարգավորել այդ վայրերում կատարվող առևտուրն ու ծովացնացությունը, վերահսկել գոյություն ունեցող կանոնադրությունների և օրենքների կատարումը, արմատախիլ անել չարաշահումները («ЗООИД», т. V, стр. 816):

27. Խաղարիայի թագավորություն — XV դարի ջենովական փաստաթղթերում Ղրիմը հաճախ հորջորջվում է Կաղարիայի կամ Խաղարիայի անվան տակ: Դժվար չէ ենթադրել, որ այդ անվանումը առնչվում էր Երեմիի Խաղարական թագավորության (VIII—IX դդ.) անվան հետ: Խաղարիայի թագավորության տակ նկատի ունենալով այդպիսի Ղրիմի թագավորական իշխանությունը:

28. Կաֆայի հյուպատոս — Կաֆայի և Զենովայի սեծովյան առևտրական մյուս գաղթականների զլխավոր պաշտոնյան էր սա, որին ենթարկվում էին մյուս բոլոր պաշտոնյաները, այդ թվում նաև սեծովյան այլ նավահանգիստների ջենովական հյուպատոսները:

29. Սոնմ կամ սոմո — Զենովայի Սուրբ Գևորգ բանկի (որին սկսած 1453 թ. անցավ սեծովյան գաղթավայրերի տնօրինությունը), 1459 թ. որոշման համաձայն սոնմը հավասար էր 200 ասպրի (տե՛ս միթ. 6), իսկ երբեմն էլ, նայած դրամական կուրսին, 150 ասպրի: Կանաչեի հաշվումներով, XIX դարի կուրսով, ասպրը հավասար էր 2 սուի կամ 3 կոպեկի: Սոնմը արժաթի որոշակի բաշ էր, որն իր արժեքով հավասար էր 4,5—6 ուրլու: Սոնմ բառացի նշանակում է ծանրություն, արժաթի ծուլածո կտոր («ЗООИД», т. V, стр. 820):

30. Կաֆայում գործածվող դրամներ — փաստաթղթերում պահանջված տեղեկություններն ու Ղրիմում հայտնաբերված դրամները հավաստում են, որ Կաֆայում գործածության մեջ են գտնվել նաև կաֆայական դրամները: Դատելով 1290 և 1316 թթ. կանոնադրություններից, որոնք արգելում էին սեծովյան գաղթավայրերում դրամ կտրել, դժվար չէ պնդել, որ Կաֆայի դրամները, հավանաբար, հատվում էին Զենովայում և ապա առարվում Կաֆա: Սակայն 1453 թ., երբ սեծովյան գաղթավայրերն անցան Սուրբ Գևորգ բանկի իշխանության տակ, ըստ երևույթին, դրամ սկսել են կտրել նաև տեղում: Հայտնաբերված հավաքածուները վկայում են, որ այդ դրամները միաժամանակ կրել են թե՛ Զենովայի ու Կաֆայի և թե՛ թաթարների իշխանությունը զորոշող խորհրդանշաններ՝ ջենովական դարպասը, թաթարական տամգան, Սուրբ Գևորգի պատկերը և այլն («ЗООИД», т. V, стр. 819, 820):

31. Օրգուղիներ, նույնը արգուղիներ, նաև հորգուղիներ — Վ. Յուրգելիչի հիմնավոր ենթադրությամբ, օրգուղի (orguxli, arguxii) բառը ունի թուրքական ծագում և կապված է Ղրիմում կա՛մ պեչենեղների, կա՛մ էլ հունգարների տիրապետության հետ: Հունգարիայում հաստատված պեչենեղները լատինական աղբյուրներում կոչվում էին Euri, Evrii, որը ծագել է հունգարերեն or (պահակ) բառից: Հունգարական շրջաններից մեկի բնակիչները XIX դարում իրենց անվանում էին oer, իսկ իրենց ապրած շրջանն էլ՝ orsegi kerület — պահակների շրջան: Ղրիմում էլ, օրինակ, Պերեկոպը, որպես սահմանապահ բաղաբ, թաթարներն անվանում էին Օր: Օրգուղիներ էին կոչվում ոչ միայն Կաֆայի հյուպատոսի հեծյալ զվարդիան, այլև հեծյալ պահակազորն առհասարակ: Օրինակ՝ չորս օրգուղիներ, իրենց կապիտանի հրամանատարությամբ, կազմում էին արվարձանների դարպասների պահակախումբը («ЗООИД», т. V, стр. 824):

32. Խնամատարներ, լատիններն բնագրում protectores comprei-orum—lecorum — Զենովայում և նրա առևտրական գաղթավայրերում

գոյութիւն ունին պետական եկամուտների խնամատարներ, որոնք պետական պարտքերը մարելու նպատակով պարտավոր էին վերահսկել մասնավոր անձանց տրված պետական եկամուտները:

33. Ֆինանսական կառավարիչներ — տե՞ս ծնթ. 40:

34. Ավագների խորհուրդ — վեց ամիս ժամկետով շորս ջննդագիտներից և շորս կաֆացիներից ընտրված այս խորհուրդը վերահսկում էր հյուպատոսի և մյուս պաշտոնյաների գործունեությունը: Բոլոր կարևոր հարցերը վճռվում էին խորհրդի մասնակցությամբ:

35. Բացի հյուպատոսից և մասսարներից (տե՛ս ծնթ. 28 և 40), գաղութային վարչության գրեթե բոլոր պաշտոններում ջննդագիտների հետ միասին ժամանակի ընթացքում սկսում են տեղեր զբաղեցնել նաև կաֆացիները, ի թիվս որոնց՝ նաև հայերը: Խնդիրն այն է, որ XIV դարի կեսերին, գնալով սպառնալից դարձող Թուրքական առաջխաղացումը խստիվ վատթարացրել էր ջննդագիտների վիճակը Ղրիմում և առհասարակ Սև ծովում, և ստիպել նրանց հաշվի նստել տեղացիների հետ: 1475 թ. Կաֆայի հայերը հայտարարում են, թե «մինչև ե՛րբ պետք է այդ լատինները մեզ բարոյալքեն և մեր բարեկեցութիւնը վնասեն»: Անդրադառնալով Կաֆայի հայերի այս ըստ էության սպառնալիքին, Ղրիմի ջննդական գաղթավայրերի պատմության փաստաթղթերի հմուտ գիտակ և հրատարակիչ իտալացի գիտնական Ա. Վինյանսկյարականում է. «Արանց (իմա՝ հայերի — Վ. Մ.) կամքից էր կախված Կաֆան գրավել իրենց ձեռքը և այնտեղ դառնալ գրության տերեր» («Исторические записки», 1940, № 7, стр. 26):

36. Խնամատարության կոմիտե — այս գերատեսչությունը զբաղվում էր իրեն հասանելի հարկերի ու մարքսերի դանձմամբ՝ բաղադրի շինարարության, բարեկարգման և պաշտպանության վրա ծախսումների կատարելու համար: Նրան էր պատկանում, օրինակ, աղից ստացվող — մարսը: Խ. կոմիտեն ուներ նաև ոստիկանական իշխանության ֆունկցիա:

37. Գլխավոր սինդիկները իրականացնում էին դատական իշխանության ֆունկցիաներ ջննդական գաղութային բոլոր պաշտոնյաների նկատմամբ՝ բացի հյուպատոսից: Այսօրինակ իրավասությամբ նրանք հսկում էին պաշտոնյաները՝ գործունեությունը: Բացի գլխավոր սինդիկներից կային նաև հյուպատոսի սինդիկներ (տե՛ս ծնթ. 43):

38. Առևտրական կոմիտե կամ հաղարիայի առևտրական կոմիտե — շորսը ներքոյի պաշտոնյայից (երկու ջննդագիտ և երկու կաֆացի) բաղկացած այս կոմիտեն ուներ իր հատուկ կանոնադրությունը և գլխավորում էր առևտրական գործարքները, սակայն զուրկ էր դատական իշխանությունից:

39. Պաշտոնյաների ընտրությանը վերաբերող այս և հաջորդ մյուս հոդվածները պարզ գրանդովում է Կաֆայի ընդհանուր և մեջ դասային բաժանվածության առկայությունը, ռազմականների և ոչ-ռազմականների տարբերությունը՝ շարունակ պահպանելու անհրաժեշտությունը:

40. Մասարներ, ալսինըն՝ ֆինանսական ծառայողներ — սրանք երկուսն էին և ընտրվում էին միմիայն ջենովացիներից՝ յուրաքանչյուրը պաշտոնավարելով վեց ամիս: Գաղութային իշխանության պաշտոնական սանդուղքում մասսարները հյուպատոսից հետո գրավում էին երկրորդ տեղը: Նրանք տնօրինում էին ֆինանսները, զանաժառանգ, հանդիսանում էին հյուպատոսի անմիջական խորհրդականները:

41. Գանձատան խորհուրդ — գաղութային կառավարության սովորական և արտակարգ բոլոր ծախսումները կատարվում էին գանձատան միջոցով, անպայման նրա թույլտվությամբ:

42. Լատիններին տեքստում՝ pavisatae. հատուկ ծածկոց, որով վրագուրում էին նավը, որպեսզի դրսից նկատելի չլիներ, թե ինչ է նրա վրա կատարվում: Նույն պարբերության մեջ հանդիպող turris darsene-ն դա նավահանգստի ներքին մասում գտնվող աշտարակն էր, ուր տեղավորված էր լինում զինանոցը («ЗООИД», т. V, стр. 823).

43. Կաֆայի հյուպատոսի սինդիկներ — ի տարբերություն ղլխավոր սինդիկների՝ միայն Ջենովայի քաղաքացիներից ընտրված այս չորս սինդիկները պարտավոր էին ստուգել նախկին հյուպատոսի, նրա տեղապահի և մյուս ծառայողների գործունեությունը՝ նրանց լիազորությունների ավարտից հետո:

44. Cavalerio — բառացի նշանակում է հեծյալ: Բայց, դատելով նրա պարտականություններից, նա քաղաքի բերդի զինվորական և ոստիկանական պետն էր և ուներ իրեն ենթակա ծառայողներ:

45. Ժամը 2-ին, ալսինըն՝ երեկոյան ժամը 8-ին: Երեքից հետո, ալսինըն՝ ժամը 9-ին: Օրվա առաջին ժամը հաշվվում էր ժամը 6-ից:

46. Կաֆա քաղաքի զինվորական պետ (capitaneo burgorum) — սա բուն քաղաքի զինվորական և ոստիկանական պետն էր, հետևում էր քաղաքի անվտանգության կանոնների պահպանմանը: Բացի դրանից և cavalerio-ից (տե՛ս ծնթ. 44) կար նաև արվարձանների զինվորական և ոստիկանական պետ՝ centuriones antiburgorum.

47. Վիկենտի — լատիներեն բնադրում Viaisse, որը, Վ. Յուրգելիի կարծիքով, Vicentio-յի ազավազված ձևն է («ЗООИД», т. V, стр. 828).

48. Գերմանացի գիտնական Թունմանի վկայությամբ, թուրքական դուկատը կամ ալթինը 1769 թ. հավասար էր 22,5 թաթարական ղուռուշի, իսկ 7,5 ղուրուշը հավասար էր մեկ թուրքական պլաստրի: Քանի որ սկզբնապես թուրքական պլաստրը հավասար էր 46 արծաթյա կոպեկի, ապա այստեղից հետևում էր, որ թուրքական մեկ ղուկատը մոտավորապես հավասար էր 1 ուրլի 34 կոպեկի («ЗООИД», т. V, էջ 825—826):

49. Թեև 1290 և 1316 թթ. կանոնադրությունների համեմատությամբ

1449 թ. կանոնադրությունը, արտաբերին և ներքին քաղաքական հանգամանք-ներին ճնշման տակ, զաղուխային իշխանության օրդաններում ստիպված էր ջնհովացիների կողքին լայն տեղ տալ նաև կաֆացիներին, բայց այսուհան-դերձ, պատասխանատու և կարեւոր պաշտոնները, այդ թվում նաև քաղաքի գլխավորական պետի պաշտօնը, տեղացիների համար մնում էին անմատ-չելի:

50. Սիմոնզու հաշվումներով ֆլորինը ուներ 72 գրան ոսկու բաշ, այսինքն՝ հավասար էր 4,464 գրամ ոսկու կամ 3 ֆրանկ 2 սուի Պատկե-րացնելու համար, թե նյութական ինչ բովանդակություն ուներ ֆլորինը, բե-րենք 1449 թ. կանոնադրությամբ մի շարք ապրանքների զնացուցակը, ինչ-պես նաև նմուշներ ուճիկների մասին ասվելով (տե՛ս ծնթ. 6): Նշենք որ մեկ ասպրը հավասար էր 2 սալի: Այսպես, մեկ արտրը կաֆայում արժեք 6 ասպր, 1 սալ փայտը՝ 60 ասպր, չյուպատոսի հեծյալ փողհարը և երա-միշտներից յուրաքանչյուրը ամսական ստանում էին 200 ասպր, տնային հոգևորականը՝ 100 ասպր, նույնքան էլ ստանում էր ժամագործը, իսկ պա-հուկը՝ մոտ 50 ասպր և այլն: («300HД», т. V, стр. 702—711):

51. Սախար — նավատեսակ, տարբեր մեծության բարկա (տե՛ս ծնթ. 5): Գրանք, սովորաբար, միշտ բանի թիվը նալեր էին:

52. Լատիններեն բնագրում dictum պետք է լինի dietim, այսինքն՝ ցերե-կով, dies-ցերեկ Բուդից («300HД», т. V, стр. 826):

53. Լատիններեն բնագրում musarī—ձկան այս տեսակը իր անունը ստա-ցել է իտալերեն musa (ղուռչ, ռեխ, մուսթ, բերան) բառից: Վ. Յուրգելիչը իր ծանոթագրություններում ենթադրում է, որ, հավանաբար, այդպես էին կոչվում մանր ձկնաձկները՝ լայն բերան ունենալու պատճառով: («300HД», т. V, стр. 826):

54. Ստերլիզ — ձկան տեսակ, շուքա:

55. Stantalis, հավանաբար, ճիշտ է կարծում Վ. Յուրգելիչը, թե նման աշտարակ չի եղել, նրա ենթադրությամբ, դա Կոնստանտինի աշտարակի ազավազված ձևն է կամ ալեխի շուռ՝ turris stampace-ն է, այսինքն՝ արձա-նակիր աշտարակ, ինչպես կոչվում էր Կաֆայի դարպասներից մեկը: («300HД», т. V, стр. 826):

56. Վասալ, լատիններեն տեղատուժ barones — նկատի ունի թաթարական բաժնեկալվածային իշխաններին, որոնք կախվածության մեջ էին գտնվում Ռուկի Հորդայի խանից: Նրանց թվին էին պատկանում առանձին Հորդաների առաջնորդները, որոնք կոչվում էին բեգեր և բեյեր: Քաղաքական անախորժ հետախնդիրներից խուսափելու համար կանոնադրությունը արգելում էր պալ-մանադրային և առևտրական հարաբերությունների մեջ մտնել նրանց հետ, հարաբերություններ, որոնք ջնհովացիներին կպարտավորեցնեին որևէ բանում:

57. Այս արգելքը, Երևի, թելադրվում էր այն մենաշնորհ և արտոնյալ

վիճակով, որից օգտվում էին ջենովացիներն ու նրանց վաճառականները առևտրի մեջ: Այդ արտոնությունը, ըստ Լեոնույթին, ուներ նյութական լուրջ բովանդակություն, բանի որ 25—100 սոնմ տուլգանալով այն ժամանակվա համար բավական պատկառելի մի դոմար էր:

58. Կաֆայի ջենովացի հոգևոր, ինչպես նաև աշխարհիկ պետերի իրավունքները սահմանափակող այս և համանման մյուս կանոնները թելադրվում էին ոչ թե դեպի տեղի ալլադդինները հանրապետական կառավարության տաժառ «հոգատարություն», այլ արտաքին բազալական օրենսօրեն վատխառնող իրավիճակով, որը սպառնում էր վերջ գնել ջենովացիների տիրապետությանը Սե ծովում: Տեղացիներին պետք էր սիրաշահել, ալլապես սակավաթիվ ջենովացիները անցոր էին դիմադրավելու թուրք-թաթարական միասնական զորհին, էլ չենք խոսում բուն տեղացիների կողմից սպառնացող վտանգի մասին:

59. Ջենովացիներն օրոք մարդավաճառը ապստոքեն կատարվում էր Ղրիմում: Տվյալ դեպքում կանոնադրությունն արդելում էր միայն կաֆացիների վաճառելը, մի բան, որ անուղղակի ցույց է տալիս, թե ազատ կաֆացիներին էլ են վաճառել: Այդ պատճառով էլ, վախենալով տեղացիների ցասումից, ընդունվել էր այս օրենքը: Մինչդեռ Չեմբալոյում (Բալակլավայում) կանոնադրությունը նույնիսկ սպառնում էր հյուպատոսին հինգ սոնմ տուլգանել, եթե նա փորձեր արգելել վաճառականներին դնելու և վաճառելու ապրանքներ և մարդկանց («300HД», т. V, стр. 795—796).

60. Մարսահավար — լատիներեն բնագրում censarius, որը այն ժամանակ նշանակում էր մարսատան ստաիկան:

61. Կանխավճար — լատիներեն բնագրում denarius dei, այսինքն՝ աստծո զրոշ, կանխավճար, որը արվում էր գնորդի կողմից. այդպես էր կոչվում, որովհետև այն հանդիսանում էր եկեղեցու եկամուտը:

62. Ջենովացիները կանխուկ անվանում էին մոնղոլներին: Մարսահավարը, որ թաթարները կատարում էին Կաֆայում, կոչվում էր comerihium canluchorum. Վ. Յուրգենիշը ենթադրում է, թե, հավանաբար, կանխուկ նշանակում էր խանի հուպատակ, can (խան) բառից՝ ճիշտ այնպես, ինչպես՝ կաֆացիներին ջենովական որոշ ժամանակագիրներ անվանում էին caffaluchi, իսկ տվյալ դեպքում canluchi. (300HД, т. V, стр. 289).

63. Լատիներեն բնագրում comerihium — դա մարսատուրը էր, ներմուծող և արտածվող ապրանքներից:

64. Այսինքն՝ նրանք պետք է դիմեն Կաֆայի դատական ատյանին:

65. Կաղակ բառը ջենովացիները, հավանաբար, գործածել են ձխավոր իմաստով, որը մեկնում էր ավարառություն: Այս տեքստում կաղակ բառը վերաբերում է օրգոդիններին, որոնք հեծյալ զինվորներ էին: Այն չէր վերաբերում մյուս ավարառուներին, որոնք Կաֆայի բնակիչներից էին՝ homines Caffie («300HД, т. V, стр. 830»):

66. Հարյուրապետ-լատիներեն բնագրում՝ *centurio* կամ *caput centanarii*, ոստիկանական կրտսեր աստիճանավոր, որն, հավանաբար, ենթարկվում էր բաղադրի գինւորական պետին կամ կապիտանին: Հարյուրապետի հրամանատարութեան տակ գտնվում էին տասնապետեր և որոշակի քանակութեամբ զինւորային պահակներ:

67. Տուգուն — տեղապահ կամ կուսակալ իշխան: Սկզբում նրանց նշանակում էին Ոսկե Հորդայի իմաները իբրև կառավարիչ Կաֆայի շրջակայքում, ավելի էիջտ Կամպանիայի մարզում (տե՛ս ծնթ. 81) ապրող քաջարների վրա՝ նաև կարգավորելու համար նրանց հարաբերությունները ջննդագիտների և կաֆայցիների հետ: Հետագայում, Ղրիմի խանութեան ստեղծումից հետո (1428), այդ պաշտոնային նշանակում էին Գիրեյները:

68. Սուրբ Գևորգի բանակ — XV դարում Ջենովայում խոշոր բանկային միավորում, որի տնօրինութեանը 1453 թ. անցան սեծովեան զաղթավայրերը (տե՛ս ծնթ. 7, 30):

